


ԷԶՄԻԱԾԻՆ



ԺԲ
2000



Ձ/Ո/176




ԾԶ ՏԱՐԻ

ԼՋՄԻԱԾՆԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ
ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ

Դ Ե Լ Ր Ե Վ Բ Ե Ր
2000



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը	
Գևրաշնորհի Տ. Նուրիան եպիկոպոս Մանուկյանին արքայական պատիվ շնորհելու մասին	3
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը	
Սոս Սարգսյանին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու մասին	5
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը	
Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցին՝ տասնամյա հոբելյանի առիթով	7

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

Հիմնարկեքի արարողություն Մարմարաշեն գյուղում	9
Հոգեհանգստյան արարողություն դեկտեմբերի 7-ի երկրաշարժի գոհերի հիշատակին	10
Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Փարիզ	10
Հոգևոր և պետական այրերը քննարկեցին տոնակատարությունների կազմակերպման համարել ծրագրեր	11
Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակը	12
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Կաթողիկոսը Սոս Սարգսյանին հանձնեց Հայ Եկեղեցու «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանը	14
Գարեգին Բ Կաթողիկոս. «1700-ամյակը որպես դարձակետ ազգային և հոգևոր մեր կյանքի»	15
Կատարվեց Ս. Էջմիածնի Բագ Խորանի հիմնօրհնների արարողությունը	16
Շարականների ուսուցում Հայաստանի մարզերում և քաղաքներում	16

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

2000 թ. դեկտեմբերի 28-ին Գուգարաց թեմում օծվեց եկեղեցի և բացվեց առաջնորդարան	18
ՎԱՉԻԿ ՈՒՐԱՐԱԿԻՐ ԶԱՐԳԱՐՅԱՆ - Սևանի Վազգենյան հոգևոր Դպրանոցի տասնամյա հոբելյանը	20
ԱՐՏԱԿ ԴՊԻՐ ԽԱՉԻԿՅԱՆ - Սարկավագական ձեռնադրություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում	33
Ավարտաճառերի պաշտպանություն Գևորգյան հոգևոր ճեմարանում	40
Հաղորդագրություն	45

ԿՐՈՆԱԿԱՆ

Արիստակես արեղա Այվազյանի անդրանիկ քարոզը՝ խոսված Ս. Աստվածածին եկեղեցում	48
ՆԱՐԵԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՊԷՐՊԷՐԵԱՆ - Յիսուսի առաջին հրաշքի մեկնություն	52
ՀՐԱՆՏ ՍԱՐԿԱՎԱԳ ԿՈՍՏԱՆՅԱՆ - Ապաշխարություն	62

ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ

ԲԱՐԿԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ ՆԱՆՅԱՆ - Համառոտ պատմական ակնարկ «Filioque»-ի վարդապետության մասին	64
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՐԿԱՎԱԳ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ - Սարկավագությունը երեկ և այսօր	74

1700-ԱՄՅԱԿ

ՎԱՐՈՒԺԱՆ ՊԱՌԶՅԱՆ - Սուրբն ականջին ի՞նչ առաց	80
--	----

ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ

ԱՐՏԱԿ ԱՐՔԵՊԻՄԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ - Հայոց Հայրապետությունը եւ Կեսարիայի Արքեպիսկոպոսությունը	89
ՆԵՆՐԻԿ ԽԱՌԱՏՅԱՆ - 1863-1864 թթ. մի քանի անհայտ վավերագրեր Աղստևի հովտի վանքերի ավերակ վիճակի և հաղարծինը բաղեկարգելու Ս. Էջմիածնի գործնական ձեռնարկումների մասին	92


ՆԱՅԱԳԻՏԱԿԱՆ

ՆԵՐԻ-ԶՆԱԶ ՈՐՄԿԱՆՅԱՆ - Ներսես Շնորհալու «Լիպասանություն» պոեմը	101
70-ամյակ	115
Եկեղեցական բնմ. լուրեր	116
Նանգիստ Տ. Մամբրե վարդապետ Մարգարյանի	118
Ցանկ «Էջմիածին» ամսագրում 2000 թվականի ընթացքում տպագրված նյութերի	120
“Эчмиадзин” официальный журнал Эчмиадзинского Католикосата	142
“Etchmiadzin” official monthly of Holy Etchmiadzin	145
“Etchmiadzine” organe officiel du Saint-siège d’Etchmiadzine	148

ՀՐԱՄԱՆԱԲ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌԻ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՇ





**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԿՈՆԴԱԿԸ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՆՈՒՐՀԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎ
ՇՆՈՐՀԷԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՄԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱԼ ՍՊԱՍԱԴՈՐՆ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ,
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՆՈՒՐՀԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ,
ՈՐ ՅԵՐՈՒՍԱԼԷՄ**

Հանապազ գոհութիւն եւ փառք ենք մաքուցում, որ Ամննախնամ Բարձրնայի հովանաւորութեամբ եւ առաքլ ողորմութեամբ օրաուր ծաղկում ու բարգաւաճում է Հայաստանեայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին, եւ Մենք ուրախ աւիթ ենք ունենում արդար գնահատանքով բարձր շնորհի եւ Հայրապետական օրհնութեան արժանացնել Տիրոջ սեղանի նուիրեալ ու նախանձախնդիր սպասաւորներին:

Սիրելի Սրբազան. մէկ տարի առաջ, Պատրիարք Հօր խնդրանքով, Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Լուսարարապետի պաշտօնում ծառայութեան համար ձեռնադրեցինք Ձեզ նպիսկոպտս՝ քաջաւորեղեակ լինելով Ձեր անկեղծ սիրուն ու նուիրումին՝ հանդէպ Սուրբ Աթոռն ու Առաքելական մեր Մայր Եկեղեցին:

Ծանր ու անչափ պատասխանատու, բայց եւ քաղցր առաքելութիւն ունէք Դուք Ձեր ուսերին: Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց միաբանութեան բարի սպասումն է, որ

Դուք, նեցուկ դառնալով Սրբազան Պապրիարքին, քաջ եւ բարի հովուի յանձնառութեամբ եեւրամուր լինէք ծխաաբարողական կարգի անխառն իրականացմանը, միաբանական կեանքի կազմակերպմանը, նաեւ Երուսաղէմում Հայոց սրբավայրերի պահպանմանն ու պայծառացմանը:

Միրելի Սրբազան, Տէրունակոյի սրբավայրեր կապարած Մեր անդրանիկ այցելութեան ընթացքում հաճոյքով ականապես եղանք նոր կոչման մէջ արձանագրած Ձեր յաջողութիւններին: Բարձր գնահատելով անմնացորդ ծառայութեան Ձեր պատրաստակամութիւնը, Հայրապետական այսու Կոնդակով սիրով ընդառաջում ենք Երուսաղէմի Հայոց Պապրիարք, Ամենապատիւ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկեանի ազնիւ խնդրանքին եւ շնորհում Ձեզ

ԱՐԶՈՒԹԵԱՆ ՊԱՏԻԻ:

Աստուծոյ ենք, որ ունենալով Սրբազան Պապրիարքի Հայրական օրհնութիւնն ու եովանատրութիւնը եւ միաբանակից եղբայրների յամենայնի աջակցութիւնը, մշտապէս արդիւնաշատ ու ազգօգուտ ծառայութիւն էք մատուցելու Սուրբ Աթոռին եւ Առաքելական մեր Մայր Եկեղեցուն՝ շարունակելով Ձեր նախորդների բարի աւանդոյթները:

Ի խորոց սրբի աղօթում եւ մաղթում ենք, որ Բարին Աստուած օգնական ու աջակից լինի եւ Իր հանապազ օրհնութեամբ գորացնի Ձեզ բարձր ու պատասխանատու Ձեր կոչման մէջ՝ ի շինութիւն եւ ի պայծառութիւն Սրբոց Յակոբեանց Միաբանութեան:

Թող Տէրը անսասան պահի Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին, շէն ու բարգաւաճ՝ Երուսաղէմի Հայոց աւանդաշատ Պապրիարքութիւնը:

«Ողջ լըուք ի Տէր, գորացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւեր օրհնեալ ի Մենջ, ամէն»:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուա՛ւ Կոնդակս ի 18-ն Դեկտեմբերի
Յամի Տեառն 2000 եւ ի թուին հայոց ՌՆԽԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 33

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱԿԸ ՍՈՍ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ
«Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՄԻՐԵՅԵԱՆ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ԶԱԲԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԻԱՐ ՍՈՍ ՍԱՐԳՍԵԱՆ**

Արդարեւ, այր երանակ էք Դուք, սիրելի յոբելեար, որ երախտարժան Ձեր կեանքի 70-ամեան համազգային մեծարումով ու հանդիսութեամբ նշում է անկախացեալ մեր Հայրենիքում, եւ ինքնիշխան մեր պետութիւնն ու ժողովուրդն այսօր գնահատանքի, սիրոյ ու յարգանքի իր փութքն է մատուցում Ձեզ:

Յանուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գերագոյն Հոգեւոր Խորհրդի եւ միաբանութեան, բերկրանօջ սրբի ջերմօրէն շնորհատրում եւ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն եեք բերում Ձեզ՝ մեր ժողովրդի փառանդաշատ ու վաստակաւոր գաւակիդ:

Արժանատր մշակ հայ արուեստի.

Մտաւորականի բնատուր Ձեր կերպուածքով, շեշտուած ու խօստուն հայ նկարագրով Դուք հայ բեմարուեստի լաւագոյն դպրոցի ժառանգորդն ու շարունակողն էք: Տարիներ ի վեր Ձեր կերպած կերպարներով հայ բեմից ու էկրանից Դուք գրուցել էք հանդիսատեսի հետ, անարգել թափանցել նրա հոգու խորքերը եւ գերել Ձեր արուեստի անդիմադրելի գօրութեամբ: Ներշնչուն են Ձեր կապարտումները, չեն զգում խօսքի կամ շարժման պակաս, քանզի պերճախօս են Ձեր հայեացքը եւ փիլիսոփայական խոհականութեամբ հնչող Ձեր ձայնը, որ դաջուած են յուսադրոշմ կնիքով բազմափորձ մեր ժողովրդի: Մարդկային անկրկնելի ներաշխարհը վեր հանելու ինքնօրինակ կարողութեամբ Դուք հասել էք այն բարձունքին, ուր արուեստագէտը միայն ինքն է, բայց երբեք միայնակ չէ:

Միրելի յոբելեար. յիրաւի, սրբօրէն պաշայանած մեծ ու գնահատելի ժառանգութիւն ունէք աւանդելու սերունդներին: Այդ ժառանգութեան մէջ ամենանուիրականն ու թանկը հայրենասիրութիւնն է, որով Դուք հաւատարմօրէն ծառայում էք մեր ժողովրդին եւ նրա հարուստ ու հնամեայ մշակոյթին: Հայրենեաց անձնուրաց նոյն նուիրումով այսօր հայաշունչ Ձեր ոգին, արուեստագէտի բազմամեայ Ձեր փորձն ու կա-

րողությունը փոխանցում էք հայ թափրոնի եւ կինոյի երիտասարդ ջահակիրներին՝ հաւաքաւոր Ձեր հայեացքն ուղղած հայոց գալիքին:

Անխուց Նախապետ հայ բեմարուեստի. բարձր գնահատելով Ձեր բազմարդիւն վաստակը հայ մշակոյթի անդաստանից ներս. Ձեր կեանքի յոբելեանական տարե-դարձի առիթով հայրապետական այսու Մեր հոնդակով շնորհում ենք Ձեզ հայ Ա-ռաքելական մեր Մայր Եկեղեցու:

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատրույ շքանշանը:

Առ Բարին Աստուած Մեր աղօթքն է, որ Տէրը Իր օրհնութեան ներքոյ բաջառողջ ու կորովաշատ պահի Ձեզ, պարգեւելով հոգու նոր սլացք եւ սրեղծագործական նո-րանոր յաջողութիւններ: Թող բարու, արդարի ու սիրոյ, իմաստութեան ու գեղեցիկի Ձեր արժեւորումներն արգասաւորուեն մարդկանց հոգիներում այսօր եւ առյաւել:

«Ողջ լըրուք ի Տէր, գորացեալ շնորհօք Սուրբ հոգւոյն եւ յաւէր օրհնեալ ի Մենթ. ամեն»:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ հոնդակս ի 19 Մայիսի
յամի Տեառն 2000 եւ ի թուին հայոց ՌՆԽԹ-
ի Մայրապանոս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 8

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՄԵՎԱՆԻ ՎԱԶԳԵՆՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԴՊՐԱՆՈՑԻՆ՝ ՏԱՄՆԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԻԹՈՎ

ԳԻՐ ՀԱՅՐԱԴԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՎԱԶԳԵՆՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԴՊՐԱՆՈՑՆ, ՈՐ Ի ՄԵԻԱՆ

Բերկրանքով, մխիթարուած եռգով ու գոհունակ սրբով գալիս ենք՝ որպէս Հայրապետ Հայոց, ողջունելու Վազգէնեան հոգեւոր դպրանոցի քսասնամեայ յոբելեանը:

Նախախնամութեան առաջնորդութեամբ եւ Վազգէն Ա երջանկայիշաբան Վեհափառ Հայրապետի օրհնութեամբ ու քաջալերանքով համարձակուեցինք Արարիկեան Հայրապետական Թեմի հովանու ներքոյ, Սեւանի բազմադարեայ մենաստանում 1990 թ. եփմնադրել հոգեւոր կրթօջախ, որի լուսաբաղձ կեանքի ու շնորհակալ գործունէութեան այս նշանակալի հանգրուանն ենք տոնում մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդեան 2000-րդ՝ եղբենորոգութեամբ լեցուն տարւում, Հայոց մեծ դարձի 1700-ամեայ տոնակատարութեանց սեմին:

Հայաստանի նոր անկախութեան հեծ ծնունդ առաւ Վազգէնեան դպրանոցը, մեր ժողովրդի համար դժուարին, բայց յոյսով ու լաւարեսութեամբ, ազգային մեր իղձերի իրականացման խանդավառութեամբ լեցուն օրերին, երբ շրջափակման օղակը իր բոլոր ծանր հետեւանքներով աւելի ու աւելի սեղմում էր Հայաստանի շուրջ, սակայն չէր կարող ու չկարողացաւ խեղդել հայրենի մեր եզերքներում թեւածող ազատութեան բաղձանքը, լոեցնել արդարութեան ձայնը եւ մեր եախսեաց կանչը: Արդարեւ, «սերմանի տկարութեամբ եւ յառեւ գօրութեամբ»: Այսօր հասակ է առել դպրանոցը, առնականացել ու եաստարտել իր սուրբ կոչման մէջ՝ Աւետարանի կենաց խօսքով ու հայրենեաց սրբազան ժառանգութեամբ կրթելու, ազատութեան շնչով հասունացնելու եւ Հայ Եկեղեցու անդապարնում անսակարկ ծառայութեան առաջնորդելու հոգեւորականաց հաւաքաւոր ու նուիրեալ, գիտակ ու կարող սերունդներ:

Գոհութիւն ու փառք Բարձրեալին. իրականութիւն է այսօր Վազգեն Ա Հայրապետի երազը՝ հոգեւոր ծառայութեան մէջ տեսնել իր օրհնութեամբ հաստատուած դպրանոցի շրջանաւարտներին: Նրանցից 34-ը համալրում են Սուրբ Էջմիածնի միաբանութեան եւ Հայ Եկեղեցու Թեմերում ծառայող հոգեւորականաց շարքերը: Յիրաւի, արժանի է, որ կրթօջախը հպարտօրէն կրի Շինարար Հայրապետի անունը: Հայրապետական այսու Մեր Կոնդակով՝ ընդառաջ մեր ժողովրդի բազում զաւակաց ցանկութեան, հոգեւոր կրթօջախը անուանակոչում ենք «Վազգէնեան հոգեւոր դպրանոց»:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Լուսոյ Խորանից այսօր աղօթք ենք առաքում առ Բարձրեալը վասն հոգւոց հանգստութեան մեր նախորդ հոգեւոյս Հայրապետերի՝ Վազգէն Ա եւ Գարեգին Ա Կաթողիկոսների. ովքեր հաաւրացին նորահասարակ դարանոցի առաքելութեան յաջողութեանը եւ անցնող տարիների ընթացքում իրենց հայրական հովանու ներքոյ պահեցին հոգեւոր հաստատութիւնը: Հոգու բերկրանքով ու սիրով, բարձր գնահատանքով ողջունում, յոբելանական ուրախ առիթով շնորհակալութիւններ արտայայտելով, յիշատակում ենք յղում մեր ժողովրդի բոլոր այն գաւառիկներին, ովքեր անցնող տասը տարիներին ներդրում ու մասնակցութիւն են բերել Վազգէնեան հոգեւոր դարանոցի հիմնադրման, հասունացման ու կայացման երախտարժան գործում. իրենց արդար վաստակը նուիրաբերող ամերիկահայ բարերարներին, կրթօջախի հոգսաշար ու բազմազարդ սւօրեան հոգացող տեսչութեանն ու վարչական աշխատողներին. բոլոր դասախօսներին, որ անյոգնաբեկ նուիրումով հոգի ու միտք են փոխանցում իրենց սաներին՝ պատրաստելու համար առաւոր հունձքի ժաջան մշակներ: Մասնատր սիրով Հայրական Մեր օրհնութիւնն ենք բերում սիրաաւու ուսանողութեանը, բոլոր շրջանաւարտներին, որ ընտրել են հոգեւոր ծառայութեան անձնուրաց ուղին: Դուք, սիրելիներ, կանչուած էք սպասաւորելու թանկ ու նուիրական Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն, որի 2000-ամեայ ճանապարհն առաջնորդում է նուիրումի ու գոհաբերութեան օրինակ դարձած լուսապսակ փառանքը հայ հոգեւորականաց:

Թող Տէրը անշեշ պահի յիշատակը Վազգէն Ա Կաթողիկոսի եւ Իր շնորհի ու խնամքի ներքոյ՝ անսասան, շէն ու բարգաւաճ Վազգէնեան հոգեւոր դարանոցը, որպէսզի Մեռանի երկնամերձ ափերից իմանալի լոյսը առաւորաբոխ ու անընդմէջ սփռուի հայ կեանքից ներս: «Արդ, աղաչեցէք զՏէր հնձոց, զի հանցէ մշակս ի հունձս իւր» (Մարթ. Թ 38):

Մեր աղօթքն է, որ Բարին Աստուած պահպանի հաւաքդի մեր տունը՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին, սիրեցնայ մեր ժողովրդին եւ անկախ Հայրենիքը մեր:


«Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեսնեմք մերոյ Յիսուսի Ջրիստիսի եղիցին ընդ մեզ եւ ընդ ամենեւեան. ամէն»:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՎԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 5-ն Դեկտեմբերի
յամի Տեսուն 2000 եւ ի թուին հայոց ՌՆԽԹ-
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 32



ՀԻՄՆԱՐԿԵՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ԳՅՈՒՂՈՒՄ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1 դեկտեմբերի 2000 թ.:

Այսօր, ձեռամբ Արարադյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Ս. Նավասարդ եպս. Կճույանի, Կոնստանդնուպոլսի Մատթեոսյան Մարմարաշեն գյուղի Ս. Գևորգ եկեղեցու հիմնարկների արարողությունը:

Նախկինում այսօրվա գործել է Ս. Սարգիս եկեղեցին, որը խորհրդային իշխանության տարիներին ավերվել է: Այդ եկեղեցուց 16 քար ջրով, զինով յվանալուց և Սրբալույս Մյուռոնով օծվելուց հետո Կոնստանդնուպոլսի Մատթեոսյան Մարմարաշեն գյուղի Ս. Գևորգ եկեղեցու հիմնարկների 12 Առաքյալների և 4 Ավետարանիչների անուններով: Եկեղեցու բարերարն է մոսկվաբնակ հայ գործարար Մերգել Կազարյանը:

«Նույն օրը ինչպես ձեր աչքերով, որ այսօր կապարեցինք եկեղեցու հիմնարկների արարողություն՝ հոգու աչքերով, եկեղեցու միջոցով կապվելով մեր Արարչի, մեր Փրկչի և Ս. Հոգու շնորհներին», - հանդիպման ավարտին իր շնորհավորանքն ուղղելով հավաքավոր ժողովրդին՝ ասաց Նավասարդ Սրբազանը:

1700-ամյակի շրջանակներում կապարվող այս արարողությանը ներկա էին 1700-ամյակի գրասենյակի վարիչ-քարտուղարի օգնական Աշոտ Կապույանը, Ս. Սարգիս եկեղեցու քահանա հայրեր, եկեղեցու ճարտարապետ Հրաչյա Գասպարյանը, Մատթեոսյան Մարմարաշեն Սաշիկ Հակոբյանը, գյուղացիներ Էդիկ Հակոբյանը, մարզպետարանի ներկայացուցիչներ, ինչպես նաև Աջարիայի հայ համայնքի նախագահ Արմեն Գևորգյանը:

ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԶՈՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 7 դեկտեմբերի 2000 թ.:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, Իջմուն Ս. Սեդակի առջև, հանդիսապետությամբ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի. փեղի ունեցավ հոգեհանգրստյան արարողություն՝ ի ոգեկոչումն 1988 թ. երկրաշարժի անմեղ զոհերի հիշատակի:

12 փարի առաջ երկրաշարժը խլեց հազարավոր կյանքեր, ե. ինչպես նշեց Արքագան Հայրը, քանի դեռ հնչում է «աղերքի գուրի» հասկացությունը, ապաքինված չեն նաև աղերքի վերքերը:

Հոգեհանգստյան արարողությանը մասնակցում էին Մայր Աթոռի միաբան հայերը, պաշտոնությունը, հավատալիքներ:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՄԵԿՆԵՅ ՓԱՐԻՋ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 12 դեկտեմբերի 2000 թ.:

Այսօր Լ.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ մեկնեց Փարիզ՝ ներկա գրավելու հռչակավոր նրդիչ Շառլ Ազնավուրի «Մուրը Ծնունդ՝ Հայաստանի երեխաներին» դեկտեմբերի 13-ի բարեգործական համերգին: Համերգից տրացված հասույթը տրամադրվելու է հանրապետության՝ մասնավորապես աղևորի գուրու դպրոցաշինությանը:

Նորին Սրբությանն ուղեկցում էին Արարապյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը և Տ. Տիրայր քեն. Գլյուրճյանը՝ իբրև գավազանակիր:

ՀՈԳԵՎՈՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՅՐԵՐԸ ԶՆՆԱՐԿԵՑԻՆ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՏԵՂ ԾՐԱԳՐԵՐ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 15 դեկտեմբերի 2000 թ.:

Այսօր Ն.Ա.Օ.Տ.Տ. Քարեզին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսի հրավերով Մայր Աթոռ Ս. Էջմիածնում փեղի ունեցավ Հայաստանի թեմակալ առաջնորդների և հանրապետության մարզպետների հանդիպում:

Ամանորի նախաշեմին թեմակալ առաջնորդների և մարզպետի իշխանությունների և մանապիպ հանդիպումը Ս. Էջմիածնում դառնում է ավանդական: Գրեթե մեկ փառի առաջ ևս հոգևոր և պետական այրերի համադրել ջանքերով մշակվեցին և հաջողությամբ իրականացվեցին Ամանորյա և Սուրբ Շննդյան փոնական միջոցառումներ:

Ողջունելով ներկաներին, Նորին Սրբությունը փեղեկացրեց, որ այս փառի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը հանդես է գալիս «Նոր փառին» հայ մանուկներին» ամանորյա նախաձեռնությամբ, որը նախադեսում է փոնական հանդեսներ իրականացնել հանրապետության բոլոր մարզերում:

«Մեր նպատակն է մանուկների համար ուրախացի և հիշարժան դարձնել Նոր փառին ու Ս. Շնունդը, հարկապես, երբ գալիք փառին առանձնակի նշանակություն ունի բոլորիս համար», - ասաց Վեհափառ Հայրապետը՝ նշելով, որ ծրագրի իրականացման համար Մայր Աթոռը որոշակի գումար է առանձնացրել յուրաքանչյուր մարզի և Երևանի համար: Այդ նպատակով ԱՄՆ Արևելյան թեմի միջնորդությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին 100 հազար դոլար են հարկացրել ամերիկահայ բարերարներ փեղ և փիկին Գյուլամիթյանները: Այնկալվում են նաև յուրացուցիչ միջոցներ այլ բարերարների կողմից:

Հանդիպման ընթացքում հոգևոր և պետական այրերը քննարկեցին մանուկների Ամանորը առավել հեղաքրքիր ու գրավիչ դարձնելուն նվիրված հարցեր:

Վեհափառ Հայրապետը հյուրերին ներկայացրեց նաև Հայաստանում բրիստոնությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակին նվիրված հորեյլանական փոնակապարտությունների եկեղեցական ծրագրերը:

ՆԱԾԱՍՏԱՆՈՒՄ ԶՐԻՍՏԱՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՈՆ ՀՈ-ՉԱԿԱՄԱՆ 1700-ԱՄՅԱԿ

2001 թ. Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, համայն հայությունն ու քրիստոնեական աշխարհը կրտսեն Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակը: Նշանակալի այս հոբելյանը վերաթելության գեղեցիկ մի առիթ է յուրաքանչյուր հայ հավաքագյալի համար:

2001 թ. ողջ ընթացքում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հովանու ներքո փնտրվում են նաև բազմաթիվ միջոցառումներ՝ եկեղեցական հանդիսություններ, գիտաժողովներ, ցուցահանդեսներ ու մշակութային այլ հայտագրեր: Դրանցից մի քանիսն ունեն սուրճանակի խորհուրդ ու նշանակություն:

1700-ԱՄՅԱԿԻ ՀՐԶԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՌԱՆՅՔԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՅՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Դեկտեմբերի 31, 2000 - Հափուկ եկեղեցական արարողություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, որով կազդարարվի նոր դարասկիզբը և Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակը:

2. Մարտի 24, 2001 - Ուխտագնացություն Տեր Զոր՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի գլխավորությամբ:

3. Հունիսի 17, 2001 - Տոն Ս. Էջմիածնի:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ավանդական այս փոքր Ս. Գրիգոր Լուսավորչի տոնի ի հիշարակության փոքր է:

4. Հուլիսի 10-20, 2001 - Երիտասարդական ուխտագնացություն Հայաստան:

Դեպի Հայաստանի փառքեր սրբավայրեր և մասնավորապես Խոր Վիրապ-Էջմիածին-Երևան ուխտագնացությանը կմասնակցեն հազարավոր երիտասարդներ Հայաստանից և սփյուռքից, ինչպես նաև այլ քրիստոնյա երկրներից:

5. Սեպտեմբերի 21, 2001 - Էկոմենիկ արարողություն Ս. Էջմիածնում՝ ի նշանավորումն Հայաստանի անկախության 10-րդ փառեղարձի՝ հանդիսապետությամբ

Ամենայն Հայոց Հայրապետի և մասնակցությամբ բոլոր Եկեղեցիների հոգևոր պետերի ու նրանց ներկայացուցիչների:

6. Սեպտեմբերի 22, 2001 - Ս. Մյուռտնի օրհնություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում:

7. Սեպտեմբերի 23, 2001 - Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու օծումը:

8. Սեպտեմբերի 30, 2001 - Եպիսկոպոսական ձեռնադրություն:

9. Նոյեմբերի 4, 2001 - 1700-ամյա հոբելյանական տոնակատարությունների հանդիսավոր փակում:

* * *

2001 թ. կարևորագույն միջոցառումներից է փետրվարի 19-ից 21-ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում կայանալիք երիտասարդ միաբանների ժողովը՝ Ամենայն Հայոց Հայրապետի նախագահությամբ:

2001 թ. կնշանավորվի նաև Ամենայն Հայոց Հայրապետի հովվապետական այցելություններով Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու բոլոր թեմեր:

Հոբելյանական տարվա ընթացքում կօծվեն նոր եկեղեցիներ, կիրականացվեն ծրագրեր՝ ուղղված քրիստոնեական դաստիարակության ամրապնդմանը: Գեղեցիկ ու հեղինակավոր միջոցառումներից է 48 վանքերի շրջակայքում իրականացվելիք ծառատունկը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՍՈՍ ՄԱՐԳՍՅԱՆԻՆ ՀԱՆՁՆԵՑ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ «Ս. ՍԱԽԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆԸ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 25 դեկտեմբերի 2000 թ.:

Դեկտեմբերի 24-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Վեհարանի հանդիսությունների սրահում, փեղի ունեցավ հայ բնմի տաղանդաշատ վարպետ Սոս Մարգսյանի մեծարման երեկոն: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսը Սոս Մարգսյանին հանձնեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու «Ս. Սախակ - Ս. Մեսրոպ» շքանշանը՝ իբրև հայ եկեղեցու գնահատական 70-ամյա արվեստագետի բազմարդյուն վաստակի:

«Միջուկի յոթելևադ յիշափ. սրբօրէն պահպանած մեծ ու գնահատելի ժառանգութիւն ունէք աւանդելու սեշտունդներին: Այդ ժառանգութիւն մէք առնեանուիրականն ու թանկը հայրենասիրութիւնն է, որով Դուք հասարակութիւնն ծառայում էք մեծ ժողովրդին և նրա հարուստ ու հնամենայ մշակութիւն»: Վեհափառ Հայրապետի սրբաբառ կոնդակն ընթերցեց Արարադյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը:

Սոս Մարգսյանը, որ բազմաթիվ անգամներ է աշխարհում ունեցել ստանալու գանազան պարգևներ, հուզմունքով ու երախտագիտությամբ ընդունեց հայ եկեղեցու «Ս. Սախակ - Ս. Մեսրոպ» շքանշանը՝ այն ընդունելով որպես իրեն երբեք չհասնող պարգևներից բարձրագույնը:

Մեծանուն արվեստագետին շնորհավորելու եկած մտավորականներն ու պետական այրերը գոհունակությամբ նշեցին Մայր Աթոռի ցուցաբերած նմանօրինակ վերաբերմունքը հայ մշակույթին ու նրա նվիրյալներին՝ հավաստելով, որ իրենք ևս մշտապես կանգնած են հայ եկեղեցու կողքին:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ.

«1700-ԱՄՅԱԿԸ ՈՐՊԵՍ ԴԱՐՁԱԿԵՏ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՆՈԳԵՎՈՐ ՄԵՐ ԿՅԱՆՔԻ»

ՄԻԱՄՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 29 դեկտեմբերի 2000 թ.:

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, սփյուռքից Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանած թեմակալ առաջնորդների և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու նախկնտապետաց դասի ուղեկցությամբ, այցելեց Երևանում կառուցվող Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի՝ 1700-ամյակի փոնակադարձություններից առաջ միասնական աղոթքի կանգնելու նշանակալի հորեյանի առիթով կառուցվող Մայր եկեղեցում: Վեհափառ Հայրապետի ուղեկիցների թվում էին նաև Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության ներկայացուցիչ Տ. Սնայուհ եպս. Սարգսյանն ու Երուսաղեմի Հայոց պարթիարությունից՝ Տ. Սևան եպս. Ղարիբյանը: Ներկա էին 1700-ամյակի պետական եանձնաժողովի փոխնախագահ Խոսրով Հարությունյանը և ՀՀ կրոնի գործերի պետական խորհրդի նախագահ Ռազմիկ Մարկոսյանը:

«Աղոթքս եմ առ Աստված յարձրացնում՝ հայցելով Տիրոջ գոռակցությունը մեզ աշխարհում, որպեսզի կարողանանք փառքով և արժանի վայելչությամբ փոխախմբել 1700-ամյակը որպես մի դարձակետ, որը պիտի գա բարեփոխելու, նորոգելու և վերագաղթունքն ապահովելու ազգային և հոգևոր մեք կյանքի», - միասնական աղոթքից հետո ասաց Նորին Սրբությունը:

Գալիք հորեյանական փարում հավաքացյալների առջև իր դռները կբացի նաև Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցին:

Նորին Սրբությունը հոգու պարպք համարեց իր ողջ վեհությամբ ավարտին հասցնել երջանկահիշատակ իր նախորդների՝ Վազգեն Ա և Գարեգին Ա Հայրապետների նվիրական երազը՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու կառուցումը:

Այսօր շարունակվում են եկեղեցու խորհարման աշխատանքները: Բացի փանքից, ավարտված է արտաքին նրեսապարտումը, շարունակվում են ներքին նրեսապարտման աշխատանքները:

Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու օծումը նախատեսված է 2001 թ. սեպտեմբերի 23-ին:

ԿԱՏԱՐՎԵՑ Ս. ԷԶՄԻԱՄԻՆԻ ԲԱՑ ԽՈՐԱՆԻ ՆԻՄՆՈՐՆԵՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 30 դեկտեմբերի 2000 թ.:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ն.Ս.Ս.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, կատարվեց Մայր Աթոռի փարածքում կառուցվող Բաց Խորանի հիմնօրհներգի արարողությունը:

Ձեռամբ Վեհափառ Հայրապետի, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության ներկայացուցիչ Տ. Մեպուհ եպս. Սարգսյանի, Երուսաղեմի Հայոց պատրիարքության միաբան Տ. Սևան եպս. Ղարիբյանի և Ռումինիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Տիրայր արքեպս. Մարտիրոսյանի Ս. Մյուռնոսով օծվեցին Խորանի բոլոր հիմնաքարերը, որոնց վրա և կբարձրանան չորս ավետարանիչների անունը կրող սյուները:

Խորանի օծումը կկատարվի գալիք 1700-ամյա հռեյլանական տարում, 2001 թ. մայիսին: Մեպուհների 22-ին այս Խորանի առջև կօրհնվի Սրբալույս Մյուռնոսը: Գևորգյան Հոգևոր Ճեմարանի հարևանությամբ կառուցվող Բաց Խորանի առջև հազարավոր հավատացյալներ հնարավորություն կունենան մասնակից լինելու սրբազան արարողությանը:

14 մ բարձրություն ունեցող Բաց Խորանի կողքին կառուցվում է նաև Մայր Աթոռի նոր գլխավոր մուտքը՝ 20 մ բարձրությամբ: Կառույցների հեղինակներն են ճարտարապետներ Զիմ Թորոսյանն ու Ռոմեն Զուլհալյանը:

Հավարտ հիմնօրհների արարողության Բաց Խորանի և գլխավոր մուտքի հիմքերում տեղադրվեցին հուշագրեր՝ վկայություն առ այն, որ հիմնօրհների, ինչպես նաև շինությունների հովանավորներն են Լուիզ Սիմոն Մանուկյանն ու մոսկվաբնակ Սենիկ Գևորգյանը:

ՇԱՐԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐԶԵՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 5 դեկտեմբերի 2000 թ.:

Այսօր Նորին Սուրբ Օծություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Երևանում կառուցվող Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճար: Այս անգամ Վեհափառ Հայրապետի այցելության առիթն էր հանդիպումը Երևանի Կոմիտասի անվան


պետական կոնսերվատորիայի, մանկավարժական ինստիտուտի, ինչպես նաև այլ բուհերի ուսանողների և երաժիշտ մանկավարժների հետ: Հանդիպման նպատակն էր կյանքի կոչել մի սջանչելի մրափոխում մեկնել Հայաստանի փարքեր մարզեր և քաղաքներ՝ ուսանողների միջոցով հայ ժողովրդին, հավկայես մանուկներին և դպրոցականներին սովորեցնելու նախապես ընտրված երեք շարականներ: Միջոցառումն իրականություն է դառնում Զրիստոնությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու 1700-ամյակին նվիրված հոբելյանական հանդիսությունների կազմակերպման Եկեղեցական և Պետական Հանձնաժողովների ղեկավարների միջոցով ի դեմս Տ. Հովնան արքեպս. Տերտերյանի և Խոսրով Հարությունյանի: Այս միջոցառմանն իրենց մասնակցությունը բերեցին նաև կոնսերվատորիայի ռեկտոր, պրոֆ. Արմեն Սմբարյանը և Վ Ազգային ռադիոյի երգչախմբի զեղարվեստական ղեկավար, պրոֆ. Տիգրան Հեքեքյանը:

Ուսանողական երգչախմբի կազարմամբ Մայր Տաճարի կամարների ներքո հնչեցին ընտրված շարականները՝ «Զրիստոս ծնաւ, այսօր քօն է», «Զրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ» և Կոմիտասի «Հայր մեր»-ը:

Վեհափառ Հայրապետը, փայով իր օրհնությունն ուսանողներին և հայտնելով իր գնահատանքը նրանց այդ գեղեցիկ և նվիրական ձեռնարկի առիթով, բարի երթ մաղթեց նրանց:

Երգչախմբի անդամներին բաժանվեցին շարականները պարունակող ծայներիգներ և գրքույկներ: Հանդիպման ավարտից հետո ուսանողական երգչախումբը Մայր Տաճարից անմիջապես մեկնեց Հայաստանի մարզեր:

1700-ամյակի շրջանակներում իրականացվող այս միջոցառմանը ներկա էին Արարաբյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերշ. Տ. Նավասարդ եպս. Կճոյանը, 1700-ամյակի պետական հանձնաժողովի համակարգող Խոսրով Հարությունյանը, 1700-ամյակի եկեղեցական հանձնաժողովի վարիչ-քարտուղարի օգնական Աշոտ արեղա Մնացականյանը, հանձնաժողովի ծրագրերի ընդհանուր պատասխանատու Լևոն Իվանյանը և այլ հոգևորականներ:



2000 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-ԻՆ ԳՈՒԳԱՐԱՅ ԹԵՄՈՒՄ ՕԾՎԵՅ ԵԿԵՂԵՑԻ ԵՎ ԲԱՅՎԵՅ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

Գուգարաց թեմի Վանաձորի Ս. Սարգիս եկեղեցու կանաժորման համար 3000 ԱՄՆ դոլար է նվիրաբերել Կեր և Կիկին Սարգիս և Ալիս Սեթյան ընտանիքը:

2000 թ. դեկտեմբերի 10-ին թեմի առաջնորդ Սեպուհ Սրբազանի նախագահությամբ Կերի ռոնեցավ նորակառույց Ս. Սարգիս եկեղեցու զանգակապան խաչի օծման արարողությունը: Ավելի քան մեկուկես դար Վանաձորում նոր եկեղեցու զանգեր չէին ղողանջել: Օծումից հետո Կերի ռոնեցավ առաջնորդարանի բացման արարողությունը, որին ներկա էին մարգային և քաղաքային իշխանության ներկայացուցիչներ, բազմաթիվ հավաքացյալներ:

Դեկտեմբերի 28-ին մեծ հանդիսավորությամբ Կերի ռոնեցավ Ս. Սարգիս եկեղեցու օծման արարողությունը և առաջնորդարանի բացումը: Արարողությունները կատարեցին Գուգարաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Սեպուհ եպիսկոպոս Չուլքյանը և Ամերիկայի արևմտյան թեմի առաջնորդ, Գերաշնորհ Տ. Վաչե արքեպիսկոպոս Հովսեփյանը: Արարողությանը ներկա էին մարգային իշխանության ներկայացուցիչներ, բազմաթիվ հյուրեր և հարյուրավոր հավաքացյալներ: Բոլոր ներկաներն օրենեցին և արժանին մատուցեցին բարերերներին ու շինարարներին, ովքեր հինգ ամսում Վանաձոր քաղաքին և Գուգարաց թեմին պարգևեցին նմանօրինակ նվեր: Ի դեպ, ինչպես խոստացել էր Սեպուհ Սրբազանը, ամբողջությամբ պանականվել են շենքի ճարտարապետական ուրույն ոճն ու արտաքին տեսքը:

Այսուհետ նորակառույց Ս. Սարգիս եկեղեցում, 2001 թ. հունվարի 6-ի Ս. Ծննդյան տոնից սկսյալ, ամեն կիրակի կմապուցվի Ս. Պատարագ:

Առաջնորդարանի շենքի առաջին հարկում կտեղակայվեն Զրիստոնեական դասփարակության և քառօրյության կենտրոնը, Երիտասարդաց, Տիկնաց միությունները: Այանքի կնոջվի «Վերնապան» գաղափարը՝ կկազմակերպվեն գրական-մշակութային երեկոներ, հանդեսներ, որտեղ կհավաքվեն գրողներ, մշակույթի գործիչներ:



ՎԱՆԱՍՏՈՐԻ ՆՈՐԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ. ՄԱՐԳԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ
ԵՎ ԱԲԱՋՆՈՂՈՒՄՆԵՐ

Հաղկանշական է, որ այսօր արդեն Վանաձորում ամենօրյա ժամերգություններին կմիախառնվեն երկու՝ Ս. Աստվածածին և Նորակառույց Ս. Մարգիս եկեղեցիների զանգերի դողանքները:

Գուգարաց թեմի ողջ հոգևոր դասի, թեմի առաջնորդ, Գերաշնորհ Տ. Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանի և հավաքացյալների անունից հայտնում ենք մեր խորին երախտագիտությունն ու շնորհակալությունն Ամենայն Հայոց Հայրապետին և ԱՄՆ արևմտյան թեմի առաջնորդ, Գերաշնորհ Տ. Վաչե արքեպիսկոպոս Հովսեփյանին՝ իրենց ցույց տված օժանդակության և աջակցության համար:

Մեր երախտագիտությունն ենք հայտնում նաև Լուս Անջելեսի Ս. Մարգիս եկեղեցու հաջապրության դպրաց դասի բոլոր անդամներին, հոգևոր հովիվ, Արժանապատիվ Տ. Նսրենկ քահանա Մատարյանին, արքեպիսկոպոս պարոն Սիմոն Աճըիլաչօղլուին, Սեթյան ընտանիքին և մեզ օգնության ձեռք մեկնած բոլոր հավաքացյալներին:

Թող Բարձրյալն Աստված օրհնի և պահպանի համայն հայությանը, որն անմնացորդ սիրով ու ծառայությամբ միշտ կանգնած է Մայր Եկեղեցու և հայրենիքի կողքին:

ԴԻՎԱՆ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ

ՄԵՎԱՆԻ ՎԱԶԳԵՆՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԴՊՐԱՆՈՑԻ ՏԵՄՆԱԾՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԸ

Դեկտեմբերի 5-ին Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում Կոնդի ունեցավ լուսանոցի Վազգեն Ա Վեհափառի անունը կրող Սևանի հոգևոր դպրանոցի հիմնադրման 10-ամյակի հոբելյանական մեծաշուք հանդիսությունը՝ նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի: Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության անդամները, պետական բարձրաստիճան այրեր, դեսպաններ, գիտության ու մշակույթի գործիչներ, բարերարներ, հյուրեր արտասահմանից և այլ հրավիրյալներ: Օպերայի ջջամուտքի առջև՝ Թումանյան փողոցի կողմից, թափոոր դիմավորեց Վեհափառ Հայրապետին և «Հրաշափառ»-ի երգեցողությամբ շարժվեց դահլիճ, որտեղ Գևորգյան ճեմարանի և Վազգենյան դպրանոցի քառածայն երգչախմբերի կատարմամբ հնչեցին Տերունական աղոթքը և Հանրապետության օրհներգը:

«Դո՛ւ հույսի Կաճար, դու լույսի կաճառ.

Անխախտ դպրեվանք դո՛ւ մեր Վազգենյան»:

Վազգենյան դպրանոցի օրհներգի այս Կողերով հոբելյանական հանդիսությունն սկսեց հանդիսավար Արժանապատիվ Տ. Ծառե քահանա Հայրապետյանը, որը բեմ հրավիրեց դպրանոցի Կեսուչ, Հոգեշնորհ Տ. Բագրատ արեղա Գալստյանին՝ ասելու իր խոսքը.

«Վեհափառ Տեր.

Մրբազան Հայեր, սիրելի հոգևոր եղբայրներ, մեծարգո Տյարք Լուսրով Հարությունյան և պետական այրեր, գիտության ու կրթության հայրենական մշակներ, սիրելի հյուրեր, ներկաներ և շատ-շատ սիրելի նախկին և ներկա դպրեվանքեցիներ.

Աստուծո Ս. Հոգու առաջնորդությամբ, Սևանի վանքի հովանավոր Ս. Աստվածածնի բարեխոսությամբ և ազգիս աստվածընտիր Հայրապետի բազմաշնորհ օրհնությամբ երկար սպառամներից, հոգեկան և մտավոր Կրկայրանքներից հեկո, վերջապես, արժանացանք այս ջբեղեզարդ դահլիճում բոորորիդ մասնակցությամբ Սևանի Վազգենյան դպրանոցի 10-ամյակը նշելու հանդիսավոր պահին, որի հիմնադիրը Դո՛ւք եք, Վեհափառ Հայրապետ: Ինձ համար անձնապես այս օրը դուրս է գալիս

սոսկ տոն և հանդիսավոր արարողություն լինելու մակերեսային մակարդակից, այն մի վկայություն է՝ վկայություն կյանքի, գործի և արդյունավորության: Այն մեր, որպես տեսչություն և ուսանողություն, հանձնառության, կամքի և պատասխանատվության դրսևորում է: Հանձնառություն ի գին բոլոր ներքին և արտաքին դժվարությունների՝ Հայ Եկեղեցու և Հայրենիքի կյանքում լինել անմնացորդ ընծայալներ: Կամք, որի ամկայությամբ է միայն ու միայն խոսքը դառնում գործ, գործը՝ կյանք, ապրում ու սեր, սերը՝ իրականություն: Պատասխանատվություն, մեր ունեցած առաքելության և մեր նկատմամբ ունեցած վստահության և սիրտ հանդեպ, մեր ուխտի ու խոստումի հանդեպ և, վերջապես, այն վերջին լուծայի հանդեպ, որ մեր հավատացյալ հայրերն ու մայրերը դնում են Հայ Եկեղեցու զանձանակի մեջ, որպես սիրտ և գորգորանքի արտահայտություն: Վազգենյան դպրանոցն իմ պատկերացմամբ մանրակերպող կարող է լինել այսօրվա դժվարություններով ապրող Մայր Հայրենիքի: Այսինքն՝ այն ոչնչից գոյության կոչվեց և, հակառակ առաջին փորձերի դժվարին կենսապայմանների, հեղգհեկե գարգացավ, աճեց թե՛ հոգևոր, և թե՛ նյութական առումով: Եվ ահա այսօր ներկայանում է որպես վավերական ու իրական հոգևոր դպրանոց: Դա Ձերդ Սրբության անձխտելի սիրտ, ամենօրյա գորգորանքի, անսասան հավատքի և դպրվանքի բոլոր սաների պարաստական, գիտակից, անտրտուն համառության արգասիքն է՝ խորապես հավատալով, որ հոգին է միայն կենդանարար, և ուր հոգին է, այնտեղ է ազատությունը: Պարկերացրեք միայն, որ 17-21 տարեկան երիտասարդներ իրենց հայրական փառուկ օջախներից հեռու, Մաանա կղզում ապրում են ու իրենց կյանքն են դնում Հայ Եկեղեցու փառքի սեղանին՝ այն խառնելով մեր Տիրոջ մարմնի և աբյան կենդանի հաղորդությանը, դպրեվանքը դարձնելով հարազատ հայրական տուն: Այսու, մեր շնորհակալությունը բոլոր ծնողներին, ովքեր իրենց գավակներին ընծայելով են շահում, և վստահեցնում են, որ նրանք ավելի մեծ խնամք են ստանում դպրանոցի տեսչության, դասախոսների ու ողջ աշխատակազմի կողմից, որպես իրենց սեփական որդիների:

Նրանք մեր գավակներն են: Իմ նրախպագևր շնորհակալությունը բոլոր նրանց, ովքեր նախանձախնդիր, առանց շահի ակնկալության, այս տասնամյա վկայությունը հանդիսության տեսքով արտահայտելուն չխնայեցին ո՛չ ջանք, և ո՛չ էլ ժամանակ: Հուսկ, Վեհափառ Տեր, որպես տեսչություն և ուսանողություն, մեր ամենաջերմ շնորհավորանքներն ենք եղում Ձերդ Սրբությանը՝ մաղթելով բարի գաճակալության երկար օրեր: Վստահ եղեք, որ Ձեր գավագանը առավել պայծառությամբ պիտի ծաղկի, և մենք, բանաստեղծի խոսքերով, «Ջավակներդ Օգոստոսփառ պիտի կերտենք նո՛ր արշալույս»:

Տեսուչ Հայր Սուրբի խոսքից եկտու ելույթ ունեցավ Արամ Ղարաբեկյանի ղեկավարած նվագախումբը:

Շքեղ դաեիճում հավաքված բոլոր հոգևորականները, պետական այրերն ու պարավոր հյարերը եկել էին իրենց սրբաբուխ ու անկեղծ խոսքն ասելու Վեհափառ Հայրապետին՝ որպես Սևանի դպրանոցի եիմնադրի, քեսչական ու դասախոսական կազմին, շրջանավարտներին ու ուսանողությանը, որոնք անհավարարին դարձրին իրական, մոռացվածը՝ ներկա, քանդվածը՝ շեն, հուշը՝ կյանք, ավերակը՝ դրախտ: Այս առթիվ ողջույնի ու շնորհավորանքի խոսքով հանդես եկավ Հայաստանում բրիտանության պետական կրոն հոգակման 1700-ամյակի քոնակարարությունների կազմակերպման պետական հանձնաժողովի փոխնախագահ, պրն խոսքով Հարությունյանը, որը հավարտ իր խոսքի Վազգենյան դպրանոցին նվիրեց մի պաստառ:

Այնուհետև Սևանի դպրանոցի քառաձայն երգչախումբը, ղեկավարությամբ խրմբավար Շոթա Վարդանյանի, կատարեց «Ընդդառն», «Էջմիածին» հոգեպարար երգերը:

Վազգենյան դպրանոցի քառամյակը շնորհավորեց նաև Գերշ. Տ. Շահն արքեպս, Աճեմյանը, որի սրբաբուխ և ոգևորիչ խոսքերին ջերմորեն արձագանքեցին հանդիսությանը ներկա գրնվող սաները, ծնողները և հյուրերը:

Անցյալ քառը քարինների դասընթացներն ու դասավանդած առաքականները դրել են այն բոլոր եիմքերը, որ Սևանի դպրանոցի շրջանավարտներն ու ուսանողները կարողանում են իրենց գիտական անդրանիկ ուսումնասիրություններով ու երաքարակած նյութերով մեծ նպաստ բերել ոչ միայն հայագիտությանն ու ասքվածաբանությանը, այլև բանասիրությանը և դրան հարակից ճյուղերին: Նրանք արժանի եեքնորդներն են քակավին 410 թ. Սահակ-Մեթոդայան շրջանից Սևանում եիմնված վարդապետարանի ու բարձրագույն դպրոցի սրբազան ավանդների: Միաայսօրինակ խոսերով Տ. Շահն քանանան բեմ հրավիրեց Երևանի պետական համալսարանի ռեկտոր, պրն Ասողիկ Մարտիրոսյանին՝ շնորհավորանքի ու բարեմաղթանքի խոսք ասելու:

«Վեհափառ Տեր,

Սրբազան Հայրեր, հայրենակիցներ.

Թույլ քվեք Երևանի պետական համալսարանի ուսանողության, դասախոսության ողջ անձնակազմի անունից շնորհավորել Սևանի Վազգենյան դպրանոցի քառամյա հոբելյանը: Տասը քարին կրթական հասարակության համար երկար ժամանակ չէ, սակայն այն ավանդույթները, որոնք ձևավորվել են այդ հասարակությունում, կրթության այն բարձր մակարդակ ունենալը, սաների խորը գիտելիքները, ովքեր հեքո դրանք օգքագործելով իրենց առումը շարունակում են Գևորգյան ճնմարանում, խոսում է այն մասին, որ այս հասարակությունը կայացել է: Այս ամենը վկայություն է այն բանի, որ նրա եիմնադրման օրից, Հայոց Հայրապետը՝ Գարեգին

Բ-ն, կատարել է մեծ աշխատանք: Երևանի պետական համալսարանի և մեր Եկեղեցու կապերը զալիս են համալսարանի հիմնադրման օրվանից, երբ համալսարանը տակավին չուներ համապատասխան դասախոսական անձնակազմ: Այդ ժամանակ էր, որ համալսարանը հրավիրեց մեր Եկեղեցու՝ Սուրբ Էջմիածնի բարձր գիտելիքներով օժտված հոգևորականների, որոնք իրենց ներդրումը բերեցին համալսարանի կրթական գործունեությանը: Կցանկանայի հիշեցնել ձեզ իմ հայրենակից Գարեգին արքեպիսկոպոս Նովսեփյանցին, որը մեր համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետի առաջին դեկանն էր: Այդ ավանդույթը շարունակվում է նաև այսօր. ինձանից քիչ առաջ ելույթ ունեցավ Շահն արքեպիսկոպոս Աճեմյանը, որն այսօր մեր համալսարանի աստվածաբանության ֆակուլտետի դեկանն է: Համալսարանի լուր սերունդները երախտապարտ են, իհարկե, մեր Եկեղեցուն այն ամենի համար, որ կատարվել է նրա հիմնադրման օրից: Եվ համալսարանականներից շատ-շատերն այսօր և մինչ այդ էլ տարբեր առարկաներ են դասավանդում Սևանի դպրանոցում և Գևորգյան ճեմարանում, շատ համալսարանականներ մեր Եկեղեցու հեղափոխողների գործակցությամբ կատարում են հեղափոխություններ հայագիտության ասպարեզում:

Թույլ տվեք կրկին անգամ շնորհավորել անձնակազմին այս հոբելյանի կապակցությամբ, ցանկանալ նոր հաջողություններ ուսումնական գործում: Այժմ թույլ տվեք տեսչությանը հանձնել Մեր ուղերձը և Երևանի պետական համալսարանի ռեկտորին՝:

Այնուհետև հանդես եկավ «Վերածնունդ» պարախումբը՝ մեծ բավականություն պարգևելով ներկաներին:

Անշուշտ շատերն են ամռան տապալից շտապում Սևան՝ վայելելու Գեղարքունյաց գեղեցկուհու գովությունը: Ձմեռը, սակայն, Սևանում ցրտաշունչ է, և պետք է խոստովանել, որ շատերը գուցե չդիմանային բնակլիմայական պայմաններին, հատկապես երբ դարձան սկզբնավորման շրջանում կղզում դժվար լուծելի խնդիրներ էին խմելու ջուրը, վառելանյութը, ինչո՞ւ չասենք՝ նաև սնունդը: Չնայած այդ ամենն արդեն ինքողություն են դարձել, բայց մեր կողքին կանգնած են մարդիկ, ովքեր անսակարկ նվիրումով ու անմնացորդ սիրով հանձն առան դպրեվանքի կրթության ծանր ու պատասխանատու աշխատանքը:

Դպրեվանքի տասնամյա այս դժվարին ընթացքին անդրադարձավ հոգևոր կրթօջախի դասախոս պրն Սանդղո Բեհբուդյանը.

«Շնորհազարդ Վեհափառ Տեր.

Հարգելի հանդիսականներ.

Այսօր հավաքվել ենք նշելու Սևանի Վազգենյան դպրանոցի փաստամյակը: Իր-
րև պատմական շրջան. փասը փարին ակնթարթ է 1700-ամյա Հայ Առաքելական Ե-
կեղեցու անցած ճանապարհին, բայց լուսավորչափաստաբար Սևանի մենաստանն իր
նշանակությամբ եզակի է հայ ժողովրդի սրբավայրերի շարքում: 305 թվականից
սկսած այդ մենաստանը շուրջ 17 դար ծառայել է հայ ժողովրդին, հանդիսացել դա-
րերի ճամփով բայլած, հայ աշխարհի ընդերքից անցած, հայ հողի ու հոգու հնար
շաղկապված քրիստոնեական հավատքի ոգեղեն և լուսաբաշխ փաճար, ուր առա-
ջինը ծնրադրեց Ս. Գրիգորը, և ուր սերունդները աղոթեցին ու կրթվեցին:

Դարեր ի վեր նա ճանաչվել է իբրև երկրորդ Երուսաղեմ՝ լիովին արդարացնելով
իր այդ համարումը, սակայն 1930 թ. խորհրդային իշխանությունները մարեցին
Սևանի հոգևոր կյանքը, և միայն վեց փաստամյակ անց, 1990 թ., կամա թե ակամա
ուղղվեց այդ սխալը: Արարարյան թեմի այն ժամանակվա շինարար առաջնորդ,
Բարձրաշնորհ Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանի իմաստուն և համարձակ նա-
խաձեռությամբ Լուսավորչի կանթեղի լույսը վերստին արարվեց Սևանում, բացվե-
ցին աղոթքի փաճարներ, հնչեցին եկեղեցիների զանգեր, հիմնվեց անցյալը կամրջող
հոգևոր մի նոր կրթարան, և հիմնադրի հովանավորությամբ և խստագույն պահանջ-
կոտությամբ արդեն փասը փարի Սևանի դպրանոցը դասփնարակում է այդ լույսի
ժառանգորդներ, որոնք նոր փոփոխությունով գալիս են վառ պահելու անհամար փորձու-
թյուններից չընկրկած Լուսավորչյան ջախը, իրենց բազմակողմանի գիտելիքներով,
լեզուների իմացությամբ և, որ գլխավորն է, գիտակից հայրենասիրությամբ, հա-
վատքով ու նվիրումով միանգամայն պարարտաբու են ծառայելու բազմադարյան Հայ
Եկեղեցուն, հավատարացյալ հայ ժողովրդին, լինելու «մշակե առանց ամօթոյ»:

Դպրանոցի հիմնադրման սկզբից ևեթ նրա աշխատանքների մեջ ներգրավվեցին
աստվածաբանության, հայագիտության, ընդհանրապես հասարակական գիտու-
թյունների ճանաչված մասնագետներ, որոնք այսօր շնորհաշատ փեսայ, Հոգևշնորհ
Բագրատ արեղայի գլխավորությամբ իրենց հմտությունն ու փորձը հաղորդում են
սաներին, պարարտաբու Հայ Եկեղեցու արժանավոր սպասավորներ, անասան
հավատավորներ այնքան փոթորիկներ փեսած, այնքան արհավիրքներ հաղթահա-
րած մեր Եկեղեցու:

Սևանի դպրանոցը Գարեգին Բ Կաթողիկոսի սրտի ծաղիկն է: Վեհափառ Հայ-
րապետի ամենօրյա հոգածության, գործակից դասախոսների, պարտաճանաչ պաշ-
տոնության ներդաշնակ գործակցությամբ է հնարավոր դարձել բոլորն իր սրբ փար-
վա բեղմնավոր ընթացքը: Դպրանոցը պարկանում է հայ ժողովրդին, և նրա պար-
վական ազգայինները միշտ պարարտաբու են օգնելու:

Անվարան կարելի է փաստել, որ դպրանոցի շրջանավարտները միանգամայն պատրաստ են և ի գործով առ պահելու հայ Առաքելական Եկեղեցու հավարի քահանայության խորան, որպեսզի հայ հոգիները միշտ ղեպի նրան սեփական մնան, և որպեսզի բարձրանա հայ աղոթքը՝ իր խոսքի անմահաբույր ծաղիկները խնկելով: Նրանք պատրաստ են վկայելու իրենց հավարքն առ Քրիստոս և հավարարությունը հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հանդեպ:

Հեշտ չեն եղել անցած տարիները. դպրանոցը հանդիպել է խոչընդոտների, դժվարությունների, որոնք նախկինում հաղթահարվում էին Գարեգին արքեպիսկոպոսի անհողողող կամքով ու անմիջական օգնությամբ: Նրան աջակից ու գորավիզ եղավ նրջանկանիշատակ Վազգեն Առաքին Կաթողիկոսը, որ 1991 թ. այցելեց դպրանոց և նոր լիցք հաղորդեց հայ Եկեղեցու նվիրյալների գործունեությանը: Նա մշտապես պարզամտում է. «Հայեր, սիրտ առեք... միացե՛ք սիրով՝ սեպուհ ազգին, եղբ միաբան, մեկ կամք, մեկ հոգի, ձեռք ձեռքի տվե՛ք, հաստատ մնացե՛ք հայոց աշխարհի սեզ լեռներուն պես և հայացքը ձեր դեպի Վեհամայր Մասիսներն ի վեր, կրկին ուխտեցե՛ք հավաքարիմ մնալ հայոց պարմության, հայոց ազգության և հավիտենական Մայր հայաստանին»:

Վազգենյան դպրանոցի տասնամյակը փաստորեն զուգահեյնք նրա հիմնադիր Գարեգին Բ Վեհափառ Կաթողիկոսի գահակալության առաջին տարեդարձին, որի համար ամենամեծ նվերն ու ուրախությունը, լավատեսության և ներշնչումի աղբյուրը ահա այս աճած ու բազմացած մշակներն են հունձքի, որ կանգնած են խոնարհաբար: Ինչպե՛ս չի իշենք մեծ բանաստեղծի խոսքը.

Մշակ, ցանկ՝-յանուն Տիրոջ նշխարին,
Թող մարերևոյ յորդին սերմեր յուսեղեն,
Վաղը ամեն մեկ հասկի մեջ կաթնային
Պիտ հասուննայ մաս մ՝ Յիսուսի մարմինեն:

Այս ուրախառիթ հանդեսին Վազգենյան դպրանոցի շրջանավարտներին, այսօրվա և գալիք տներին մաղթում են գիտակից, անձնվեր ընթացք, որպեսզի արժանի շարունակողը լինեն Լուսավորչավանդ հայ Եկեղեցու հազարամյա ընթացքի: Լինեն անփոխարինելի Ս. Էջմիածնի արժանավոր սպասավորները և հովիվ՝ ըստ սրբին Աստուծո:

Թող հավերժ լինի դպրանոցի ճանապարհը՝ ի փառս հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու»:

Ի վարձարություն հայ Եկեղեցուն բերած մեծ նպաստի և Սևանի Վազգենյան դպրանոցի կայացման գործում ունեցած կարևորագույն դերի՝ պրն Սանդրո Բեքբուդ-

յանը հանդիսության ընթացքում Վեհափառ Հայրապետի կողմից արժանացավ «Ս. Սահակ - Ս. Մսրոպ» շքանշանին:

Գևորգյան Հոգևոր ճեմարանի տեսչության, դասախոսական կազմի և ողջ ուսանողության անունից շնորհավորանքի ջերմ խոսքով իր խոհերն ու բարեմաղթանքներն արտահայտեց ճեմարանի տեսուչ, Արժանապատիվ Տ. Եղիշե ավագ քահանա Մարգարյանը:

«Գևորգյան ճեմարանի տեսչության, դասախոսական կազմի և ողջ ուսանողության անունից եկել ենք զնախադանքի և քրիստոնեական ջերմ սիրտ խոսք ասելու մեկ փասնամյակի ընթացքում արդեն լիարժեքորեն կայացած Սևանի Վազգենյան դպրանոցի դասախոսական կազմին, ուսանողությանը՝ ի սրտե շնորհավորելով հաստատության անցած բեղմնավոր փասնամյակի առթիվ: Հոգևոր այս հաստատության փոքրիկ այս հորեկյանն ավելի է արժևորվում, երբ հաստատվում ենք, որ դպրանոցն իր սաներով փասը փարի առաջ ծվարելով պարմական Սևանի մենաստանների հովանու ներքո, որպեսզի, ի միջի այլոց, 1692 թ.՝ շուրջ 310 փարի առաջ, փորձեց հաստատվել նաև Մեծն Մխիթար վարդապետ Մեքաստացին, լայն բնական ու տեխնիկական դժվարությունները եր պահեցին Մեքաստացի վարդապետին իր ուսումնական ծրագրերի իրագործումից: Քաջապետյակ այս ամենին՝ Արարարյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանն իրեն յուրաքանչյուր հետևողականությամբ ու լավատեսությամբ, անտեսելով բնության դաժան խստությունները՝ Սևանա կղզում եղած կիսաշեն կառույցները հարմարեցնելով դպրանոցի կարիքներին, փասը փարի առաջ հավաքեց և ընտրեց իր սաներին ճիշտ այն ոգով, ինչպես մեր պարմության հեռավոր անցյալում, երբ Հայ Եկեղեցու սրբացած անհապականությունները, որոնց համար թանկ էր մեր ազգային-եկեղեցական, հոգևոր-մշակութային կյանքը, ինչպիսիք էին Եսայի Նչեցին, Հովհան Ռոտունեցին, Մովսես Տաթևացին: Գարեգին Սրբազանն էլ իր նախորդ այս մեծ վարդապետների օրինակով Գևորգյան ճեմարանում իր հոգում վառած ջախը փոխանցեց Սևանի դպրանոցի իր առաջին տաներին՝ պարզվիրելով նրանց ապրել միջնադարյան վանականի համեստ պայմաններում և առավելագույնս օգտվել հրավիրված դասախոսների ավանդած գիտությունից: Հաճությով պեսք է նշել, որ առանց ավանդույթներ ունենալու հենց առաջին սերունդի Վազգենյան դպրանոցի սաների համար ենարավոր եղավ կրթության և հոգևոր դաստիարակության գործը զենել բարձր մակարդակի վրա՝ մշակելով սաների միտքն ու հոգին, լուսավորելով մեր սուրբ Եկեղեցու հավատքով ու ավերարանական պարզվիրաններով, որով այսօր մենք ունենք փառանքը այդ հաստատության շրջանավարտների, որոնցից շատերը համալրել են կամ մոտ ապագայում կլրացեն մեր եկեղեցականների շարքերը, կարողություն կունենան զբաղվելու գիտափնտրագիտական աշխատանքներով:

Վազգենյան դպրանոցի այս հաջողությունների հիմնական գրավականը անվերապահորեն նրա հիմնադրի, ուսուցչապետի խիստ, պահանջկոտ, ծույլերի և օրինախախտների նկատմամբ ունեցած անզիջում վերաբերմունքն է:

Ի սրտե ջերմագինս շնորհավորելով Մևանի Վազգենյան դպրանոցի տասնամյակի առթիվ, հայցենք տիեզերքի Արարչին, որ իր հովանին պահի դպրանոցի ժառանգավորների վրա, որպեսզի առավել շնորհագարդվեն ի հոգևոր և դառնան արժանի մշակներ «առանց ամոթի», որ կարողանան դժվարագույն մեր ժամանակներում իրենց խորը հավատքով և գիտելիքներով լրացնեն մեր հոգևոր անդաստանի նստացած անտառի խորարմատ և հաստատարուն, մեզնից ընդմիջը գնացած կաղնիներին: Թող Վազգենյան դպրանոցը ծաղկի, բարգավաճի և բեղմնավոր գործունեությամբ հասնի նորանոր հորեղանների»:

Գևորգյան ճեմարանի քառաձայն Երգչախումբը հնչեցրեց «Երկնից-գետնից», «Սոնա յար» երգերը:

Իր երախտագիտական հոգևորիս խոսքով ու ճեմարանական կյանքի հիասքանչ խորհրդածություններով հանդես եկավ դպրանոցի նախկին շրջանավարտ, այսօր Ս. Ղովհաննես եկեղեցու ծիսակատար քահանա Տ. Զավեն Մարկոսյանը:

«Վեհափառ Տեր.

Երախտիքի խոսքերն ու մտքերն այս պահին անգուսպ են մեր սրտերում: Ուսանողության տարիներին, երբ գիշեր ու ցերեկ ներկա էինք դպրանոցի կյանքում, Ձեր շուրջ խմբված տեսիլքներ ու երազներ էին ծնվում Եկեղեցու, հայրենիքի, պետության շինության գործի համար: Այսօր այդ տեսիլքով վառված, որպես ուխտյալ հոգևորականներ, հաճախակի բախվում ենք իրականության կարծր ժայռերին, սակայն վարակվելով Ձերոջ Սրբության կամքով, եռանդով, անմնացորդ նվիրումով, գոտեպնդված ենք և համարձակվում ենք ասելու, որ մենք անսահման երջանկություն ունենք այս մեծ ժամադրության մեջ հանդիպելու Ձեզ: Ձեր անձի քաջ և ճշմարիտ նկարագրի ծառայանվեր ոգու և բոլորանվեր գործունեության խորադիր դրոշմն առկա է մեզանից յուրաքանչյուրի կամքի մեջ: Մեզանից շատերն իրավունք ունեն խոստովանելու, որ առ Մատված հավատքի սերմերը մեր հոգիներում սերմանվել են Ձեր ձեռքով՝ հավատքի վստահությամբ, հույսի լավատեսությամբ և սիրտ ջերմությամբ շարունակելու մեր ծառայությունը Հայ Եկեղեցուն, մեր ժողովրդին և հայրենի պետությանը»:

Տասնամյակի հորեղանի կապակցությամբ դպրանոցի ուսանողներին իրենց հեզանկուն պարով սքանչելի նվեր մատուցեցին «Նանե» պարային խմբի աղջիկները: Ապա ելույթ ունեցավ Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի ռեկտոր Արամ

Իսաբելյանը՝ մի յուզանքով կրավ նվիրելով դպրանոցին. որից հետո Սևանի դպրանոցի երգչախումբը կապարեց «Սև ա չորանի շունը» ժողովրդական երգը:

Չնաշխարհիկ Սևանա վանքը բոլոր դարերում հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն բազում հայրերի ու անվանի գործիչների է տվել: Այսպես իր աղոթալուծիչն է ունեցել Հայկ Նախապետի թոռ Գեղամ հսկան: Անմիջապես գրքերի պուրից հետո Սևանա կղզում եիմնվել է դպրանոց: Սևանա վանքի վանականներից կաթողիկոսներ են ընտրվել:

Այժմ, փառք փարեկան է հագադամյա Սևանի դպրանոցը: Աստծո նախախնամությամբ ներքինում, այսօր Ս. Առաքելոց վանքի օրհնությամբ ծաղկում է Սևանի դպրեվանքը, և Ձեզ, Վեհափառ Տեր, ցանկություն ունենք դասելու Սևանա վանքի երախտավոր կաթողիկոսների շարքին»,- այսպիսի սրտառույ խոհերով ասեա Տ. Շահին քահանան բնմ երավիրեց Գարեգին Վեհափառին: Դպրեվանքիների շուրթերից հնչեց դպրանոցի նոր գրված օրհներգը.

«Հարության լույսի խորհրդին փարված,
Խաչյալի սիրո պարզամով վառված,
Մեր սուրբ հայրերի աղոթքով սրբված՝
Ձեզ ենք մենք գալիս, օջախ սրբացած:

Աստուծո աչքն ես՝ մեր հոգում բացված,
Դարբնոց գիտության և իմաստության,
Սիրո, հանճարի և ճշմարտության
Դո՛ւ հույսի փառար, դո՛ւ լույսի կաճար,
Անխախտ դպրեվանք դո՛ւ մեր Վազգենյան»:

Օրհներգից հետո Վեհափառ Հայրապետն ասաց.

«Միտելիներ՝ մեծարգո պետական այրեր, սիրելի միաբանություն Մայր Աթոռ Ա. Էջմիածնի, հոգևոր հայրեր, հոգևոր եղբայրներ, սիրելի դասախոսներ, սաներ, պետական համալսարանների պարտավորումն ունկրողներ, հրավիրյալ հարգարժան հյուրեր և շատ սիրելի ժողովուրդ հայոց: Ինձ համար այս երեկոն՝ այս հանդիսությունը առանձնակի ուրախության, հուզումի, քեզկրանքի պատ է: Մասնավոր, կարծում եմ, ճիշդ ու ջանք պիտի գործադրեմ, որպեսզի երկար չխոսեմ, առանց այդ էլ երկարող այս հանդիսությունը ավելի չերկարացնելու համար: Գեղեցիկ հուշեր այս պահին գծագրվում են իմ մտապատկերների առջև, որոնցից մի քանիսը կուզեմ փոխանցել, ներկայացնել ձեզ, թե ինչպես տարիներ առաջ, երբ այցելեցի Սևանա կղզի՝

կանգնած խրիմյան հայրապետի ընծայարանի շենքի ստղն, հայացքս հառած դեպի բարձունքում մենալոռ կանգնած, կարծեք թե որոացած հայոց փանքերը, հանկարծ մերածում ունեցաւ և եւրոնցսները, հոգևոր կրթական հաստատութեանը օծուելու այդ մենաստանը, այդ կողին: Վերադարձաւ Մայր Աթոռ Ս. Էջմիածին և խնդրանքս ներկայացրեցի կրթանկատիշարակ Վազգեն Ա Ամենայն հայոց Կաթողիկոսին: Վեհափառը նայեց դեմքիս, խորհրդավոր մի ժպիտ գծագրվեց հայոց հայրապետի դեմքին՝ Երազում էս: Պատասխանեցի՝ Վեհափառ, խնդրում ենք Ձեր օրհնությունը:

- Ըստ լավ, - հրահանգեց հայոց հայրապետը, և ձեռնամուխ եղա այնպէս Վազգենյան դպրանոցի հիմնադրման գործին: Ընդունելության քննություններն ստղեն ավարտված էին Գևորգյան Ճեմարանում, շուրջ 23 սաներ դուրս էին մնացել՝ չէին հաջողել քննություններին, և ես բոլորին անխորի իրավիճակի Սեանի դպրանոց: Եկանք, միայն չորս արտեր ունեինք, ստղեն նկարագրվեց փճակը, և երկրաշարժի օրերից օգնություն ստացած երկհարկանի մահճակալներ, որոնց վրա և ստացին շրջանում ապրեցին՝ իրենց կյանքը Սեանաւ այդ դպրանոցի հարկից ենքս ամբողջացրեցին 23 սաները: Նրանցից երեքը միայն ունեցան այդ շնորհիւ շրջանավարտ լինելու Սեանի Վազգենյան Դպրանոցի և իրենց կյանքը կազմակերպելու հոգևոր ասպարեզից ենքս որպէս հոգեորականներ, որպէս սպասավորներ հայաւարանայց Սոսքերական Սուրբ Եկեղեցու: Ստացին երեքը, որ գլխավորում են այս շարքը՝ Թորգոմ Իսեղա, Զավեն քահանա և Կարապետ քահանա, մնացյալները երկրորդ սերնդի շրջանավարտներն են, թեև երանք միացան հեղագային և միասնաբար ավարտեցին Վազգենյան Դպրանոցը: Ես անհատ ուրախ եմ և փառք ու գոհություն եմ առ Աստուծոյ բարձրացնում, որ կայացաւ Վազգենյան Դպրանոցը: Անհուն միջոցառություն եմ ապրում այն զգացումից, որ երկնքից այս պահին դեպի այս դահլիճն են իրենց հայացքը ուղղել և բերկրանք ու ցնծություն են ապրում երջանկապիշարակ Մեր նախորդները՝ Վազգեն Վեհափառ և Գարեգին Սոսքին Կաթողիկոսները: Երազը դարձաւ իրականություն, իրականություն դարձաւ շնորհիւ անձնվեր մանկավարժների, շնորհիւ բազ, արի, նվիրյալ մեր սաների: Բազում փորձություններ, վարանգների միջով անցաւ կրթական մեր կյանքը Սեանի դպրանոցում: Եղան պահեր, երբ թվում էր, թե պիտի փակվի, պիտի լուծարվի կրթական այդ հաստատությունը, բայց սերը, երազը, նպատակը, տեսիլքը, որ ունեին դպրանոցի սաներն ու դասախոսական կազմը, երանց ոգի հաղորդեց, երանց ուժ և կամք պարզեց հաղթահարելու այդ ամեն դժվարությունները: Դպրանոցում դասերը սկսեցինք ընդամենը երկու դասախոսով, առաջին տեսուչն էր և Մեր օգնականը՝ հորին Իսեղան: Այնուհետև եկան մեզ

միանալու Սանդղոթ Բեհերոյանը և Սառսան սարկավագ Վարդանյանը, որ հեղուագայում եղավ երկրորդ տեսուչը հասարակության: Ժամանակի մեծ կարողացանք համալրել դասախոսական ողջ կազմը ընտրի դասախոսներով, որոնք իրենց ուսումնական գործը իրականացնում են Հայաստանի պետական բուհերում: Նրանք սիրով համձն առան շաբաթը ավելի քան երկու կամ երեք անգամ առավոտ կանոնի ճանապարհվել դեպի Սևան: Եվ դա ամռան շոգին ու ձմռան ցրտին: Երջանկահիշարակ Արամ Սահակյանը սիրում էր դժվարությունները հիշեցնել ինձ՝ ասելով միշտ. Մոքագան Հայր մեզ դարձրել են քննախնայյուն: Մնում է, որ մի մարտի տաս մեր մեղքը և շներին լծված մի սայլակ և ուղարկես դեպի Սևան: Իրապես, բազում դժվարությունների հաղթահարումով կյանք առավ Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցը և սերունդ պարզենց Հայաստանյայց Առաքելական մեր Եկեղեցուն ու մեր ժողովրդին: Եվ ուրախ եմ, որ նվիրյալ ծառայության գիտակցություն ունեցող սերունդ պարզենց Սևանի Վազգենյան Դպրանոցը: Բավական է հիշատակել, որ դպրանոցի շրջանավարտները, անխորիք բոլորը, ձեռնադրվում են հոգևորականներ և իրենց կյանքը կազմակերպում հոգևոր ասպարեզից ներս, որպես սպասավորներ մեր Եկեղեցու: Անցնող հիմազեն տարվա շուրջ հիսուն շրջանավարտներից 34-ը այսօր սպասավորում են Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն և մեր ժողովրդին բարեպաշտ: Մենք մեծուպես մխթարված ենք՝ տեսնելով ոգին այդ աթոռության, տեսնելով պատասխանատվության բարձր գիտակցությունը Սևանի Դպրանոցի շրջանավարտների և մեծ հայրենասիրությունը, որի ակունքները ուրախությամբ եղա ընդամենը երկրորդ տարում, հիմնադրումից հետո: Արցախում ընթանում էին ազատագրական մարտերը: Բարձրագույն Սևան՝ հսկայական ուսանողները, ուսանողները ներկայացան ինձ, և նրանցից մեկը խոսք խնդրեց և հանուն իր ընկերների հայրենց ինձ, որ որոշել է բոլորը միասին կամավոր մեկնել Արցախ, այնտեղ Արցախի հերոս մարտիկների կողքին մարտնչելու մեղքի զգացումը ծանրացած է իրենց սրտի վրա, որ իրենց եղբայրներն այնտեղ կռվում են, իսկ իրենք այստեղ՝ ուսանողական նստարանների ներս կրթության, գիտության են նվիրել իրենց անձերը: Կարող եք պարկեռացնել իմ վիճակը. քարոզում ենք որպես առաքնորդ ունենալ հայրենասիրական ոգի, ունենալ նվիրում դեպի հայրենիքը և դեպի ժողովուրդը, և հիմա այդ ոգու դրսևորման առջև ենք կանգնած և պետք է վճիռ կայացնել: Անշուշտ ժամանակ էր պետք շահել, նվիրական էր նրանց զգացումը և շատ նուրբ էր պահը: Խնդրեցի, որ մի քանի օր համբերեն, որպեսզի ես կարողանամ իրենց խնդրանքը ներկայացնել Հայոց Հայրապետին՝ Վազգեն Ա Կաթողիկոսին, անշուշտ բացատրելով նաև, որ նվազ կարևոր

մարտ ու պայքար նրանք չեն մղում Սևանա մենաստանում, որ վաղը նրանք, ավարտելով կրթական այդ հաստատությունը, լինելու են մարտիկները արի, քաջ, նվիրյալ մարտիկները մեր ժողովրդի հոգևոր պայքարում: Այո, եղավ խորհուրդը նաև Վազգեն Վահագնի Հայրապետի, որը փոխանցեցի սաներին, և սաները, կարծես թե, մեղքի զգացումից փոքր-ինչ թեթևացած, շարունակեցին ուսման իրենց ընթացքը Սևանի Վազգենյան Դպրանոցում: Այսօր, երբ տասը տարիներն են բոլորվել, լրացել, և մենք նշում ենք տասնամյակը Վազգենյան Դպրանոցի, քնականաբար իմ հոգին լցված է անհուն երախտագիտության զգացումով, և ես ուզում եմ մեկ առ մեկ Իմ շնորհակալությունը հայտնել, Իմ երախտագիտության զգացումները բերել յուրաքանչյուրին, որոնք իրենց ներդրումն ունեն Սևանի Վազգենյան Դպրանոցի կյանքում, մեր սիրելի դասախոսներին, որոնցից ամենաապագին այդ հաստատության՝ պրն Մանդրո Բեհբուդյանին, ուրախ եմ այս առիթով ծանուցելու, որ Հայրապետական Մեր որոշմամբ, Մեր տնօրինությամբ նրա վաստակը կրթական ասպարեզից ներս արժանացնում ենք «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» բարձրագույն շրանշանին: Մեր շնորհակալ զգացումները և օրհնությունն ենք ուզում բերել բոլոր տեսույններին, որոնք մնայուն կերպով, առանց հանգստի օրեր ունենալու, գիշեր և ցերեկ ուսանողների հետ ապրեցին ամենահամեստ, ամենադժվարին պայմաններում, որովհետև իրենք էլ այդ տեսիլքն ունեին և այդ նրազը և նվիրված էին այն կյանքի կոչելու, իրականություն դարձնելու: Շնորհակալությունս բոլոր պաշտոնյաներին, որոնց ներդրումը նվազ չէ հաստատության կայացման սուրբ գործում: Իմ օրհնությունն ու գնահատանքն եմ ուզում բերել Միացյալ Լուսինացիների Եյու Ջեռսի քաղաքում ապրող բարերարներին՝ գլխավորությամբ Տ. Գառնիկ քին Հայաջյանի: Իմ սղոթքներում անուն առ անուն ես հիշում եմ նրանց:

Մեր մասնավոր գնահատանքը և անհուն սերն ու օրհնությունն ենք ուզում բերել ներկա տեսչական կազմին՝ գլխավորությամբ մեր սիրելի Բագրատ Հայր Սուրբի, իր օգնական և երկարամյա տեսուչ Տ. Միևասին:

Վերջում ես ուզում եմ գնահատանքս ուղղել այս երեկոյի կազմակերպիչներին, որը նույնպես գլխավորում է մեր սիրելի Հայր Սուրբը՝ Հայր Բագրատը, որի մերածումն էր և որի նախաձեռնությունն էր նշել հոբելյանական տասը տարին Սևանա Վազգենյան Դպրանոցի:

Ուզում եմ շնորհակալություն և օրհնություն բերել ձեզ բոլորիդ, ձեր մասնակցության համար, այստեղ, ելույթ ունեցող անձանց և նաև ձեր ներկայությամբ մեզ ողի, խանդավառություն պարգևող մեր բարեպաշտ զավակներին: Ես կարծում եմ, որ այս երեկոն պիտի նոր լիցք հաղորդի Սևանի Վազ-

գենյան Դպրանոցի դասախոսներին, սափերին, որ շարունակեն իրենց ոնթացքը վառ գիտակցությամբ: Իրենց որպես եվիդյուս հիկոդեցականներ, որպես հավատարմոր անձներ՝ ծառայող մեր ժողովրդին, իրենց ծառայությունը պիտի բերեն զոհաբերության գիտակցությամբ: Եվ ես հավատում եմ, որ այդ ծառայությամբ մենք կարող ենք փոխել փերը մեր Եկեղեցու, այն մոտեցնել մեր ժողովրդի հոգուն, Եկեղեցին վերստին դարձնել սիրելի մեր ժողովրդի, և հյուսել նորօրյա փառքը 1700-ամյա մեր Եկեղեցու:

Թող Աստված օրհնի մեզ ամենքիս, Իր հովանավոր Աջի ներքո պահի ու պահպանի և առաջնորդի դեպի նոր երազների իրականացում, որ է՝ շինություն մեր հայրենիքի և բարօրություն մեր հավատացյալ, բարեպաշտ ժողովրդի:

Վեհափառ Հայրապետը Սեանի Վազգենյան դպրանոցի նախկին և այսօր արդեն հոգևորականներ ձեռնադրված 15 շրջանավարտների հանձնեց ավարտական վկայականներ:

Վեհափառ Հոր օրհնության խոսքից հետո հորեյանական հանդիսությունը եզրափակեց դպրանոցի երգչախումբը՝ կատարելով «Հայրապետական օրհներգ»-ը և «Էջ Միածինն ի Տօրե» շարականը:

ՎԱՇԻԿ ՈՒՐԱՐԱԿԻՐ ՋԱՐԳԱՐՅԱՆ
Սեանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի
Ե լսարանի սան

ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՉԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոս, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառի բարձր կարգադրությամբ և փնտրիկությամբ 2000 թվականի դեկտեմբերի 25-ին՝ Ս. Մտեփանոս Նախավկայի փոխին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում սարկավագության աստիճան շնորհվեց փասնվեց ճեմարանական ուսանողի (փասնչորս սան՝ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր ճեմարանից և երկու ուսանող՝ Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցից), որոնք, Աստված, ժողովրդի առջև և իրենց իրենց բոլորանվեր ծառայության սրբազան ուխտը կստարեիով, եկան լրացնելու առաքելափնին և լուսավորչահաստար Մայր Աթոռի միաբանության շարքերը:

Կատարվելիք արարողության ուրախալի հուզումը մեզ՝ ճեմարանի ողջ պաշտոնեությանն ու ուսանողությանը, իսկ առավելաբար ձեռնադրվողներին պատվել էր դեռևս նախորդ օրվա երեկոյան ժամերգության ընթացքում, երբ ուրախ կրելու իրավունք և կիսասարկավագության աստիճան շնորհվեց սարկավագական քննությունները հաջողությամբ հանձնած փասնվեց սարկավագներին:

Հաջորդ օրվա առավոտյան արդեն այդ հուզումին խառնվեց նաև ներկա հավաքացյալ ժողովրդի ցնծությունը: Սա ամենևին էլ պատահական երևույթ չէ, որովհետև Առաքելական Սուրբ Եկեղեցու յուրաքանչյուր անդամ քաջ գիտակցում է, թե որքանով են այսօր կարևորվում ձեռնադրություններն ու ծառայասիրության, օրինապահության և, որ ամենակարևորն է, հաստատվում հավաքի ոգեղեն կառույցն իրենց մեջ հոգևորականների նոր սերնդի պատրաստակամությունը: Բազմամյա արգելքներից, գրկանքներից, նաև անարարքերության պատճառով մեր ազգի հոգևոր անդամների խոպան դառնալուց հետո, մեր առօրյայի, կենցաղի մեջ են ներխուժել բազմաթիվ և բազմապիսի «վարձկան» մշակներ՝ այլազան աղանդավորներ, որոնք մի ձեռքում Ս. Գիրքն ունենալով, այդ նույն Գրքի պատիժներն անգիտաբար անուսելով՝ մյուս ձեռքով հայ քրիստոնյա ազգը և հայ քրիստոնյա անհարին կործանող «որոմի»՝ մոլոր վարդապետությունների սերմն են ցանում:

Այո՛, սննդ ալիսի լինի մեր բոլորիս ուրախությունը, որովհետև ի հակազդումն վերը նշված սխալ երևույթի, Առաքելական մեր Մայր Եկեղեցու արգասաբեր արգանդը այսօր փալիս է Եկեղեցական Հայրերի ճշմարիտ ուսմունքով սնված հոգևորականներ՝ հայ ազգի հոգևոր հացի քաղցն ու Ավետարանի Կենսաջրի ծարավը հագեցնելու համար: Այս մարածումների և գիտակցության ուրախացնող և ջերմացնող մթնոլորտն էր փիրում դեկտեմբերի 25-ի առավոտյան, երբ աւրբ գրային ընթերցումներից

առաջ Վարդան Հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Եղիշեն ավագ բաժանա Սարգսյանի ուղեկցությամբ ընծայացուները ծնկաչոք առաջնորդվեցին դեպի Մայր Տաճարի Սուրբ Հովհաննես Մկրտչի խորան: Օրվա պատարագիչ և ձեռնադրող եպիսկոպոս, Մնգիսայի հայոց թեմի առաջնորդ Տ. Նաթան եպիսկոպոս Հովհաննիսյանի և խաղաղության Տ. Եղիշեի փոխնիփոխ կարդացվող աղոթքներից և սաղմոսներից հետո Եկեղեցուն ծառայելու ծանր, բայց բաղդ լծի տակ: Իբրև կրկնօրինակը Գործը Առաքելոցում նկարագրված յոթ սարկավագների ձեռնադրության՝ Նաթան Սրբազանը, ձեռքը սարկավագների գլխին դնելով, նրանց փոխանցեց Սուրբ Հոգու ստեղծագործ կյանքի մոտ շնորհները՝ տալով սարկավագության աստիճան: Սա թերևս առավել հուզիչ պահն էր ձեռնադրվողների համար, երբ իրականացավ ճեմարանական նստարանների երև փայփայած իրենց նվիրական նրազանքը՝ Քրիստոսի նորոգիչ ներկայությունն ունեցող սկիհի վերաբերումը կատարելու, Ավետարանն ընթերցելու և եկեղեցում խնկարկություն կատարելու:

Հավարտ ձեռնադրության, պատարագիչ Սրբազան Ա. Սեդանից քաղող խոսեց, որի ընթացքում օրվա ու ձեռնադրության խորհուրդն ամբողջացնող պահին պատշաճ իր խոսքում ասաց.

«Երանի՜ նրանց, որ հալածվում են արդարության համար, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը»:

Հիսուս Քրիստոսի մեր Փրկչի երանիների մեջ եղած այս կարևոր պատգամը բոլոր ժամանակների համար մնում է պայծառական և բոլոր ժամանակների համար ունի իր խոր իմաստը: Երանի՜ նրանց, որ արդարության համար պիտի հալածվեն: Ի՜նչ արդարության համար, որն է արդարությունը, կարծես մենք սկզբից պետք է փրկությունը այդ, հետո, երբ կիմանանք, թե իրապես ի՜նչ արդարության համար պետք է հալածվենք, այդ հալածանքից հետո արժանանանք Աստուծո Արքայությանը:

Միդելի՝ ժողովուրդ մեր, շատ անգամ մարդիկ իրենց ցանկացածը իբրև արդարություն են պատկերացնում, շատ անգամ շատ-շատերը իրենց մտացածին արդարության պարծառով հալածվածի ներքին զգացմունքն ունեն, բայց խորքը արդարության մենք՝ քրիստոնյաներս, փնտրում ենք մի տեղ. Քրիստոսի տված պատգամների մեջ, Ս. Գրքի տված ճշմարտության մեջ և, ի վերջո, եթե ասում են՝ «Երանի՜ որ հալածյալ պիտի լինեն արդարության համար», նույն է, թե ասեն՝ երանի նրանց, որ կհալածվեն Հիսուսի անվան համար, բանգի Հիսուս Քրիստոս մեզ համար արդարությանը արդարությունն է: Նա է մեզ տալիս ճշմարտությունը այս արդարության, և, բնականաբար, այդ ճշմարտության հետևողները ճշմարիտ քրիստոնյա լինելու համար հալածանքի ենթակվել են և այսօր էլ պիտի ենթակվեն: Եթե մարդը ցավածի նրան, ապա մշտադառն և ամեն մի քրիստոնյային անընդհատ խաբկանքի մեջ պահելու համար մեր աներևույթ թշնամին, որ տափառա ենք կոչում, կհալածի մարդուն,

կհալածի մարդուն նաև օտարահավաքը՝ օտարադավանը: Քրիստոսի արդարության համար, սակայն, մենք մի ճշմարտություն ունենք, արդարության համար մեր հալածանքով է, որ մեր փրկության ճանապարհն է կերպովում:

Այսօր Կոնստանտինոս Նախավկա մեծ սարկավագի, Նախավկա, որովհետև առաջին մեծ մարտիրոսը եղավ հենց իսկ արդարության հալածանքների պատճառով, Նախավկա՝ որովհետև նա իր հավաքով վկայեց աշխարհին Հիսուսի ճշմարտությունը, նա վկայեց փրկության ճանապարհը և դրա համար ենթարկվեց հալածանքի. քարկոծվեց, բայց մինչ իր ֆիզիկական մահը նա չորացավ Քրիստոսին: Սրբեփանեսոս Նախավկա մեծ առիթը մեծ է իր իսկ հավաքով, գորավոր է իր իսկ խոնարհությամբ, բարձր է իր իսկ հեզությամբ: Սարկավագ, սպասավոր Աստուծո սեղանին, Աստուծո ժողովրդին, ծառա Հիսուսի և նրա հետևորդ, որով և ինքն իր խոնարհությամբ բարձրանում է, որով և ինքն իր հավաքով գորանում է: Եվ սա է մեզ համար ճշմարիտ սպասավորությունը: Այսօր մենք ուրախությունն ունենք ոչ միայն Կոնստանտինոս Սրբեփանեսոս մեծ, սուրբ վկայի Կոնստանտինոսի, այլև այդ Կոնստանտինոսի մեր հայաստանյայց Սուրբ Եկեղեցվո և Մայր Աթոռի մեծ Կոնստանտինոսի 16 սաներ հոգևոր կրթական հաստատությունների: Այս իսկ պահից նրանք իրենց ուրիշ դրոշմներ երկար, զովարին մի ճանապարհին, որ է՝ սպասավորությունը Քրիստոսի, Նրա Եկեղեցվո, Նրա Ս. Սեղանին ու Նրա ժողովրդին:

Մեր եղբայրության շարքերն այսօր 16 նոր սարկավագ եղբայրներով ավելացան, մեր ուժերն այսօր 16 նոր սարկավագների ուժերով ավելի գորացան, մեր հավաքըն ավելի մեծացավ ու հաստատուն դարձավ:

Եվ այս պահին, մեր աղոթքների հետ միասին, մեր մաղթանքն ենք ուղղում նորին, նորոգ ձեռնադրյալ սարկավագ մեր եղբայրներին, որ մշտապես հիշեն, թե ինչ Կոնստանտինոսը նրանք իրենց ուսին առան ուրարը, որ է նշանը Քրիստոսի քաղցր լուծի, որպեսզի նրանք մշտապես հիշեն, թե ինչ է խաչը այս ուրարի վրա, որով Հիսուս առաջ, թե՛ Ով ուզում է գալ Իմ ետևից, թող խաչն իր ուսին առնի ու գա: Եվ եթե մեկը մեկ անգամ խաչը ուսին առավ, այդ խաչն իրավունք չունի գետնին դնելու. խաչը ուրացողը ձեռքին էլ կուրանա, ձեռքին ուրացողը՝ հայրենիքն էլ կուրանա, հայրենիքն ուրացողը՝ ինքն իր հոգին կուրանա: Եվ հիշենք, հիշենք, եղբայրներ, հիշենք, գավակներ, որ այս խաչը ձեր փրկության խաչն է և ձեր ժողովրդի փրկության խաչն է: Եթե երբեք դուք ձեր ծառայության մեջ գլուխը անկարգ, եթե դուք ձեր ծառայության մեջ թերանաք, իմացնե՛ք ու լսե՛ք այդ վայրկյանին խոսքը Հիսուսի՝ Ես ծարավի էի և ինձ ջուր չգլխեցիք, Ես քաղցած էի և դուք ինձ հաց չգլխեցիք, որով նրա աշակերտներն ասացին՝ Երբ, Տեր, ինչպե՛ս...: Հիսուս ասաց, Եթե որևէ մեկ ծարավածին ջուր չգլխեցիք, ուրեմն Ինձ չգլխեցիք, եթե որևէ մեկ քաղցածին հաց չգլխեցիք, ուրեմն Ինձ չգլխեցիք, եթե որևէ մեկ անօթևանի օթևան չգլխեցիք, ուրեմն Ինձ չգլխեցիք, եթե որևէ մեկի համար չաղոթեցիք, ուրեմն Հիսուսի խոսքը չկատարեցիք...:

Մեր աղոթքն ու պատգամն է, որ դուք ձեր ծառայության մեջ երբեք չթերանաք, և երբեք ձեր հոգու ականջը չսի Հիսուսի խոսքը, որ Դուք Ինձ ծարավ թողեցիք, որ

դուք Ինձ քաղցած թողեցիք: Եվ ես վստահ եմ, որ Հայաստանյայց մեր Եկեղեցու դարավոր շունչի մի՛ մասնիկը ձեր մեջ առնելով՝ պիտի առաջ գնաք և պիտի ձեր սպասավորության մեջ անթերի մնաք:

Վեհափառ Տեր.

Այս պահին, իմ որդիական ջերմ զգացմունքներով գալիս եմ շնորհավորելու Ձերդ Սրբությանը, Վեհափառ Տեր, գի բանակը մեր Եկեղեցվո մեծանում է և գործառնում: Շափանում են ձեր զավակները, իսկ որքան շագր զավակ ընտանիքի մեջ, այնքան ուրախություն, այնքան գոռություն:

Շնորհավորություններս եմ Ձեզ բերում, գի Մայր Աթոռը նոր գինվորյալներ և սպասավորներ ունեցավ, և մաղթում եմ առ Աստված, որ նրանք հստապազ Ձեր հայրական օրհնության ներքո մեծանան ու գործառնան թե՛ մարմնապես, և թե՛ հոգեպես, թե՛ հավատքով, և թե՛ հույսով: Եվ մենք բոլորս մեր աչքերով կտեսնենք, կտեսնենք հաղթանակը ոգու և ոգեկանության ամենայն մարմնականի և երկրայինի դեմ: Մենք կտեսնենք մեր լուսի պայծառության հաղթանակը, որ Գրիգոր Լուսավորիչ բերեց Հայաստան աշխարհ:

Թող Տերը օրհնի Մայր Աթոռը, թող Տերը օրհնի և անսասան պահի Հայրապետին Հայոց, բոլոր սպասավորներին և մանավանդ ձեզ, այսօր դալուկ ուրբերի վրա կանգնած մեր նոր սարկավազ եղբայրներին, և մեր հարազատ հավատավոր ժողովրդին, որովհետև որքան շատ են ձեր աղօթքները, այնքան գորավոր է մեր օրհնությունը, որքան շատ է ձեր օրհնությունը մեզ, այնքան գորավոր է մեր Եկեղեցին:

Թող Տիրոջ օրհնությունը հանապազ մեզ վրա լինի, և Ս. Հոգու շնորհները մշտապես գործացնեն մեր ազգը, մեր Եկեղեցին և մեր երկիրը. ամեն»:

Մուրբ Պապարագից հետո փասնվեց սարկավազներ, առաջնորդությանը Նաթան Սրբազանի, Հայր Արտակի և Տեր Եղիշեի, ներկայացան Վեհափառ Հայրապետին՝ նրա իշխանական օրհնություններն ու հորդորները ստանալու:

Խոսքով սարկավազ Նսայան

Ծնվել է 1976 թ. Էջմիածին քաղաքում:

1983-1989 թթ. սովորել է տեղի Վահան Ռշտունու անվան № 11 միջնակարգ դպրոցում:

1991-1993 թթ. սովորել է Ներսիսյան վարժարանում:

1993 թ. ընդունվել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոց:

1997-1999 թթ. ծառայել է Ազգային բանակում:

1999-2000 թթ. շարունակել է ուսումը Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2000 թվականից սովորում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Գևորգ սարկավազ Մակարյան

Ծնվել է 1976 թ. Երևան քաղաքում:

1982-1992 թթ. սովորել է տեղի Սամվել Գևորգյանի անվան № 194 միջնակարգ դպրոցում:

1992-1994 թթ. սովորել է Երևանի «Ռեֆերենտ-գործավարներ» ուսումնարանում:

1995 թվականից սովորում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Հարություն սարկավազ Տերտերյան

Ծնվել է 1976 թ. Էջմիածին քաղաքում:

1982-1992 թթ. սովորել է տեղի № 2 միջնակարգ դպրոցում:

1992-1995 թթ. սովորել է Շիրակի թեմի Հոգևոր Ընծայարանում:

1995 թվականից սովորում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Տիգրան սարկավազ Միրզախանյան

Ծնվել է 1977 թ. Արմավիրի մարզի Արտիմեդ գյուղում:

1984-1994 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:

1995-2000 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2000 թվականից սովորում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Արթուր սարկավազ Հովհաննիսյան

Ծնվել է 1977 թ. Երևան քաղաքում:

1984-1994 թթ. սովորել է տեղի Սամվել Գևորգյանի անվան № 194 միջնակարգ դպրոցում:

1995-2000 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2000 թվականից սովորում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Արսեն սարկավազ Գամաղելյան

Ծնվել է 1977 թ. Էջմիածին քաղաքում:

1984-1990 թթ. սովորել է տեղի Խ. Աբովյանի անվան № 4 միջնակարգ դպրոցում:

1991-1995 թթ. սովորել է Էջմիածնի Ներսիսյան վարժարանում:
1995-ից սովորում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Գևորգ սարկավագ Սողոմոնյան

Ծնվել է 1977 թ. Էջմիածին քաղաքում:

1983-1992 թթ. սովորել է Կոնստանտին Գրաբսկի անվան № 9 միջնակարգ դպրոցում:

1992-1995 թթ. սովորել է Ծիրակի թեմի Հոգևոր Ընծայարանում:

1995-ից սովորում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Արթուր սարկավագ Կարապետյան

Ծնվել է 1978 թ. Երևան քաղաքում:

1985-1995 թթ. սովորել է Կոնստանտին Գրաբսկի անվան № 63 միջնակարգ դպրոցում:

1986-1988 թթ. սովորել է Սուխումիի (Աբխազիա) Հովհաննես Թումանյանի անվան հայկական միջնակարգ դպրոցում:

1995-ից սովորում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Տիգրան սարկավագ Բաղդումյան

Ծնվել է 1978 թ. Երևան քաղաքում:

1985-1995 թթ. սովորել է Կոնստանտին Գրաբսկի անվան № 177 միջնակարգ դպրոցում:

1995-2000 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2000-ից սովորում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Դավիթ սարկավագ Միքայելյան

Ծնվել է 1978 թ. Արարատի մարզի Շահումյան գյուղում:

1985-1995 թթ. սովորել է Կոնստանտին Գրաբսկի անվան № 177 միջնակարգ դպրոցում:

1995-ից սովորում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Սամվել սարկավագ Խանոյան

Ծնվել է 1978 թ. Գորիս քաղաքում:

1984-1995 թթ. սովորել է Կոնստանտին Գրաբսկի անվան № 3 միջնակարգ դպրոցում:

1995-ից սովորում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Հովհաննես սարկավագ Ամիրյան

Ծնվել է 1978 թ. Արմավիրի մարզի Առաքաշեն գյուղում:

1985-1995 թթ. սովորել է Կոնստանտին Գրաբսկի անվան № 177 միջնակարգ դպրոցում:

1995-ից սովորում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Վարդան սարկավազ Իսախանյան

Ծնվել է 1979 թ. Էջմիածին քաղաքում:

1985-1995 թթ. սովորել է Զվարթնոցի Զորավար Անդրանիկի անվան № 12 միջնակարգ դպրոցում:

1995-ից սովորում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Վարդան սարկավազ Մովսիսյան

Ծնվել է 1979 թ. Էջմիածին քաղաքում:

1986-1998 թթ. սովորել է Կոնի Ռ. Պատկանյանի անվան № 9 միջնակարգ դպրոցում:

1995 թվականից սովորում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Վիգեն սարկավազ Շիրվանյան

Ծնվել է 1979 թ. Էջմիածին քաղաքում:

1986-1991 թթ. սովորել է Զվարթնոցի Զորավար Անդրանիկի անվան № 12 միջնակարգ դպրոցում:

1992-1996 թթ. սովորել է Էջմիածնի Ներսիսյան վարժարանում:

1996-ից սովորում է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

Հովհաննես սարկավազ Ռուշանյան

Ծնվել է 1979 թ. Արմավիրի մարզի Արտիմնո գյուղում:

1986-1996 թթ. սովորել է Կոնի միջնակարգ դպրոցում:

1996-ից սովորում է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

ԱՐՏԱԿ ԴՊԻՐ ԽԱՇԻԿՅԱՆ

Գևորգյան Հոգևոր Ճեմարանի Ե լսարանի սան

ԱՎԱՐՏԱՃԱՌԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Անգնադ դարաշրջանի վերջին ամիսներից հոկտեմբերն ու նոյեմբերը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կյանքում, առավել ևս Գևորգյան Հոգևոր Ճեմարանի պատմության մեջ, թողեցին իրենց անկորնչելի հետքը, քանի որ ճեմարանավար 21 սարկավագներ հանդես եկան իրենց ավարտաճառերի պաշտպանությամբ, իրենց ամբարած գիտելիքներով հաշվելու լույս իրենց վստահված այն փոքր ավանդի համար, որը մոտ ապագայում, համաձայն փոքրիկ ավանդի հանդես դրսևորված հավատարմության, այլևս փոխարինվելու է չափազանց մեծ ժառանգությամբ։ «Ազնի ծառայ եւ բարի, զի ի փոքուդ հաւաքարիմ եղեր, լիջիր իշխանութիւն ունել ի վերայ քաւսն քաւսի» (Ղալ. ԺԹ 17)։

Սույն թվականի հոկտեմբերի 10-ը և 27-ը տրախտության ու ցնծության օրեր էին Մայր Աթոռում և հարկապես Գևորգյան Հոգևոր Ճեմարանում, քանի որ երկարապար ընդմիջումից հետո Ճեմարանի գեղեցկագարդ սրահում տեղի ունեցավ 1998 և 1999 թթ. փաստը շրջանավարտ սարկավագների ավարտաճառերի պաշտպանություն։

Հոկտեմբերի 10-ին ավարտաճառերի երապարակային պաշտպանությամբ հանդես եկան Վիգեն սրկ. Ղազարյանը («Մարթեոս վրդ. Զուդայեցու քարոզները», գիտական ղեկավար՝ Հակոբ Բյուսեյան), Արտակ սրկ. Թումանյանը («Եղիազար Կաթողիկոս Այնթափցի», գիտական ղեկավար՝ Հրաչյա Միրզոյան), Վահե սրկ. Վահունին («Պեպրոս արքեպիսկոպոս Բերդումյան-Աղամալյան Նախիջևանցու «Կշիռ արդարության»», գիտական ղեկավար՝ Պողոս խաչատրյան), Արման սրկ. Սարգսյանը («Գրիգոր Խաթեցու Հայսմավուրքն ըստ Էջմիածնի մատենադարանի ձեռագրերի», գիտական ղեկավար՝ Լարդան Դևրիկյան), Մանվել սրկ. Շաբադյանը («Հրեշտակաբանություն», գիտական ղեկավար՝ Տ. Պարզն արքեպս. Մարտիրոսյան) և Միքայել սրկ. Մելիքյանը («Հուսիսիսիանոս կայսեր կրոնական քաղաքականությունը և Կ. Պոլսի Ե Տիեզերական ժողովը», գիտական ղեկավար՝ Ավերիս Զալաշյան)։

Իսկ հոկտեմբերի 27-ին իրենց ավարտաճառերի պաշտպանությամբ հանդես եկան Սամվել սրկ. Կիրակոսյանը («Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Էջմիածին» շաբաթաթերթը, գիտական ղեկավար՝ Սանդրո Բեքբուդյան), Մկրտիչ սրկ. Ավագյանը («Սուրբ Պատարագը և Հովհաննես Արճիշեցու «Պատարագի մեկնությունը»», գիտական ղեկավար՝ Հակոբ Բյուսեյան), Հայկ սրկ. Պռոշյանը («Խոսքով Անձնացու «Պատարագի մեկնություն» աստվածաբանությունը», գիտական ղեկավար՝ Պողոս խաչատրյան) և Հրայր սրկ. խաչատրյանը («Պեպրոս արքեպս. Բերդումյանի «Տա-

րեկան քարոզների (Մեծ պահքի մասը)», գիտական ղեկավար՝ Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյան):

Յուրաքանչյուր պաշտպանությունից առաջ հանձնաժողովը, որի անդամներն էին Գևրջ. Տ. Շահն արքեպս. Աննյանը, Գևրջ. Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը, տիարք Պողոս Խաչատրյանը, Հրաչյա Միրզոյանը, Հակոբ Զյոտեյանը, Գնել Գրիգորյանը, ներկայացնում էր իր կարծիքը:

«Մատթեոս վրդ. Զուդայեցու քարոզները» ավարտաճառը աչքի էր ընկնում գիտական բարձր մակարդակով: Վիզեն սրկ. Ղազարյանը մատենագիտական տվյալների հիման վրա ճշտել էր նախ Մատթեոս վրդ. Զուդայեցու քարոզների բանակը (29), ապա Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրերը համեմատելով կազմել դրանց բնական բնագիրը:

Ավարտաճառերի մեծ մասը գրված է նյութերի պատշաճ գիտական մակարդակով, եղած գրականության հնարավոր ընդգրկմամբ, բնագրերը բնական փառքով ներկայացնելու միտումով, մի հանգամանք, որ արժեքավոր է դարձնում ներկայացվող ավարտաճառը: Այս խմաստով գտվելի է Վահն սրկ. Վախունու ավարտաճառը, ուր յոթ ձեռագրերի հիման վրա կազմված է Պետրոս Բերդումյանի «Դժիմ արդարության» աստվածաբանական-խմաստասիրական երկի բնագիրը: Այդ բնական բնագիրը եկափ ունենալով ավարտաճառի հեղինակն անում է իր վերլուծությունները և նգրակացությունները:

Հայսմավուրքի խմբագրությունների մեջ նշանակալի տեղ է գրավում Գր. Նյաթեցու Հայսմավուրքը, որին և իր ուսումնասիրությունն է նվիրել Արման սրկ. Սարգյանը: Հեղինակի կազմած համեմատական տախտակով հնարավոր է լինում պարկերացում տալ արդի խմբագրության զարգացման ընթացքը: Ճանկալի էր, որ հեղինակը ամբողջությամբ չհիմնվել մինչև 1999 թ. հրատարակված գիտական գրականության վրա, այլ ներառանգումները հիմնվելին նաև սեփական հետազոտությունների վրա:

Մանվել սրկ. Շաքարյանը իբրև ավարտաճառի նյութ ընտրել է հրեշտակաբանությունը, մի նյութ, որի մասին եղած գրականությունը կամ աստիճանները ցարքոցիվ են: Ավարտաճառի հեղինակը ի մի է բերել արդի ժամանակների հայ և օտար հեղինակների կարծիքները, մասնավորապես Ազաթանգեղոսի, Եզնիկ Կողբացու, Գրիգոր Տաթևացու և Եկեղեցու հայրերի՝ հրեշտակաբանությանը վերաբերող և նաև Աստվածաշնչի դրույթները:

Վիզեն սրկ. Ղազարյանի ավարտաճառը քննող հանձնաժողովը գնահատել է «գերազանց», իսկ մյուսներինը՝ «լավ», որ ինքնըստինքյան ավարտաճառերը ներկայացրած սարկավագների բանիմացության, տրամաբան աշխատանքի, ինչպես նաև գիտական ղեկավարների բարեխիղճ աշխատանքի արտահայտությունն է:

Հաջորդ օրը «լավ» գնահատականի արժանացավ միայն Հայկ սրկ. Պոռչյանի ավարտաճառը, իսկ մյուսները՝ «բավարար»:

* * *

Դեկտեմբերի 16-ին և 27-ին Գևորգյան Հոգևոր Ծննդարևում շարունակվեց 1998-1999 թթ. ուսումնական տարվա շրջանավարտ սարկավագների ավարտաճանոցի պաշտպանությունը:

Դեկտեմբերի 16-ին իրենց ավարտաճանոցի պաշտպանությամբ հանդես եկան Վահե սրկ. Հովսեփյանը («Ս. Վահան Գողթնացու վկայաբանությունը», գիտական ղեկավար՝ Պողոս Խաչատրյան), Խաչատուր սրկ. Տաշյանը («Ներսես Ե Աշտարակեցի Կաթողիկոսի կյանքն ու գործունեությունը», գիտական ղեկավար՝ Տ. Եղիշե ա. քեն. Սարգսյան), Արսեն սրկ. Բարսեղյանը («Խրատը ժամարեղեաց», գիտական ղեկավար՝ Տ. Մակար վրդ. Հովհաննիսյան), Արտակ սրկ. Սահակյանը («Ս. Գրիգոր Նյուսազցին և նրա «Մովսեսի կյանքը» երկը», գիտական ղեկավար՝ Տ. Եզնիկ եպս. Պեպրոսյան) և Բաբկեն սրկ. Նանյանը («Ս. Հոգու եզրաբանությունը և «բխում» եզրի արտացոլումը հայ դավանաբանական աստվածաբանության մեջ»), իսկ դեկտեմբերի 27-ին հանդես եկան Մամիկոն սրկ. Ավետիսյանը («Էջեր Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերության պատմությունից», գիտական ղեկավար՝ Սանդրո Բեհբուդյան), Աշոտ սրկ. Ղազարյանը («Մայր Աթոռ Ս. Էջմիածնի քաղաքանը 1771-1800 թթ.», գիտական ղեկավար՝ Արտաշես Մարթնոսյան), Սահակ սրկ. Գասպարյանը («Այրիվանք կամ Գեղարդավանք», գիտական ղեկավար՝ Արտաշես Մաթևոսյան), Վաղարշակ սրկ. Ծափուդյանը («Խոր Վիրապի վանքը», գիտական ղեկավար՝ Վարդան Դերիկյան), Արսեն սրկ. Պարտուրյանը («Ռուսաստանի հայկական գաղթօջախները և ռուսահայոց թեմի կազմավորումը մինչև 18-րդ դարի 2-րդ կեսը», գիտական ղեկավար՝ Ավետիս Հարությունյան) և Արամ սրկ. Մալխասյանը («Էջեր խորհրդային կարգերի օրոք Հայ Եկեղեցու և պետության փոխհարաբերությունների պատմությունից», գիտական ղեկավար՝ Սանդրո Բեհբուդյան):

Այս անգամ ևս, ինչպես նախորդների ժամանակ, յուրաքանչյուր պաշտպանությունից առաջ քննիչ հանձնաժողովը ներկայացնում էր իր կարծիքը:

Համաձայն քննիչ հանձնաժողովի հայտնած կարծիքների, բոլոր ավարտաճանոցի հեղինակները զրոսեորեն են բանասիրական հմտություն, կարողացել են փաստերի համադրությամբ կարարել ճիշտ և համոզիչ եզրահանգումներ: Միով բանիվ, շրջանավարտ սարկավագները հիմնականում կարողացել են հաղթահարել իրենց ընտրած նյութերը: Այնուհանդերձ, սակայն, պաշտպանության ներկայացված աշխատանքները, ըստ քննիչ հանձնախմբի, գերծ չէին նաև թերություններից: Դրանք ամենին էլ չեն նսեմացնում ներկայացված ուսումնասիրությունների արժեքը, ուստի և քննիչ հանձնաժողովը երաշխավորում է բոլոր աշխատանքների հրապարակային պաշտպանությունը:

Միջնադարյան հայ մարենագրության ամենահարուստ ժանրերից մեկը եղել է վարքագրությունը, որը թեև վաղուց արժանացել է ականավոր հայագետներից շարքի ուշադրությանը, սակայն պարզվում է, որ դեռ կան բազմաթիվ նախադրականեր,

որոնց կյանքը, գործն ու նրանց մասին ստեղծված գրական ժառանգությունը ինչպես հարկն է, չեն ուսումնասիրվել, չեն ստեղծվել նրանց հիշատակին արժանի գիտական աշխատություններ: Այդօրինակ նախատակներից է պարամական Հայաստանի Գողթն զավառի իշխանական տոհմի զավակ Ս. Վահան Գողթնացին:

Սույն ավարտաճառի հեղինակ Վահն սրկ. Հովսեփյանն իր առջև դրել է մի խնդիր՝ ուսումնասիրել Ը դարի սուրբ նախարակ Ս. Վահան Գողթնացու վկայաբանությունը: Ի պատիվ երիտասարդ հեղինակի այնքը է ասել, որ բարեխղճությամբ ուսումնասիրելով Ս. Վահան Գողթնացու մասին եղած ձեռագիր ու տպագիր աղբյուրները, ինչպես նաև հրապարակի վրա առկա գիտական գրականությունը, այդ թվում և վերջին տարիներին հրապարակվածները, ընդհանուր առմամբ կարողացել է ստեղծել հաջողված աշխատություն:

Խաչատուր սրկ. Տաշյանն իր ավարտաճառի նյութ է ընտրել «Ներսես Ե Աշտարակեցի Կաթողիկոսի կյանքն ու գործունեությունը»: Իր ավարտաճառի առաջաբանում հեղինակը ուրվագծում է 19-րդ հարյուրամյակում հայոց պարամության կարևորագույն իրադարձությունները, որոնց հենքի վրա նախանշում դարաշրջանի վեց տասնամյակների պարամությունը՝ անխզելիորեն կապված Ներսես Աշտարակեցու անձի և գործի հետ: Այնուհետև նա բավականին հանգամանակից պարամական ակնարկով ներկայացնում է Ներսես Աշտարակեցուն անդրադարձած հեղինակներին և ցույց տալիս, որ նա միանշանակ չի գնահատվել ոչ իր ժամանակակից գործիչների, և ոչ էլ հետագա ուսումնասիրողների կողմից: Այս առումով հետաքրքիր են հեղինակի դիտողությունները հայ պարամականների՝ Ներսես Աշտարակեցուն տված գնահատականների վերաբերյալ:

Հեղինակը հիշատակում է իր ուսումնասիրության թեմային առնչվող գրականությունն ու սկզբնաղբյուրները, հիմնավորում թեմայի կարևորությունն ու արդիականությունը:

Բարկեն սրկ. Նանյանի ավարտաճառի թեման է «Ս. Հոգու եզրաբանությունը և «բխում» եզրի արտացոլումը հայ դավանաբանական աստվածաբանության մեջ»: Սուրբ Հոգու բխման վարդապետությունը հայ աստվածաբանության ոչ խորը ուսումնասիրված հարցերից է: Այս իմաստով համարձակ քայլ է արել աշխատասիրողը՝ այդ նյութի վերաբերյալ պարամաստելով իր դիպտմային աշխատությունը:

Հարկանշելի է, որ նա օգտագործել է մեծ թվով աղբյուրներ՝ հիմնականում օտարալեզու, և կարողացել է զգալի չափով լուծել իր առջև դրված խնդիրները:

Այնուամենայնիվ, նյութը կարիք ունի շարք ավելի հանգամանակի ուսումնասիրության և պարզաբանումների:

Արտակ սրկ. Սահակյանի ավարտաճառի թեման է «Ս. Գրիգոր Նյուսացին և նրա «Մովսեսի կյանքը» երկը»: Հեղինակը հիմնականում կարողացել է հաղթահարել նյութը, վեր հանել Նյուսացու խորհրդապաշտության առանձնահատկությունները՝ «Մովսեսի կյանքը» երկի հանգամանակից բնութայամբ: Հեղինակին մեծապես

օգնել են աղբյուրների, այդ մասին եղած ուսումնասիրությունների քաջ խմացությունն ու փնդին օգտագործումը:

Պաշտպանությունից հետո քննիչ հանձնախումբը, ըստ կատարված աշխատանքի արժեքի, գնահատել է յուրաքանչյուր ավարտաճառ. Վահե սրկ, Հովսեփյանի, Արտակ սրկ, Սահակյանի և Բաբկեն սրկ, Նանյանի ներկայացրած ավարտաճառերը գնահատվել են «քաջալավ», Արսեն սրկ, Բարսեղյանի և Վաղարշակ սրկ, Ծալուրյանի աշխատանքները՝ «լավ», իսկ խաչատուր սրկ, Տաշչյանի, Մամիկոն սրկ, Ավետիսյանի, Աշոտ սրկ, Ղազարյանի, Սահակ սրկ, Գասպարյանի, Արսեն սրկ, Պապուրյանի, Արամ սրկ, Մալխասյանի աշխատանքները՝ «բավարար»: Այս ամենը վկայությունն է այն բանի, որ վերոհիշյալ սարկավագները իրենց գիտական ղեկավարների հետ ջանացել են «ըստ կարելույն» առավել եաջող ուսումնասիրություններ ներկայացնել: Հույժ ցավալի է, որ այս անգամ ևս, «քաջալավ» և «լավ» գնահատված ավարտաճառերի հետ մեկտեղ, որոշ աշխատանքներ արժևորվեցին «բավարար», մի պարագա, որ մտաեղգիչ է. ավարտաճառերի գիտական ղեկավարները պնդք է ավելի խստապահանջ լինեն, անմիջականորեն և գործնականորեն օգնեն գիտության ասպարեզում առաջին քայլերը կատարող իրենց աշակերտներին, խրատապահանջ լինեն նաև ռճական, քերականական և ուղղագրական սխալների նկատմամբ:

Ուսրի և քննիչ հանձնաժողովը, հաշվի առնելով այդ պարագան, պաշտպանությանը ներկա ճեմարանականներին հորդորեց, որ ապագա շրջանավարտներն իրենց ավարտաճառերը գրելիս ցուցաբերեն առավել նախանձախնդրություն և հետևողականություն, հետևեն բոլոր այն խորհուրդներին ու ցուցումներին, որոնք կտրվեն իրենց գիտական ղեկավարների կողմից:

Քննիչ հանձնախումբը հատկապես նշեց, որ ճեմարանավար սաներն առավել հանգամանալից ուսումնասիրեն հայ եկեղեցական մատենագրությունը և վեր հանեն այդ դարավոր ու անգին ժառանգության գոհարները, որոնց կարիքն այսօր, առավել քան երբևէ, խիստ զգացվում է:

Պաշտպանությունների ավարտին իր եզրափակիչ խոսքում Տ. Էզնիկ եպս. Պետրոսյանը շնորհավորեց Գևորգյան Հոգևոր Ճեմարանն ավարտած սարկավագներին և քաջալերեց, որ այդքանով չավարտեն իրենց աշխատանքը և այսուհետև ևս իրենց ուսումնասիրություններով շարունակեն ներդրում ունենալ գիտության ասպարեզում:

ՆԱԴՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

10-12 Նոյեմբեր 2000 թուականներին Գերմանիոյ մէջ գործող Ֆիլոքսենիա (Phylloxera) միջնկեղեցական կազմակերպութեան հրաւերով Գերմանիոյ Զիկպուրկ քաղաքին մէջ տեղի ունեցաւ երեքօրեայ նստաշրջան մը՝ նուիրուած Հայ Եկեղեցւոյ 1700-ամակին: Այս նստաշրջանին կը մասնակցէին մեծաւ մասամբ կաթողիկէ, աւետարանական, Ռուս եւ Յոյն Ուղղափառ եւ Ղապի Եկեղեցիներու ներկայացուցիչներ, աստուածաբաններ եւ հաւաքացեալներ: Զիկպուրկի մէջ մասնակիցներուն հրամցուեցան դասախօսութիւններ Հայ Եկեղեցւոյ պատմութեան, աւանդութեան եւ ծէսին շուրջ: Ուրբաթ 10 Նոյեմբերին դասախօսեց Արժ. Տ. Միոռն -Քեկյ. Սարգիսեանը «Հայ Եկեղեցւոյ պատմութիւնը եւ Գերմանիոյ հայոց գաղութը» նիւթ ունենալով: Փրոֆ. Նէրման Կուցը «Հայաստան-Գերմանիա. ընդհատուածը շաղկապելու փորձ մը» խորագրով ներկաներուն դասախօսեց հայ-գերմանական յարաբերութիւններու մասին: Փրոֆ. Ֆրիտրիխ Հայէրը ներկայացուց Գրիգոր Նարեկացիի «Մատենաւ Ողբերգութեան» հատուածներ թարգմանութեամբ եւ «Նարեկացիի դերը Հայ Եկեղեցւոյ կեանքին մէջ» խորագրով դասախօսեց Հայ Եկեղեցւոյ աստուածաբանութեան մասին: Կիրակի 12 Նոյեմբերին բոլոր մասնակիցները ներկայ գտնուեցան Սուրբ Պապարագի Զեօլին Ս. Սահակ-Մեսրոպ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ մէջ: Օրուան Ս. Պապարագը մատուցեց Հոգ2. Տ. Արմաշ Աբեղայ Նալպանտեանը: Յատուր պատշաճի քարոզեց թեմիս Առաջնորդ, Բարձր2. Տ. Գարեգին Արք. Պեճեանը: Սրբազան Հայրը իր քարոզին մէջ նախ բարի գալստեան խօսք ուղղեց ներկաներուն եւ ապա շնորհակալութիւն յայտնեց անոնց, որ ընդունեցին Առաջնորդարանի հրաւերը: Ապա Սրբազան Հայրը ընդգծեց քրիստոնէական երեք սցրումքներ. Սնը, միութիւն եւ աղօթք: Ասոնք աւետարանական ճշմարտութիւններ են եւ պէտք է այսօրուայ հրամայականները ըլլան բոլոր Եկեղեցիներուն: Յաւարտ Ս. Պապարագի սարքուած սիրոյ սեղանին ողջոյնի խօսքեր ուղղեցին Բարձր2. Սրբազան Հայրը, Փրոֆ. Ֆ. Հայէրը: Սիրոյ ճաշին շնորհակալութեան եւ փակման խօսք արտասանեց Տոքթ. Լինք, որը այս նստաշրջանին կազմակերպիչն ու խորհուստողն է, եւ ապա բոլոր ներկաները շնորհակալութեամբ ցրուեցան իրենց վայրերը:

Ինչպես ամէն տարի, այս տարի եւս 21-22 Նոյեմբեր 2000-ին տեղի ունեցաւ արտասահմանի հոգևորականներու հաւաքը Վուփէրթալ քաղաքի մէջ: Այս հաւաքի նպատակն է Գերմանիոյ մէջ գործող օտար եւ տեղական Եկեղեցիներու հոգևորականներու միջեւ յարաբերութիւնը եւ գործակցութիւնը սերտացնել եւ իրենց հովուական կեանքի փորձառութիւններու փոխանակման միջոցաւ զօրացնել Եկեղեցին: Գերմանիոյ Հայ Եկեղեցին այս հաւաքին ներկայացուեցաւ Հոգ2. Տ. Արմաշ Աբղ

Նայասարեանի կողմէ. որ իր ելոյթին մէջ յարկապէս բացաւրեց Նայ Եկեղեցւոյ 1700-ամեակի գալ փարուայ ծրագիրը՝ ներկաները հրաւիրելով մասնակցելու անոր եւ փարքեր փեսակի փորձառութիւն մը եւս ռնննալու Նայ Եկեղեցւոյ եւ Նայասարեանի առնչութեամբ: Այս հաւաքին ներկայ եղած էր նաեւ Նոյանքայի նոյնանուն կազմակերպութիւնը եւս:

28 Նոյեմբեր 2000-ին Առաջնորդ Գարեգին արքեպս. Պեճնեանը ընդառաջելով Տէլը քաղաքի Արեւելեան Եւրոպայի Կեդրոնի հրաւերին, ներկայ գտնուեցաւ ընդունելութեան մը. որու ընթացքին Նայասարեանի ճարտարարտուեստի եւ առեւտրական գրասենեակի ներկայացուցիչ Սամուէլ Թաղէտեան, Փրոֆ. Ստեփան Գրիգորեանի «Չոն Զուրբուրն» տնտես մեծադիր նկարը յանձնեց Տէլը քաղաքի առեւտրորի գրասենեակի նախագահ Կէրպ Վ. Կոնէլին առ ի շնորհակալութիւն այն կարգադրութեանց եամար, որու շնորհիւ Պրն Թաղէտեան մէկ փարուայ համար գրասենեակ մը ունեցած է Արեւելեան Եւրոպայի կեդրոնին մէջ:

Յարգելի դեսպան Ոսկանեան, Պրն Կոնէլ եւ կեդրոնի պատասխանատու Միրքո Նովաքի բարի ցանկութիւններէն ետք Առաջնորդ Սրբազանը եւս խօսք առաւ:

Քրիստոնէութեան Նայասարեանի մէջ պնդական կրօնք հռչակման 1700-ամեակին նուիրում Գերմանիոյ Առաջնորդարանի ծրագրերու ծիրին մէջ, 2 Դեկտեմբեր 2000 թուականին Քեօլնի Ս. Սահակ-Մեսրոպ առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ համայնքային սրահին մէջ բացումը կատարուեցաւ Նոմկլայի կաթողիկոսանիստի լուսանկարներու ցուցահանդէսին:

Գերմանացի ճարտարապետ Նասիլէթը Նանիշ, որ վեջերս գտնուած էր Թուրքիոյ հարաւային շրջանը, Նոմկլայի Նայ Եկեղեցւոյ կաթողիկոսանիստի փլալակներէն նկարներ առած էր, որոնք պիտի մնան յօշուփելի փաստեր Նայ Եկեղեցւոյ պատմութեան, քանի որ շրջանը այժմ վրանգում է ջուրերու փակ մնալու, թրքական կառավարութեան որոշումով հոն ցրամբարներու կառուցման պատճառաւ: Կաթողիկոսական պալատին եւ բերդին մէկ մասը արդէն իսկ կորսուած է այս ջուրին փակ: Նայ Եկեղեցւոյ կաթողիկոսութիւնը այս շրջանին մէջ գտնուած է 1148 -1292 թուականներու միջեւ:

Դարձյալ 1700-ամեակի ծիրին մէջ 9 Դեկտեմբեր 2000-ին Գարեգին Սրբազան, ընդառաջելով Տէլի քաղաքի Կաթողիկէ Եկեղեցւոյ հրաւերին, պատուոյ հիւրը եղաւ Շույցը-Տէլի երգչախումբի համերգին Մայր եկեղեցւոյ մէջ: Յաջորդ օրը՝ 10 Դեկտեմբերին, մարտցանեց Ս. Պատարագ, երեկոյեան նախագահեց հսկումի արարողութեան եւ այդ առթիւ քարոզեց գերմանացի հաւատարեաններու: Սրբազանը իր քարոզին մէջ ընդգծեց Եկեղեցիներու միութեան, համագործակցութեան ու յարաբերութեան սնրագման կարեւորութիւնը:

Ցաջորդ օրը, 11 հեկտեմբերին, ժամը 10.00-ին, Առաջնորդ Սրբազանը ընդունեց ալ քաղաքապետի կողմէ եւ սպորտագրեց ոսկի մատենան:

Երեքօրեայ այս ընդունելութիւններու ընթացքին Սրբազան Հօր կ'ընկերանային Հիւսիսային Գերմանիոյ իայ համայնքներու հոգևոր հովիւ Տ. Սերովքէ վրդ. Իսախանեան, Հոգ2. Տ. Անուշաւան Աբելայ Ժամկոչեան, Փրոֆ. Խաչիկ Ղազարեան, Իշխան Սրկ. Զիֆթեման, Արարատ Սրկ. Տէրտէրեան, Գերմանիոյ Առաջնորդարանին կապուած եոր խմբավար Վարդուժան Մարգարեան, որոնք միասնաբար երգեցին եան Ս. Պարարագը:

ԴԻԻԱՆ ԳԵՐՄԱՆԻՈՅ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

ՆՄՐՈՆԱԿԱՆ



ԱՐԻՍՏԱԿԵՍ ԱԲԵՂԱ ԱՅՎԱԶՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(17 դեկտեմբեր 2000 թ.)

«Եվ Աստված կանչեց Ադամին և ասաց նրան. «Ո՛ր ես»: Եվ նա ասաց. «Քո ձայնը լսեցի պարտեզում և վախեցա, որովհետև մերկ էի և թաքնվեցի...» (Ծնեդ. Գ 9-10): «Եվ Աստված ասաց Կայենին. «Ո՛ր է քո եղբայր Աբելը»: Եվ նա ասաց. «Չգիտեմ, մի՞թե ես եղբորս պահակն եմ» (Ծնեդ. Դ 9):

Սիրելի հավատացյալներ, քույրեր և եղբայրներ.

Այս խոսքերն ասվել են անմիջապես Աստծո բերանից՝ ուղղված Ադամին և Կայենին այն ժամանակ, երբ մեղքը մուտք էր գործել աշխարհ: Այս երկու կարևոր հարցադրումները, որ տրված են Աստծու կողմից, ուղղված են ամբողջ մարդկությանը, վերաբերում են մարդու բարոյական դիրքորոշմանը, որպեսզի նրանք իրենցով հասկանան կյանքի իմաստը և, ինչու չէ, նաև պատասխանատվությունը իրենց հարազատի, բարեկամի կամ ընկերոջ նկատմամբ:

Մարդն ապրում է շատ կարճ, սակայն իր համար կարևոր մի կյանք՝ իր պետքերով, հաճույքներով, պահանջներով ու կարոտով: Բայց մենք մեզ հարց տանք. ո՞րն է մարդու կարևորությունը երկրիս վրա, և ի՞նչ գիտի նա արդյոք իր մասին կամ իր հարազատների և ոչ հարազատների:

Սիրելի հավատացյալներ, Աստծու կողմից Ադամին և նրա ժառանգին տրված հարցերը հնուց ի վեր, մինչև մեր օրերը, հնչում են ամեն ժամ, ամեն թույն և վերաբերում են Ադամի սերնդից յուրաքանչյուրին: Որտե՞ղ է մարդը, ո՞ր է կանգնած նա այս երկրային ճանապարհին՝ Աստված և մարդ հարաբերության ժամանակ:

Աղամի անկումից հետո, Աստծո հարցադրումից շար չանցած, մինչև առաջին, ահավոր և առ այսօր հարապուն կրկնվող եղբայրասպանության մասին, Աստված հնչեցնում է իր ձայնը՝ ուղղված չարությանը և արելությանը լցված Կայսենին. «Ինչո՞ւ քրքրանցիր, ինչո՞ւ մտայվեց դեմքդ: Չէ՞ որ եթե արդար նս գոհաբերում, սակայն արդար չես բաժանում. մեղանշած ես լինում: Հանգիստ եղիր, դու կարող ես մեղքից ազատվել, դու ի վիճակի ես այն հաղթահարելու» (Ծննդ. Դ 6-7):

Կայենն անկարող եղավ զսպել իրեն, ճիշտ այնպես, ինչպես այժմ իր ժառանգակիցները: Եվ այդ ժամանակ էլ առաջին անգամ Կայենը մարդկային պարմության մեջ կատարեց առաջին սպանությունը: Կատարված հանցագործությունից հետո Աստված նորից կանչեց իր մոտ Կայսենին և ասաց. «Մի՞թե ես Լեւելը՞ քո եղբայրը» (Ծննդ. Դ 9):

Եվ Կայենը պատասխանեց այնպես, ինչպես այսօր մեներ թուրք օրեօր, նույն և նման հարցին մեր մտերիմների պատասխանատվության համար կպատասխանենք. «Չգիտեմ, մի՞թե ես իմ եղբոր պահակն եմ» (Ծննդ. Դ 9):

Այս բոլոր հարցադրման երևույթները կատարվել են Աստծո ներկայության ժամանակ, երա հետք հանդիպման պահին:

Միտելի հավաքագյալներ. Կեսնո՞ւմ եք՝ ինչպիսի հարազատություն և մտքիկություն Աստծու հետ, որ մարդ արարածը անմիջական խոսքի և գրույցի կամ բանավեճի մեջ է գտնվում իր Արարչի հետ: Չմոռանանք Հին Ուխտից Աբրահամի, Հակոբի, Մովսեսի, մարգարեների պարագաները, որոնք նույնպես այս վիճակի մեջ էին և գտնվում էին անմիջական շփման մեջ իրենց Արարչի հետ: Այս բոլոր շփումների ժամանակ Աստծու երևումը կամ հանդիպումը Աստծու հետ կայացել է տարբեր կերպերով՝ Աստծու ձայնի միջոցով, կրակն սյան տեսքով, կենդանու կամ հրեշտակի միջամտությամբ և այլն: Հին Կտակարանում մարդու փրկության իրագործման համար Աստված միշտ եղել է մարդկանց հետ և այս տարրեր երևումներով ողորմել է նրանց:

Եթե Աստված մոտ է Իրեն հավաքացողին, ապա այդ պահին բնության բոլոր օրենքները կարծես թե կորցնում են իրենց ուժերը: Եվ այսպիսի օրինակները բազում են Աստվածաշնչում, ինչպես, ասենք, Եդիայի պարագային, երբ հրեշտակը նրան հաց և ջուր էր բերում. Դանիելի մարգարեությունում երեք մանուկների պարագային, երբ կրակն գուրի մեջ նրանց չի վնասում ոչ մի բոց և այլն:

Սրանք և նմանաբիպ Աստվածաշնչյան այլ պարմությունները գուրկ են ետրինվածքներից, նրանք վերցված են մարդկային առօրյայից և ցույց են տալիս, թե ինչպես մեծ էր այն ժողովուրդը, որ իր Աստծուն դիմում էր «դու»-ով, կարող էր Նրա հետ խոսել բարձրաձայն, ցածրաձայն կամ շշնջալով, բանավեճել և մեծամարտել, պարզապես լսել Նրա ձայնը: Նստնապես, Աստված ամենուրեք էր, Նրա ներկայությունն ու գոյությունը միշտ կար ժողովրդի մեջ: Ամենամեծ հրաշքները դառնում էին գրեթե սովորական իրադարձություններ, քանզի մարդը հավատում էր Աստծուն այնքան անկասկած ու Նրան ընդունում այնքան սրտամուր, որ Նրանից ուղարկված ամեն բան ընդունում էր որպես բնական:

Մեր Փրկչի՝ Տիտու Ջրիստոսի Գալստյամբ առաջ է գալիս նոր հոգեւոր հասկացություն և նոր հարաբերակցություն: Աստված երկիր է ուղարկում Իր Միածին Որդուն, որն ամենամեծ հանդիպումն էր մարդ արարածի հետ: Նա այս հանդիպման ժամանակ ապրեց այս աշխարհում, ուսուցանեց, ապրեց նրանց ուրախությունն ու պատապանքը, սերն ու ներշնչանքը, վաստակեց սերն ու արելությունը, վերջապես, որպես «հանցագործ», մեր փոխարեն հայտնվեց խաչի վրա՝ «վերին իշխանությունների վերավորանքների և աստվածանարգության համար», թաղվեց, սակայն հարություն առավ ու հայտնվեց Իր աշակերտներին ու Իրեն հավաքացողներին:

Մարդն ինչքան էլ ցանկացավ վերջ դնել այս կյանքում Աստվածային հանդիպմանը մարդու հետ, չկարողացավ, հարության հույսն ու լույսը նորից մարդու մեջ ծնեցին ու վերապրեցրեցին այդ իդնն ու փափագը:

Եվ այսօր էլ մենք գգում ենք Աստծո մոտիկությունը և ներկայությունը, մեր հանդիպումներն ու երևումները Աստծո հետ, որի ժամանակ Նա միշտ հարց է տալիս մեզ՝ Ո՞րն ես, ով մարդ, կամ՝ Ո՞ր է քո եղբայրը:

Այս հարցերը դրվեցին մեր առջև Աստծուց, որպեսզի ճանաչենք մենք ինքներս մեզ և դիմացինին, զիտակեցնեք մեր գործած մեղքերը, քանզի այս հարցերը տրվեցին մեղքից հետո, որպեսզի ապաշխարենք և ընդունենք Աստծուն, ճանաչենք Նրան, որ հանդիպեց մարդուն Տիտու Ջրիստոսով, որ մեղքից ազատվելու համար պետք է՝ սիրես քո Տեր Աստծուն ու կատարես Ոսկե Օրենքը, «Սիրիր ընկերոջդ, ինչպես քո անձը»: Մի՞թե սրանք այն օրենքները չեն, որ Աստված ուղղեց մարդկությանը՝ Ադամին և Կայենին: Եթե նրանք սիրեին Աստծուն և խոստովանեին կատարվածը, ապա ներված կլինեին: Մինչև այսօր էլ Աստված բազում կերպերով ու ձևերով հանդիպում է մարդուն և նորից ու նորից ապաշխարության հորդորում նրանց: Ամենամեծ ապաշխարանքը մարդու կյանքի Ջրիստոսի ծննդյան քարոզչության ժամանակ, Տիտոսի և մարդու հետ հանդիպման պահին, սակայն մարդը նորից գտնվելով մեղքի տակ, կատարելով սատանայի գործերը, խաչեց Նրան՝ կրկնակի իրեն մեղքի մեջ գցելով: Չապաշխարեց և խաչ հանեց: Եվ այս երկուսի համար էլ մինչև այսօր եղած են այդ երկու հարցերը:

Տիտոսից հետո Աստված այս փրկական առաքելությունը իրականացնելու համար «ի խնդիր մոլորեալ ոչխարին» դեպի երկիր կոչեց շնորհաբաշխ Սուրբ Նոգուն՝ հաստատելով հարածամ շարունակվող փրկագործությունը: Այդ շնորհաբաշխությունը, որն Աստծո հետ հանդիպումն ու միությունն է, տեղի է ունենում և այսօր, այս Պատարագի ընթացքին: Որպես շնորհ, Աստծո հանդիպման կերպերից մեկի, դա Սուրբ և Ամմահ Պատարագն է, որն ապաշխարողն ու խոստովանողը, ընդունելով իր մեջ Տիրոջ Մարմինն ու Արյունը, դառնում է Աստծու հետ և Նրա սիրտ մեջ մեկ և մի: Եվ սա է ճշմարիտ հավատը, որն Աստծու հայտնված ճշմարտությունների ամբողջությունն է, որի զագաթնակետը Ս. Պատարագն է՝ Տիրոջ Մարմնի և Արյան սրբագործումը: Այս հավատըն է ուղիղ և նրա գերագույն նպատակը՝ սերը, քանզի սիրով

հաստատվեց ամեն ինչ, և այդ սերը պետք է իրականանա ամբողջ սրբով առ Աստված և սեր դեպի իր ընկերը:

Այս սերը Աստծու և ընկերոջը հանդեպ մարդ ձեռք է բերում Աստծո փրկանքության մեջ, որի մի բաժինը նաև հոգևոր ճեմարանն է: Այսպեղ ենք ստանում մենք ինքնաճանաչողության գիտակցությունը և ինքնության լույսը, որն իջնում է երկնքից: Այսպեղ մենք ի հայտ բերեցինք Աստծու լույսը ու հանդիպեցինք Նրա հետ և ցանկացանք զնալ այդ լույսի հետքնից: Այսպեղ է, որ մեզ հարց տրվեց, և Աստված կանչեց. Ո՛րո ես, ով մարդ: Դրան ես կպատասխանեմ. Այսպեղ, Տե՛ր. Քո Միածնաեջ Աթոռիդ առջև, Քո հայացքի առաջ: Եվ շնորհակալ եմ, Տե՛ր, որ Քո ծառաների միջոցով հանդիպեցի Քեզ՝ այս Սուրբ Խորհրդի ժամանակ: Գոհ և շնորհակալ եմ նրանցից, առաջինը՝ երջանկահիշատակ մեր Նայրապետներից, Վազգեն Վեհափառից, որ իմ քայլերը ուղղեց դեպի Մայրավանք, Գարեգին Ա Վեհափառից, որ մեզ դաս տվեց, ուսուցանեց Տիրոջ խոսքերը՝ հաստատելով մեր մեջ ամուր կամք, Գարեգին Բ Կաթողիկոսից, որ մեզ վերջնական ճիշտ դիրքորոշման մեջ դրեց՝ ընտրելով կուսակրոն բաժանայի կարգը: Իմ խորին և սրտանց շնորհակալություններն ու երախտագիտությունը տեսչական կազմին, որ արժան համարեց ինձ դառնալու ուսանող և ապա սպասավոր Աստծու Սուրբ Սեղանին, որ իր ջերմությամբ հանձն առավ կրթելու և դաստիարակելու մեզ: Մեր նրախափքի խոսքն եմ ուղղում բոլոր միաբաններին, որոնք գորավիզ եղան մեզ, իմ գոհունակությունն եմ հայտնում հոգևոր ծնողիս՝ Փառեն նախկապտսին, որը Մյուռոնի դրոշմամբ կնիք դրեց ճակատիս՝ իմ մեջ հաստատելով Աստծու պատկերի նմանությունը: Եվ ձեզ, սիրելի հավատացյալներ, քույրեր և եղբայրներ, որ այս ժամին, Ս. Պատարագի ընթացքին, խնդրում եք Տիրոջ ուժն ու կարողությունը, որ գորավիզ լինի ինձ՝ հաստատուն մնալու Աստվածային կամքի մեջ ու Պատարագ մատուցելու Մեղանի առջև:

ՆԱՐԵԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՅԻՍՈՒՍԻ ԱՌԱՋԻՆ ՀՐԱԾՔԻ ՀԱԿԻՐԺ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՅՈՎ ՀԱՆՈՒ ԱԽԵՏԱՐԱՆ Բ 1-12

ԿԱՆԱՅԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Չորրորդ Աւետարանը Գրուած է Chaistic յօրհմուածքով եւ շարադրութեամբ: Chaism-ը գրութեան յատուկ արուեստ մըն է: Այն, ինչ որ Քեղինակը արտայայտած է իր շարադրութեան սկիզբը, մոյնաման ձեռով կրկնուած է իր պատմուածքի վերջաւորութեանը (տե՛ս ընդգծուած բնագիրը): Պատմութեան միջին մասը դարձած է պատմուածքին նպատակակէտը: Chaism-ի գործածութիւնը Հիմ եւ Նոր Կտակարաններուն մէջ, այլեւ յունական եւ Ռոմէական գրականութեանց մէջ ժողովրդականութիւն ունեցող գրութեան ձեռ մըն էր դիրութեամբ ըմբռնելու եւ մեկնելու համապատասխան քաժիմներով:

Ես մտադիր չեմ ներկայացնելու Chaism-ի ամբողջական ուսումնասիրութիւնը, այլ մի քանի խօսքով ընդգծելու Չորրորդ Աւետարանի գրութեան հարուստ արուեստը: Ես հիմնականօրէն պիտի կեդրոնանամ Կանայի Հարսանիքի (Յովհ. Բ 1-12) բացարձակութեան վրայ:

ԲՆԱԳԻՐ

Եւ յատուրն երրորդի հարսանիք էին ի Կանա Գալիլեացոց, եւ անդ էր մայրն Յիսուսի. Կոչեցաւ եւ Յիսուս եւ աշակերտքն նորա ի հարսանիս:

Եւ ի պակասել գինւոյն՝ ասէ մայրն ցմիսու. Գինի ոչ ունին: Եւ ասէ ցնա Յիսուս. Զի կայ իմ եւ բո, կին դու. չեւ է հասնայ ժամանակ իմ: Ասէ մայրն նորա ցապաստուօրսն. Որ զինչ ասիցէ ձեզ՝ արասցիք:

Անդ էին թակոյք կենայք վեց՝ ըստ սրբութեանն հրէից, քանէին մի մի ի նոցանէ մարս երկուս կամ երիս: Ասէ ցնոսա Յիսուս. Լցեք գթակոյկսդ ջրով. եւ լցին զնոսա մինչեւ ի վեր: Եւ ասէ ցնոսա. Արդ առէք եւ բերէք քանդարապետիդ: Եւ նոքա բերին:

Եւ իբրեւ ճաշակեաց քանդարապետն զջուրն գինի եղեալ, եւ ոչ զհարկ ռսարի իցէ, բայց սպասաւորքն զհարկն՝ որք արկին զջուրն: Խօսի ընդ փեսային քանդարապետն

և ասէ. Ամենայն մարդ զանոյշ գինին յառաջագոյն պաշտէ, եւ յորժամ արքեւան՝ յայնժամ գլորին. դու պահեցեր զանոյշ գինիդ մինչև ցայժմ:

Ձայս արար սկիզբն նշանաց Յիսուս ի Կանա Գալիլեացոց, եւ յայտնեաց գլխաւ իւր, եւ հաւատացին ի նա աշակերտքն նորա: Յեր այսորիկ էջ Յիսուս ի Կափառնաւում ինքն եւ մայր իւր եւ եղբարք իւր, եւ անդ լինէր ոչ բազում ինչ աւուրս:

ՋՈՒԳԱՏԵԱՄԿԱՆ ՅՈՐԻՆՈՒԲԱՐ

Ա Յիսուս, իր մայրը եւ իր աշակերտները Կանայի մէջ Բ 1-2

Բ Գինի եւ սպասաւորներ Բ 3-5

Գ Ջուրը գինիի փոխուիլ Բ 6-8

Բ' Գինի եւ սպասաւորներ Բ 9-10

Ա' Յիսուս, իր մայրը եւ իր աշակերտները Կանայի մէջ Բ 11-12

Կարգ մը Ա. Գրոց մեկնիչներ կ'որոշեանայս նշանին պատմականութիւնը եւ զայն կ'ընդունին որպէս Աստուածաբանական տեսութիւն, ենթադրելով, որ հրաշք չկատարուեցաւ հարսանեաց ընթացքին: Ջուրի փոխումը գինիի կատակ մըն էր տաճարապետին կողմէ: Հարսանեաց օրը ջուրի մատուցում տեղի ունեցաւ: Ներկաները (որոնք հարբած էին) ջուր ըմպեցին գինիի փոխարէն: Այս սխալ լուրն ու տարածայնութիւնը տարածուեցաւ Կանայի շրջանը՝ դառնալով հրաշագործութեան պատում: Սակայն մերժել «Բրիստոսի հրաշքները» կը նշանակէ ուրանալ Ամոր Ա. Յարութիւնը: «Բրիստոնէութիւնը գոյութիւն չի կարող ունենալ առանց մեր Տիրոջ Յարութեան գօրութեան: Հետեաբար, անընդունելի եւ հակաքրիստոնէական գաղափար է մերժել այս հրաշքի պատմականութիւնը:

Որոշ Ա. Գրոց մեկնիչներ կը հաւատան, որ Յիսուսի առաջին հրաշքի ձեւաւորման պատումին մէջ առասպելական տարրեր գոյութիւն ունին, քաղուած Դիոնիսիոսի առասպելէն: Ամէն տարի Դիոնիսիոսի տօնակատարութեան օրը տաճարի աղբիւրէն գինի կը բխէր ջուրի փոխարէն: Էլիսի մէջ, Դիոնիսիոսի տօնէն մեկ օր առաջ, երեք դատարկ թակոյկներ կը տեղադրէին տաճարին մէջ եւ յաջորդ առաւօտեան դատարկ թակոյկները գինիով լցնուած կ'ըլլային: Այս հրաշքը յայտնի էր որպէս Աստուածայայտութեան Օր, որ կը կատարուէր Յունուար 5-6-ին:

Հին Կտակարանին մէջ, հարսանեաց ըմբռնումը խորհրդանշէր Մեսիայի գալստեան (Ովսէ Բ 16-25): Այս նիւթին սերտօրէն կապուած է Ա. Գրքի իմաստասիրական գրականութիւնը: Առական գիրքը կը նկարագրէ, թէ ինչպէս իմաստունը խրախճանք կը պատրաստէ մարդկանց համար, հրաւիրելով զանոնք ուտելու իր հացը եւ խմելու իր գինին (Առական Թ 5-9): Օգտուիլ իմաստունի սեղանէն՝ կը խորհրդանշէ ընդունիլ անոր պատգամը: Այս գաղափարը անելի պիտի յստականայ, երբ Յսուս Ինքը ըլլայ Հացն Կենաց (Յովհ. Զ 4):

Կանայի մէջ Յիսուս կը ներկայանայ որպէս իմաստուն՝ հայթայթելով ներկաներուն գիմի: Այն գիմին, որ Յիսուս կը հայթայթէ, տարբեր է սովորական գիմիէն: Յիսուսի հայթայթած գիմին արժեքատուր եւ ամենաընտիր գիմին է, որ ոչ ոք համտեսած է տակաւին:

Յիսուսի առաջին նշանը յայտնի է մեզ որպէս Աստուածայայտնութեան հրաշք, որովհետեւ իր առաջին հրաշքի շնորհիւ (ըստ Յովհանոս Աւետարանի) Ան ի յայտ եկաւ որպէս Աստուծոյ Որդին եւ քացայայտեց Աստուծոյ փառքը: Քանի որ Չորրորդ Աւետարանիչը կը նշէ այս հրաշքը որպէս «սկիզբն նշանաց Յիսուսի ի կանա Գալիլեացոցն», Ս. Գրոց շատ մեկնիչներ կը հաւատան, որ հեղինակը օգտագործած է յատուկ աղբիւր մը, որ կ'ընդգրկէր հրաշքերու ժողովածու:

«Թուղթ Առաքելոց»ը, որ պարականոն նամակ մըն է, կը նկարագրէ Յիսուսի կեանքն ու առաքելութիւնը: Այս նամակին մէջ հեղինակը կը յիշատակէ հարսանեաց դէպքը՝ տեղեկացնելով, որ Յիսուս իր մօր եւ եղբայրներուն հետ հրաւիրուած էր, եւ Ան ջուրը գիմիի փոխեց: Այս վկայությունը ցոյց կ'ուտայ, որ Յիսուսի առաջին հրաշքը ժողովրդականութիւն վայելող Հրաշքերէն մին է, թէեւ համատես Աւետարաններուն մէջ ոչ մէկ վկայութիւն կայ այս մասին: Չորրորդ Աւետարանիչը հաւանաբար յատուկ նշաններու աղբիւր օգտագործած է, որ միւս երեք անտարաճիչները անտեղեակ էին:

Առաջին հրաշքին մէջ, ինչպէս նաեւ յաջորդող Հրաշքներուն մէջ, անտարաճիչի հիմնական նպատակը չէր ընդգծել ջուրը գիմիի փոխաւիլը, Մարիամի բարեխօսութիւնը, եւ ոչ ալ տաճարապետին զարմանքը: Հրաշքի կեղծոճացումը Յիսուսի անձին բարձրացումն է, որ ուղարկուած էր Հօրմէ քերելու աշխարհի փրկութիւն:

Կարելոր է իմանալ հրեաներու սովորութիւնը առաջին դարուն հարսանեաց սովորութեանց վերաբերեալ: Թէեւ շատ քիչ տեղեկութիւններ գոյութիւն ունին այս խնդրին շուրջ, սակայն բաւարար ապացոյցներ կան վկայելու այդ մասին: Ըստ Ժամանակի սովորութեան, փեսայի ծնողքը կամ ալ փեսան ինքը պատասխանատու էր հիւրերու ընդունելութեանց, նշանտուքի եւ ամուսնութեան ուխտին կարգաւորութեանց: Հարսանեաց տօնախմբութիւնը երեքէն մինչեւ եօթը օր կը կատարէին մի քանի պատճառներով: Նախ՝ ճամբորդութեան դժուարութեանց համար, ապա՝ ընտանեկան հագուազիւտ տեսութեան պատճառով: Բնականաբար, ամբողջ ժամանակը կ'անցնէին խրախճանքով, եւ ներկաներուն մեծամասնութիւնը կը հարբեմային:

Ըստ Թալմուտի, իւրաքանչիւր հիւր պարտաւոր էր միջակայ օժանդակութիւն հայթայթել: Ըստ հին Միջին Արեւելեան մտայնութեան, ընտանիքի պարագաները իրաւունք ունէին դատի տալ անոնց, որոնք հարկատու հարսանեաց մուէր ձախողեցան կատարել: Ժամանակակից մտայնութեան համաձայն, այս գաղափարը ծիծաղելի կը թուի: Անոնք, որոնք աղքատ էին, զթաքար կը հրաւիրուէին եւ պարտաւոր չէին որեւէ մուէր կամ դրամական օժանդակութիւն հայթայթել: Ազնուականները կը հրաւիրուէին որպէս պատուատուր հիւրեր եւ պարտաւորութեանց տակ չէին որեւէ

ճուղիի եւ միջակայն օժանդակութեանց, սակայն չհայթայթելու պարագային հասարակ ժողովուրդի դասակարգէն ստորադաս կը մկատուէին: Սկզբունքօրէն այն հիւրերը, որոնք ճուղիներ կը բերէին, կ'ուրախանային փեսային հետ, քայքայ Եւ ամուր հաշուին: Հետեւաբար, երբ կանայի հարսանեաց ընթացքին գինին հատաւ, առաւել քան ընկերային տազմապի առաջ կը գտնուէին: Փեսան եւ իր ընտանիքը կարող էին դատի տալ անոնց, որոնք օրումն գինին ճուղիներէ:

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Այս յայտնութեան հրաշքը կարելի է բաժանել չորս մասի

1. Բ 1-2 Ներածութիւն
2. Բ 3-5 Հրաշքի պատրաստութիւն
3. Բ 6-8 Զուրը գինիի փոխաւիւր
4. Բ 8-12 Վերջաբան

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ - Բ 1-2

«Եւ յաւուրն երրորդի հարսանիք էին ի կանա Գալիլեացոց, եւ անդ էր մայրն Յիսուսի: Կոչեցաւ եւ Յիսուս եւ աշակերտքն մորա ի հարսանիսն»:

Այս հրաշքի պատումը կ'սկսի օրումն մշտնով. «Եւ յաւուրն երրորդի»: Այս օրումն վերաբերեալ շատ կարծիքներ արտայայտած են Ս. Գրոց մեկնիչներ՝ ճշտելու հրաշքին ճշգրիտ օրը: Այն մկրտութեան պատումի (Յովհ. Ա, 29-34) երրորդ օրն է, առաջին օրը մշտած Յովհ. Ա, 35-ի մէջ եւ երկրորդ օրը Ա, 43-ի մէջ: Կարգ մը մեկնիչներու կարծիքով «յաւուրն երրորդի» արտայայտութիւնը սիմբոլիկ մշակութիւն ունի: Ան մասնաւոր վկայութիւն մըն է, որ կը յիշեցնէ ընթերցողին Յիսուսի յարութեան երեք օրերը: Թէեւ իմ կարծիքով այդ անհաւանական կը թուի ըլլալ: Հնարաւոր է, որ Չորրորդ Աւետարանիչի ցանկութիւնն է ներկայացնել շաբթուայ եօթ օրեր՝ բանալու իր Աւետարանը Յիսուսի առաքելութեամբ:

ՉՈՐԵՔՆԵՐԻ - Առաջին օր - Յովհաննէս Մկրտչի վկայութիւնը իր կեանքին մասին (Ա, 19-28):

ՀԻՆԳՆԵՐԻ - Երկրորդ օր - Յովհաննէս Մկրտչի վկայութիւնը Յիսուսի մասին (Ա, 29-34):

ՈՒՐԲԱԹ - Երրորդ օր - Երկու աշակերտներ կը հետեւին Յիսուսի (Ա, 35-39):

ՇԱԲԱԹ - ԿԻՐԱԿԻ - Չորրորդ օր - Սիմոն Պետրոս կը հետեւի Յիսուսի (Ա, 40-42):

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ - Հիմնգերարդ օր - Փիլիպոս եւ Նաթանայել: Յիսուսի առաքելութեան սկիզբը Գալիլիայի մէջ (Ա 43-50):

ԵՐԵՔՇԱԲԹԻ - Վեցերորդ օր - Երկու օրերէն մին ճշուած գլուխ Բ 1 համարին մէջ:

ԶՈՐԵՔՇԱԲԹԻ - Եօթներորդ օր - Յիսուս Կանա ջաղաքին մէջ (Բ 2-11):

Այն իրողութիւնը, որ շաբաթը կ'սկսի Զորեքշաբթի օր, կարեւոր է: Ըստ հնագոյն արեգակնային օրացոյցի, շաբթուայ առաջին օրը Զորեքշաբթին էր: Յովհաննու Աւետարանի Ա գլուխի 35-39 համարները կատարուեցան Շաբաթ օրը: Հետեւաբար գլուխ Բ 2 Զորեքշաբթի պիտի ըլլայ, քանի որ այդ օրը, ըստ Թաւմոսի օրէնքներու՝ կոչսերու հարսանեաց համար նախատեսուած էր: Այս եօթ օրուայ տեսութիւնը համոզիչ կը թուի, սակայն դժուար է փաստել հարսանիքի ճշգրիտ օրը:

Աւետարանիչը չի տեղեկացներ ո՛չ փեսային, եւ ո՛չ ալ հարսին անհատականութեան մասին: Կարծիքներ արտայայտուած են, որ Նաթանայէլը փեսան պէտք է ըլլայ, քանի որ ան Կանա ջաղաքէն էր (Յովհ. ԺԱ 2), որ կոչուած էր Քրիստոսի կողմէ իրեն հետեւելու: Անտեղի է փաստել Նաթանայէլին փեսացու ըլլալը: Եթէ իրապէս ինքն էր փեսան, Աւետարանիչը ճշած կ'ըլլար փեսացուն անունը: Ուրիշներ կը հաւատան, որ Սիմոն Նախանձայոյզն էր փեսան եւ կամ ալ Յիսուսի «եղբայրներ»էն մին: Մեր ուսումնասիրութեան մէջ փեսային կամ հարսին էութիւնը կարեւոր դեր չունի:

Զորորդ Աւետարանիչը չի նկարագրեր Յիսուսի ծննդաբանութիւնը: Ան կը նախընտրէ ամփոփ կերպով նկարագրել աշխարհի ստեղծումը, Արարիչը, Բանը, որն է իր Որդին Յիսուս Քրիստոս: Աւետարանիչը չի ճշեր Յիսուսի ծնողքին մասին մինչեւ իր առաջին հրաշքին օրը: Յովհաննու Աւետարանի մէջ Մարիամը ճանչուած չէ իր առաջի անունով, այլ կը ներկայանայ որպէս «մայրն Յիսուսի», որ մեծ դեր ունի փեսային տունը: Կոչուիլ «մայրն Յիսուսի» ստորադաս տիտղոս մը չէ: Արարներու մէջ այսօր կոչուիլ «մայրն այսիցչի» յարգալից տիտղոս մըն է այն կնոջ համար, որ քախտաւոր եղած է ծնելու արու զաւակ:

Յիսուսի մօր ներկայ գտնուիլը հարսանեաց խրախճանքին կ'ապացուցէ, որ ան բարեկամական կապ ունէր կամ փեսային, կամ ալ հարսին ընտանիքին հետ: Հակառակ պարագային ան ալ հրաւիրեալներու ցուցակին մէջ պիտի ըլլար: Մարիամի մասին բնագիրը կը հաստատէ, թէ «անդ էր մայրն Յիսուսի», իսկ Յիսուսի եւ իր աշակերտներու մասին կը վկայէ «Կոչեցաւ եւ Յիսուս եւ աշակերտքն նորա»: Մեծ տարբերութիւն կայ «կոչեցաւ» եւ «անդ էր» արտայայտութեան միջեւ: «Կոչեցաւ»ը պաշտօնական բնոյթ ունի, իսկ «անդ էր» արտայայտությունը՝ ոչ պաշտօնական: Կարելի է ենթադրել, որ Յիսուս «կոչեցաւ» պաշտօնապէս ներկայ գտնուելու հարսանեաց տօնախմբութեանց: Ան հարսանեաց արարողութեան մաս կազմեց: Բաւարար տեղեկութիւններ չկան փաստելու վերոյիշեալ ենթադրութիւնը: Հնարաւոր է, որ փեսան Յիսուսի մանկութեան բարեկամն էր, կամ ալ Յիսուս Կանա շրջանի մէջ

յարգուած վարդապետներէն մին էր: Անընդունելի է նաեւ այն տեսութիւնը, որ փեսային ընտանիքը չքատոր էր. քանի որ անոնք տպաստւորներ, տաճարապետ եւ շատ հրաւիրեալներ ունէին: Ենթադրելի է, որ անոնք մեծ տուն ունէին:

Նախքան հրաշագործութիւնը, Յիսուս ժողովրդականութիւն վայելող վարդապետ չէր տակաւին: Իր գերբնական կարողութիւններուն մարդիկ անտեղեակ էին եւ տակաւին իր առաջելութեան նախասկզբնական շրջանն էր: Եթէ ենթադրենք, որ այս հարսանիքի փեսան իր աշակերտներէն մին էր, խնդիր պիտի չըլլար բնագործ մէջ շեշտելու «եւ Յիսուս» արտայայտութիւնը, այլ բնագիտը պիտի ըսէր. «անդ էր Յիսուս»: «Եւ»ի շեշտուիլը կարեւոր կէտ մըն է մատնանշելու որ Յիսուսի մասնակցութիւնը որպէս պաշտօնական հիւր իր աշակերտներով կենսական եւ նշանակալից էր:

Ի՞նչու Յիսուսի աշակերտները հրաւիրուած էին: Յիսուս երբեք առանձին չէր ճամբորդէր: Ան գիտէր ու քաղաքներ կ'այցելէր իր աշակերտներուն հետ: Թէեւ եթէ հետեւինք Աւետարանի ժամանակագրութեան, Յիսուս միայն հինգ աշակերտներն ունի կոչուած գլուխ Ա. 35-51 համարներուն մէջ: Բայց «աշակերտք» բառը Չորրորդ Աւետարանին մէջ տասներկուցին կը վերաբերի եւ ոչ միայն հինգ աշակերտներուն: Անոնք, որոնք կոչուեցան գլուխ Ա.-ին մէջ, դարձան Յիսուսի անմիջական հետեւորդները: Կարելի է, որ բաց միջոց մը կայ գլուխ Ա. 35 - Բ. 2-ի միջեւ, որտեղ յստակ արձանագրութիւններ կային Յիսուսի աշակերտներուն կոչման մասին, որ այժմ կորսուած է:

ՀՐԱՇԹԻՆ ՊԱՏՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ

«Եւ ի պակասել գինոյն՝ ասէ մայրն ց Յիսուս. Գինի ոչ ունիմ: Եւ ասէ ցնա Յիսուս. Զի կա իմ եւ քո, կին դու. չեւ է հասեալ ժամանակ իմ»:

Յստակ է, որ փեսան հրաւիրեց մեծ քաղմութիւն մը, որովհետեւ գինին պակսեցաւ: Ան ճանչուած անձ մը կրնայ ըլլար կանայի մէջ. եւ անակնկալ թիւրք մաս կազմեցին հարսանեաց խրախճանքին: Երբ գինին հատաւ, Յիսուսի մայրը Անոր ուշադրութեանը բերաւ: Մարիամ փորձեց իր զաւկին ուշադրութիւնը գրաւել, որպէս զի Ան հրաշք մը գործէ: Յիսուս հրաշքներ գործե՞ց կամ ալ իր գերբնական զորութիւնը բացայայտե՞ց պատահական շրջանին: Կանոնական Աւետարաններուն մէջ ոչ մէկ վկայութիւն կայ: Մարիամին մտահոգութիւնը հարսանեաց ընթացքին եմթադրել կուտայ, որ Յիսուս կարելի է նախօրոք յայտնաբերած էր իր գերբնական կարողութիւնները, քանի որ Մարիամ խնդրին անմիջական լուծում կ'անկնկալէր: Ի՞նչու Մարիամ մտահոգ էր այս հարցով, եւ ոչ թէ ընտանեաց պարագաները: Կարելի է ենթադրել, որ Մարիամ ուրիշ կանանց հետ տնային ծառայութեանց գործին մէջ էր եւ տեղեակ էր ուտելիքի եւ ըմպելիքի քանակութեանց մասին: Հնարաւոր է, որ Մարիամ կ'օգնէր փեսային մօրը, եւ մօրմէն իմացաւ գինիի հատման լուրը:

Կարգ մը Ա. Գրոց մեկնիչներ կը հաատան, որ Մարիամ ինքը բերաւ օրուան գին՝ ցին որպէս նուէր հարսանեաց գոյգերուն: Թէեւ անհեթեթ կը թուի Մարիամի գինի նուիրելը, քանի որ սովորութիւն չէ կանանց համար (մանաւանդ Միջին Արեւելեան երկիրներու մէջ) գինի բերել որպէս նուէր: Կարելի է ենթադրել, որ Մարիամը միշտ կը բաժնէր իր մտահոգութիւնը իր զաւակին հետ: Յիսուսի ժամանակաշրջանին կանայք ընդհանրապէս ինքնավար եւ ինքնագլուխ անձեր չէին: Այս պարագային, Յովսէփը կարելի է մահացած էր, եւ ան ամբողջապէս կախեալ էր իր Որդուն: Իր միակ միախաբութիւնը իր զաւակն էր: Ան կ'ակնկալէր, որ իր զաւակը պիտի իմանար ինչ ընել, եւ ի՞նչպէս նոր գինի հայթայթել: Ան իր խոր սիրտէն գիտէր, որ Յիսուս ունէր գերբնական զօրութիւն, կարողութիւն եւ իշխանութիւն ընելու անկարելի:

Մարիամի ակտիւ միջամտութիւնը ապշեցուցիչ է: Անոր ղեկավարելու հմտութիւնը բացայայտ է: Ան իր մայրական իշխանութիւնը կ'օգտագործէ: Ան քաջ գիտէ, որ Յիսուս կարողութիւն ունի հրաշք գործելու, քանի որ Ան «Էմմանուէլ» է: Մարիամ գիտէր, որ հրեշտակները խօսեցան անոր հետ ճախքան Յիսուսի ծնունդը: Ան գիտէր, որ աստուածային տնօրէնութեամբ յղացաւ իր մէջ: Ան գիտէր, որ Յիսուս Մեսիան էր, եւ իր հրամանով Մարիամ ցանկացաւ, որ Յիսուս բացայայտէ բոլորին «Աստուծոյ Փառքը»:

Այս ապշեցուցիչ իրավիճակի մէջ Յիսուս կ'ըսէ. «Ջի կայ իմ եւ քո, կին դու. չեւ է հասեալ ժամանակ իմ»: Մէկ խօսքով. «Ինչ կ'ուզես ինձմէ»: Այս սեմական արտայայտական ձեւ մըն է, որ կը նշանակէ. «Ի՞նչ ըրած եմ քեզի, որ դու ինձի այս ըրիկ» (Դատ. ԺԱ 12): Եբրայեցերէն լեզուով այս խօսքը ունի քանի մը նշանակութիւն. 1. «Ինչու կը խանգարես զիս» կամ ալ 2. «Ինչ գործ ունիս, ի՞նչպէս միջամտիս եմ»: Այս հատուածը բաւական խրթին համար մըն է կատարելապէս ըմբռնելու, քանի որ ունի զգայական, հոգեբանական եւ ընկերային ծանր իրավիճակ:

«Ջի կայ իմ եւ քո» մի խօսքով կը նշանակէ «Այս մեր մտահոգութիւնը չէ»: Եթէ վերջին խօսքը ճշմարիտ է, այս պարագային անկարելի է, որ Մարիամ գինին պարգեւող անձը ըլլար: Որեւէ ձեռով որ մէկը փորձէ մեկնաբանել, դրական կամ բացասական, հարցը կը մնայ անպատասխան եւ անորոշ: Վաղ եկեղեցոյ հայրերը հասկացան վերոյիշեալ խօսքը որպէս Յիսուսի բարկութիւն Մարիամի: Անշուշտ բնագրին մէջ յստակ լարուածութիւն կայ Յիսուսի եւ Մարիամի միջեւ: Յիսուսի պատասխանը կոշտ է: Ան ճնշուած կ'զգայ իր մօր կողմէ կատարելու իր առաջին հրաշքը: Թէեւ «Կին դու» արտայայտութիւնը փորձ մը չէ արժեզրկելու կամ պատուազրկելու Մարիամին: Մարիամ, ընդհակառակը, յիշուած է չորս անգամ Ա-ԺԲ գլուխներուն մէջ:

Գիտակցելով, որ կոշտ պատասխան տուաւ իր մօրը, Յիսուս կը պարզաբանէ իր մտահոգութիւնը եւ կը բացատրէ՝ ըսելով. «Ձեւ է հասեալ ժամանակ իմ»: Արդեօք Մարիամ հասկցա՞ւ Յիսուսի «ժամանակ»ի մասին: Յստակ է, որ Մարիամ մտիկ չըրաւ Անոր եւ պահանջեց իրմէ, որ կատարէ իր առաջին նշանը: Ապա Մարիամ

Ռրաման տուաւ սպասաւորներուն օտարոտի տան մէջ ու ըսաւ. «Որ զինչ ասիցէ ձեզ՝ արասցիք»: Սպասաւորները ձեռնադրեցան անոր Ռրամանին եւ ըրին, ինչ որ պահանջեց: Ինչու՞ սպասաւորները չխորհրդակցեցան իրենց տաճարապետին հետ: Ոչ մեկ տեղեկութիւն կայ այս հարցով:

Յիսուս Ինքն իր վրայ կը վերցնէ տաճարապետի պաշտօնը, եւ սպասաւորները որպէս իր աշակերտները կը հետեւին Անոր պատուէրին՝ առանց հարցաքննելու Անոր: Աւետարանի մէջ ոչ մեկ տեղեկութիւն կայ, թէ ի՞նչպէս Մարիամ համոզեց Յիսուսին եւ ի՞նչ ըսաւ Անոր, որ Յիսուս իր միտքը փոխեց եւ կատարեց իր առաջին Ռրաշքը: Պակաս միջոց կայ Յիսուսի հարցումին եւ Մարիամի խիստ պահանջին միջեւ: Հնարաւոր է, որ կորսուած երկխօսութիւն գոյութիւն ունէր, որ Յիսուս համոզուեցաւ եւ կատարեց իր մօր Ռրամանը: Աւետարանիչը անկարեւոր նկատած է արձանագրել որոշ մանրամասնութիւններ, քանի որ ոչ մեկ կարեւորութիւն պիտի տայ բնագրին զարգացման համար:

ՋՈՒՐԸ ԳԻՆԻԻ ՓՈԽՈՒԻԼԸ

«Ասէ մայրն Նորա ցապասաւորսն. Որ զինչ ասիցէ ձեզ՝ արասցիք: Անդ էին թակոյկը կճեայք վեց՝ ըստ սրբութեանց հրէից. տանէին մի մի ի նոցանէ մարս երկուս կամ երիս: Ասէ ցնոսա Յիսուս. Լցէք զթակոյկսդ ջրով. եւ լցին զցնոսա մինչեւ ի վեր: Եւ ասէ ցնոսա. Արդ առէք եւ բերէք տաճարապետիդ, եւ նոքա բերին»:

Վեց հսկա թակոյկներ գրեթէ 480-700 լիտր արդէն պատրաստ կային տան մէջ: Ըստ հրեական օրէնքներու «վեց» թիւը անկատարութեան խորհրդանշէ էր: Հեղինակը կը բացատրէ, թէ ինչու վեց թակոյկներ տան մէջ տեղաւորուած էին, քանի որ տարօրինակ կրնայ թուիլ անոնց, որոնք ծանօթ չէին հրեական սովորութեանց: Լուսցման ծէսը (Ղուկ. Բ 22, Ե 14) յատուկ մաքրման արարողութիւն մըն էր, որ կը կատարէին ճաշէ առաջ եւ ետքը: Վեց թակոյկները հաւանաբար տեղաւորուած էին այնտեղ ձեռքերու լուսցման համար:

Յիսուս կը պատուիրէ սպասաւորներուն լեցնել թակոյկները ջրով: Ապա կը Ռրամայն անոնց՝ ըսելով. «Արդ՝ առէք եւ բերէք տաճարապետիդ»: Այստեղ սպասաւորները Յիսուսի աշակերտներուն դերը կը կատարեն: Անոնք Յիսուսի կը ծառայեն, մինչ իր աշակերտները ոչ մեկ դեր ունին: Անոնք միայն հիւրեր են: Սպասաւորները տեղեակ են Յիսուսի կատարած ճշման, մինչ իր աշակերտները անտեղեակ են կատարուած Ռրաշքին: Կարելի է ենթադրել, որ սպասաւորները լսած էին Յիսուսի առաքելութեան եւ քարոզչութեան մասին եւ համոզուած էին, որ Ան կարողութիւն ունէր Ռրաշք կատարելու, թէեւ բնագիրը կը վկայէ, որ այս Ռրաշքը Յիսուսի առաջին ճշման էր: Երբ Յիսուս պատուիրեց սպասաւորներուն լեցնել թակոյկները ջրով, հնարաւոր է, որ իր աշակերտներն ու իր մայրը ներկայ էին այդ պահուն:

դիմակը առանց յապաղելու կը յայտարարէ՝ ըսելով. «Բայց սպասաւորքն գիտէին՝ որք արկին գջուրն»։ Բնագրին մէջ սպասաւորները վկայութիւն տալու դեր ունին, բայց տաճարապետը կը հաստատէ տուեալ վկայութիւնը՝ խոստովանելով գինիի ըմտիր ըլլալը։ Ինչպէս որ տաճարապետը տեղեակ չէր որտեղէն գինին եկաւ, այնպէս ալ հրեաները տեղեակ չէին՝ Յիսուս որտեղէն կուգար (Յովհ. Է 27)։ Տաճարապետը գինին համտեսելէ ետք փեսային կը հարցնէ. թէ Ի՞նչու ըմտիր գինին չմատուցուեց խրախճանքի սկիզբը։ Այն խօսքը, թէ «Դու պահեցեր զանոյշ գինիդ մինչեւ ցայժմ» խորհրդանշէ և Մեսիայի գալստեան օրումն։ Ան իր պատարագումով փոխեց գինիին նշանակութիւնն ու իմաստը։ Իր ներկայացուցած «անոյշ» գինին դարձաւ փրկութիւն տուող ու փրկութեան առաջնորդող միակ «նշանը»։ Յիսուս իր մարդացումով փոխեց հրեական ջուրը քրիստոնէական գինիի։

Այստեղ կ'աւարտի հրաշքի պատումը։ Ընթերցողին պարտականութիւնն է եմթադրել, թէ ինչ պատահեցաւ ետքը։ Հեղինակը հետաքրքրուած չէ մկարագրել փեսային պատասխանը, ոչ ալ տաճարապետին կարծիքը։ Հեղինակը փաստեց իր ընթերցողին, որ Յիսուս իր առաջին հրաշքը գործեց Գալիլիայի Կանա քաղաքին մէջ, հարսանեաց տօնախմբութեանց ընթացքին, եւ բացալայտեց Աստուծոյ փառքը։

Այս հրաշքը ունի մաւր յայտնութեամբ նշանակութիւն։ Աստուծոյ թագաւորութիւնը, որ Յիսուս քարոզեց, հրաւէր մըն էր մեծագոյն հարսանեաց հանդէսի՝ պատրաստուած Աստուծոյ կողմէ։ Այս հանդէսի փեսան Քրիստոսն է, որ կը հրաւիրէ անոնց, որոնք արժանի են մտնելու եւ խմելու իր մարմինն ու արիւնը։ Աստուած կ'ընդունի միայն անոնց, որոնք կը մասնակցին իր «հարսանեաց խրախճանքին» հաւատքով, սիրով եւ ցնծութեամբ։



ՀՐԱՆՏ ՍՐԿ. ԿՈՍՏԱՆՑԱՆ

Ա. ՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆ

կյանքը երթ է. որ սկսվում է մի կետից և զալիս-կանգնում միևնույն կետին: Այս ճանապարհին անհմար է չունենալ վրիպումներ:

Մկրտության խորհրդով մենք վերածնվում ենք, մաքրվում և ամբողջական հաղորդակցության մեջ մտնում մեր երկնավոր Հոր հետ, իսկ երբ շեղվում ենք ճշմարիտ ուղուց, ընկնում ենք մեղքի ճիրամները: Ապականությունը բնակություն է հաստատում մեր մեջ և ժամանակ առ ժամանակ ալեկոծում մեր մերաշխարհը, խորապես ցավ պատճառում մեր հոգում: Մենք կորցնում ենք հաղորդակցությունը մեր Արարչի հետ, քանզի աղտոտում ենք մեզ, իսկ մեր Տեր Աստված մաքրություն է, սրբություն:

Ի՞նչ ընդհանրություն ունի խավարը լուսնի հետ:

Մեղքից ձերբազատվելու միակ միջոցն ապաշխարությունն է: Այն մեր ողջ կյանքում ուղեկցում է մեզ, քանզի մեր կյանքը մեղամշական է, քայց «Աստծո քաղցրությունը մեզ դեպի ապաշխարություն է առաջնորդում» (Բմմտ. Հոռմ. Բ 4):

Ապաշխարել մախևառաջ մշանակում է զոջալ: Ջոջման զգացումն առաջ է գալիս կատարած հանցանքի վնասակարության գիտակցումից և ուղեկցվում է հեծեծանքով, լացով, սխալը չկրկնելու վճռականությամբ:

Ջոջացողն անդրադառնում է իր գործած մեղքերին և կարիքն զգում դրանք խոստովանելու: Խոստովանությունը կատարվում է օծյալ հոգևորականի առջև, քանի որ միայն օծյալ հոգևորականն իշխանություն ունի մեղքերին թողություն տալու:

«Եթե մեկի մեղքերը ներեք, մա մերված կլինի» (Հովկ. Ի 22):

«Շշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, ինչ որ կապեք երկրի վրա, կապված պիտի լինի երկնքում: Եվ ինչ որ արձակեք երկրի վրա, արձակված կլինի երկնքում» (Մատթ. ԺԸ 18):

Խոստովանությունը լինում է թե՛ հրապարակավ, և թե՛ առանձնական: Առանց մեղքերից արձակում ստանալու անկալության խոստովանությունը թերի է: Մեղքերի շարքն ընթերցելուց հետո քահանան խոստովանողին արձակում է մեղքերից, քայց քահանան չէ, որ թողություն է տալիս, այլ քահանայի միջոցով ինքը՝ Հիսուս Քրիստոս:

Երբ որ մեղք ենք գործում, կամա թե ակամա վնասում ենք մեզ, մեր միանին, և քանզի վնասել ենք, պարտավոր ենք բարեգործությամբ և մուսիսկ զրկանքների զմով ջնջել մեղքը, որպեսզի մեր խիղճը խաղաղվի:

Մեղքը սիրո բացակայությունն է, զոհողությունը՝ սիրո երախտիքը:

«Մեղքի վարժը մահն է» (Հոտմ. Ջ 23), ապաշխարության պտուղը՝ Հաղորդության սուրբ խորհրդին մասնակցությունը, փրկությունն ու հավիտենությունը:

Երբ մեղանչում ենք, հավիտենական պատիժ է մեզ վերագրվում, բայց մեր զղջալու և փոխվելու դեպքում Աստված մահ մեր պատիժն է փոխում ժամանակավորի:

«Աստված, անգիտության ժամանակներն անտեսելով, այժմ պատվիրում է մեզ, որ ապաշխարենք» (Հմմտ. Գործք ԺԵ 30):

Ամենողորմ Տե՛ր, որ ինձ համար ապաշխարության ճանապարհ ես պատրաստել, ուսուցանի՛ր ինձ ճշմարտապես ապաշխարել ոչ միայն նրա համար, որ մողկալի է մեղքի մեջ մնալը, այլև քանզի հեռացել եմ քո սիրուց՝ կենաց աղբյուրից, որից խմելով՝ մոռանում եմ, թե ինչ է ծարավը: Եվ այժմ առավել քան երբևէ բարձրագույն եմ Հո մախընթաց կանչն ու քարոզը:

«Ապաշխարեցե՛ք, որովհետև երկնքի արքայությունը մոտեցել է» (Մատթ. Դ 17):



Մ ԲՈՆԱԳԻՏԱԿԱՆ



ԲԱԲԿԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ ՆԱՆՅԱՆ

ՀԱՄԱՌՈՏ ՊԵՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ «FILIOQUE»-Ի ՎԱՐԳԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ¹

Առաջին անգամ Filioque-ի ուսմունքն իր տակավին չձևավորված, սաղմնային վիճակում հանդիպում է ոչ թե Օգոստինոսի մոտ, ինչպես ընդունված է ասել և շատ հաճախ կարելի է հանդիպել տարբեր աստվածաբանական աշխատություններում, այլ Տերտուլիանոսի: Թեև այս երկու հեղինակներն էլ ունեն արևմտյան ծագում, սակայն միայն միջև գոյություն ունեն հիմնարար տարբերություններ այս առնչությամբ: Օգոստինոսը շատ մեծ հեղինակություն էր վայելում Արևմուտքում գոտ այն պատճառով, որ արևմտյան հայրերից առաջինն էր, ով համարձակվեց ինքնուրույնություն ցուցաբերել աստվածաբանությանը վերաբերող հարցերում: Իբրև կառոն մրան նախորդող լատին հայրերը որոշակի կերպով ընթանում էին արևելյան հայրերի կողմից նախագծած ուղիով:

Այսպիսով, ահա, Օգոստինոսի գործերում տեղ գտած վկայությունները արևմտյան հայրերն օգտագործում են իբրև հիմք՝ Filioque-ի ճշտությունը փաստելու համար: Անաչառ լինելու համար պետք է ասենք, որ Օգոստինոսի գործերում իրող հանդիպում են տողեր, որոնք և՛ խոսում են, և՛ հիմք են տալիս ենթադրելու, որ Սուրբ Հոգին բխում է նաև Որդուց: Դարձյալ անաչառ մնալու համար չենք կարող շրջան-

¹ Սույն համոտ պատմական ակնարկով ուզում ենք ամփոփառեալ մասնավորաբար Filioque-ի ուսմունքի ծագմանը և պատմական զարգացմանը՝ բնդհուպ միմչև Արևելյան և Արևմտյան Եկեղեցիների քաժամումը:

ցել ցաւ այն փաստը, որ այդ ցույց Ռեդիմակի մոտ հանդիպում են տողեր, որոնք վկայում են ճիշտ հակառակը, այսինքն՝ որ Սուրբ Հոգին թխում է միայն Հորից:

Որոշ արևմտյան հայրեր, հաճձիմս Ամբրոսիոսի, Հիլարիոսի, հետագայում՝ ցաւ Լեոն Մեծի, սկսեցին շարունակել օգոստինոսյան ավանդությունը, որով արևմտյան աստվածաբանական ավանդությունը դրվեց լուրջ հիմքերի վրա: Սա նպաստում էր և կողմնորոշող ուղեցույց դառնում հետագա շրջանի հեղինակների համար: Այսպիսի ծնունդ ունի ցաւ Filioque-ն, ըստ արևմտյան աղբյուրների, հաստատող, այսպես կոչված, «Աթանասյան Հանգանակը»², որը հայտնի է ցաւ «Quicumque Vult», «Symbolum Aethanasianum» կամ պարզապես «Aethanasianum» անունների տակ: Այս Հանգանակը ներառված է կաթոլիկ, Անգլիկան և մասամբ Լութերական եկեղեցիների ծիսակարգի մեջ: Հանգանակաբանությամբ զբաղվող մասնագետները գտնում են, որ այն չի կարող պատկանել Սուրբ Աթանասի գրչին, որը 4-րդ դարի եկեղեցական Հայր է, այլ գրվել է 450-500-ական թվականներին, հավանաբար Հարավային Ֆրանսիայում³:

Filioque-ի ուսմունքի հետքերը հստակորեն նկատվում են արդեն Տոլեդոյի (Toledo) Բ ժողովում (+47 թ.), որը դավանում էր. «Հայրն անձին է, Որդին՝ ծնունդ, Մխիթարիչը՝ ծնունդ չէ, այլ թխում է Հորից և Որդուց»:

Արիոսականներն Արևմուտքում զնալով այնպիսի հեղինակություն էին սկսում վայելել, որ Քաղկեդոնական եկեղեցին խիստ մտահոգվեց: 589 թվականին դարձյալ Տոլեդոյում Ռիչարդ Ա թագավորի անմիջական օգնականությամբ և հովանավորությամբ, որը մինչ այդ ընդունել էր քրիստոնեությունը, գումարվեց մի ժողով, որի հիմնական նպատակը՝ արիոսականությանը հարվածելն էր: Ժողովի օրակարգում դրված էր արիոսականներին ընդդեմ՝ Որդու համագոյության խնդրի ապացուցումը: Այս առնչությամբ ոչ մի կասկած չթողնելու համար, որ Որդին ճշմարտապես համա՛ն է Հորը, ժողովականները հռչակեցին, որ Որդին այնքան է համագո Հորը, որ ցույցնիսկ Սուրբ Հոգին, որ եղում է Հորից, եղում է ցաւ Որդուց: Ժողովը 23 բանադրանքներով ձևավորեց մի դավանանք, որի 3-րդ կետը վկայում էր. «Եթե որևէ մեկը չի հավատում, որ Սուրբ Հոգին թխում է Հորից և Որդուց և հավերժական է նրանց հետ միասին ու նման է նրանց, նգույն թող լինի»⁴: Եկեղեցու պատմության մասնագետներից ոմանք հակված են կարծելու, որ հենց այս ժողովում է, որ Filioque բառը ներմուծվել է Նիկիո-Պոլսյան Հանգանակի մեջ, քանի որ 450 թ. Իսպանիայում ոչ պաշտոնական կերպով այն արդեն դավանվում էր Հովիվ Պանտիացու կազմած Հավատքի խոստովանության մեջ և որ այն իր վերջնական ու պաշտո-

² The Creed of Saint Athanasius, The Holy Ghost is of the Father and of the Son, neither made, nor created, not begotten, but proceeding. St'u "The Book Of Common Prayer", The Seabury Press, 1979, page 864-865.

³ "The New Encyclopedia Britannica", Chicago, 1984, Vol. 5, page 245.

⁴ St'u Ռուսաստան Ռեչտունի, «Ընկերային կարգի հիմքերը», Երևան, 1996 թ., էջ 129:

նական ճանաչումը ստացավ Տոլեդոյի Գ ժողովում (589 թ.)⁵ հավելվելով Հանգանակին, որը սակայն չի համապատասխանում ճշմարտությանը⁶:

Filioque-ի կիրառության և գործածման լուրը ընդվզումներ առաջացրեց հույների մոտ: Նրանք լատիներների հասցեին ամփջապես մեղադրանք ուղղեցին, թե նրանք խեղաթուրում են Հանգանակը: 767 թվականին Ժամոխյի (Gençilly) քաղաքում ժողով է գումարվում, որի ընթացքում դարձյալ ըստ ամենայնի քննարկվում է Filioque-ի հարցը:

Հարկ է մշել նաև, որ Արևմտյան Եկեղեցու նորամույծ այս ուսմունքն իր ջերմ պաշտպանն է գտնում հանձինս ֆրանսիացի աստվածաբանների և Կառլոս Մեծ թագավորի, որն իր «*Libris Carolinis*» գործում լիովին արտահայտում է իր բարեհաճ վերաբերմունքն այս վարդապետության նկատմամբ: Filioque-ի պատմական զարգացման շարունակական օղակներից մեկն էլ 796 թ. Պաուլին Ակվիլացու մախագահած Ֆրիուլիի (Friuli) ժողովն էր, ուր Եկեղեցուն իրավունք վերապահվեց իր հավատո խոստովանությունն ուղեկցել բացատրական հավելումներով:

Հույներն առաջին անգամ չափազանց լրջորեն անդրադարձան այս խնդրին և իրենց բողոքի ձայնը բարձրացրեցին, երբ Filioque-ն Երուսաղեմում դարձավ արևելյան և արևմտյան վանականների խոսվության հիմնապատճառը: Բանն այն էր, որ արևմտյան վանականները, կրկնօրինակելով Կառլոս Մեծին, որն իր արքայական կապելլային հրաման էր տվել Հանգանակը երգել Filioque-ով, սկսել էին նույն Հանգանակը երգել նաև Զիթեմյաց լեռան վրա: Խնդիրը, Լևոն III Պապի կողմից քննության ենթարկվելով, այնուամենայնիվ չստացավ իր վերջնական լուծումը, հակառակ այն բանի, որ նա հայցվորներին ուղարկեց խնդրին ուղղակիորեն կապ ունեցող Կառլոս Մեծ թագավորի մոտ:

809 թ. Աախենում (Aix-la-Chapelle) ժողով է գումարվում, որտեղ պաշտպանվում և արդարացվում էր «ե յՈրդու» բանաձևն ու սրանից բխող ուսմունքը: Ժողովի գործող անձերից առավել աչքի էր ընկնում Թեոդոլֆ (Theodulf) եպիսկոպոս Օուլեանցին, որն իր «Սուրբ Հոգու մասին» («*De Spiritu Sancto*») գրքում, հիմք ընդունելով, իր կարծիքով, Սուրբ Երրորդության ուսմունքի ճշմարտագույն արտահայտությունն ամփոփող «Աթանասյան Հանգանակը», բացառապես ջատագովում էր Filioque-ն: Ի դեպ, նրա այդպիսի դիրքորոշման մեջ մեծ դեր էր խաղում Կառլոս թագավորի անձնական կարծիքը:

Լևոն Պապը, լսելով ժողովի պատասխանը, ի զարման շատերի, ընթացք չի տալիս դրան՝ հրաժարվելով է Filioque-ն պաշտոնապես հռչակելուց: Ընդհակառակը՝ նա հրահանգում է երկու արծաթյա տախտակների վրա փորագրել Հավատո Հանգանակն իր սկզբնական տեսքով, այսինքն՝ առանց Filioque-ի. մեկը՝ հունարենով, և մյուսը՝ լատիներենով, և ի ցույց մարդկանց փակցնել դրանք Ս. Պետրոսի

⁵ Նույն տեղում, էջ 128, Փր. К. Функ, "История христианской церкви" (Функ, Москва, 1911 г., стр. 240, Фрид. Руд. Гассе, "Черновная история" (Гассе), Казань, 1870 г., том 2, стр. 85.

Տաճարին: Այն սկսվում էր՝ «Ես՝ Հեռնս, դրեցի սա ի սեր ուղղափառ հավատքի, և վասն նրա պահպանության» բառերով: Սա, իմիջիպալոց, առանց ավելորդ մեկնաբանությունների, խոսում էր Հեռն Պապի խնդրո առարկայի առնչությամբ ունեցած վերաբերմունքի մասին:

Կաթոլիկ աստվածաբանները բացատրում են դա հիմնականում հետևյալ կերպ, թե «IX դարում, ի հակակշիռ Կառլոս Մեծի՝ Արևելքի հետ միությանը մտահոգված Հեռն III-ը դիմադրություն ցույց տվեց հանգանակի մեկնաբանության այսպիսի զարգացմանը, որը, միաժամանակ պահպանելով *Filioque*-ում ամփոփված ճշմարտությունը, արդեն ինքնաբերաբար տարածվել էր Արևմուտքում»⁶:

Filioque-ի վարդապետությունը գնալով լայնացնում էր իր տարածման աշխարհագրական սահմանները: Առաջինն այն հյուրընկալվեց Ֆրանսիայում և Անգլիայում, ապա, շնորհիվ կաթոլիկ միսիոներների անդուլ աշխատանքների, ընդունելություն գտավ որոշ սլավոնական երկրներում: Այսպես, երբ 9-րդ դարում կաթոլիկ քարոզիչները մտան Բուլղարիայի տարածքները՝ Ջրիստոսի վարդապետությունը տարածելու, նրանց Հանգանակը քարոզում էին *Filioque*-ի հավելադրությամբ:

• Երբ միջնադարում Հռոմեական Եկեղեցուց ներս ծագեցին անջատողական շարժումներ, որոնք պատճառ դարձան Անգլիկան և Բողոքական Եկեղեցիների առաջացմանը, իբրև բաժանման հետևանք՝ այս ուսմունքը մաս կազմեց նաև վերոհիշյալ նորաստեղծ Եկեղեցիների աստվածաբանական համակարգերի:

Որոշ գիտնականներ անկեղծ զարմանքով են դիտարկում այն փաստը, որ Բողոքական Եկեղեցին, որն այնքան բժախնդիր էր աստվածաբանական հարցերի նկատմամբ, ուղղակի ամուշադրության մատնեց *Filioque*-ի պարագան և այն ընդգրկեց իր դավանանքի մեջ:

Եկեղեցու պատմության մասնագետները մինչև օրս միակարծիք չեն այն հարցում, թե երբ է Հռոմեական Եկեղեցին *Filioque*-ն պաշտոնապես ներմուծել Հավատո Հանգանակի իր խմբագրության մեջ և այն դարձրել իր այսօրվա տեսքին՝ «*Credimus in Spiritum Sanctum, Dominum et vivificantem, qui ex Patre Filioque procedit*»:

Առաջ են քաշվել տարբեր կարծիքներ.

ա) Այն պետք է որ Հանգանակին ավելացած լինի իսպանիայում, ըստ երևույթին Բրագայի (Braga) 4-րդ ժողովից (657 թ.) հետո: Եվ ենթադրելի է, որ մինչև 1000 թվականը ընդունված չի եղել Հռոմում⁷:

բ) Այն ներմուծվել է Նիկողայոս I (858-867 թթ.) Պապի օրոք: Այս կարծիքին հակված պատմաբանները, իբրև հաստատող փաստարկ, բերում են Փոտ Պատ-

⁶ Տե՛ս «Սուրբ Հոգու բխման հունական և լատինական ավանդությունը» (այսուհետև՝ ԱՀԱՀԱ), «Էքսիսթենց», Ե - Զ, 1999 թ., էջ 88:

⁷ «Handbook Of Catholic Theology», Edited by Wolfgang Beinert & Francis Schussler Fiorenza, Crossroad, New York, 1995, «Filioque» by Karl Heinz Neufeld, page 254-255.

քրիստոքի 867 թ. շրջաբերականը, որում հերետիկոսական էր ճանաչվում ինչպես «ելլորդոյ»-ի հավելումը Հանգանակին, այնպես էլ ողջ կաթոլիկ աստվածաբանական ուսմունքը, և որում Պատրիարքը կոչ էր անում Օրթոդոքս Եկեղեցուն բանադրել Նիկողայոս I Պապին այն բանի համար, որ վերջինս փորձել էր իր Եկեղեցուն միացնել նորադարձ Բուլղարիան⁸։ Նույն կարծիքին է Մաքսիստենկ եպիսկոպոս Մուրաշանցը⁹։

զ) Դա տեղի է ունեցել Քրիստոփոր Պապի (903-904 թթ.) օրոք¹⁰։

դ) Ուսման գտնում են, որ Filioque-ն Հանգանակին պետք է ավելացած լինի Սերգիոս III Պապի (904-911 թթ.) գահակալության ընթացքում¹¹։

ե) Եվ, վերջապես, Եկեղեցու պատմության մասնագետներից շատերը գտնում են, որ հավելումը կատարվել է Բենեդիկտոս VIII Պապի ժամանակ, երբ գերմանական կայսր Հենրիխ II-ի խնդրանքով Հռոմեական Եկեղեցին, ի դեմս իր Քահանայապետի, արտոնում է Filioque-ի ծիսական կիրառությունը, որը տեղի է ունեցել 1014-1015 թթ. միջև ընկած ժամանակահատվածում¹²։

Միջայել Կեռուպարիոս Պատրիարքը 11-րդ դարում կրկին անգամ դատապարտում է լատինական նորամուծությունը՝ սկիզբ դնելով վեճերի մի նոր փուլի։ Ծագած խնդիրները լուծելու համար Հռոմի Պապի հատուկ հրամանով պատվիրակներ Գումբերտը, Պետրոսը, Ամալֆին եպիսկոպոսը և Հռոմեական Եկեղեցու Կարդինալ-կանցլեր Ֆրիդրիխ Լոթարդինացին մեկնում են Կ. Պոլիս։ Նրանք այնքան մեծ վստահություն ունեին Կոստանդին կայսեր հովանավորության վրա, որ ոչ միայն չէին հարգում պատշաճ կարգ ու կանոնը, այլև ողջ բանակցային գործընթացին հաղորդում էին ընդձևած վիճաբանական բնույթ։ Կաթոլիկ պատվիրակներն իրենց այնքան ինքնակամ և գոռոզ էին պահում, որ նույնիսկ Կոստանդին կայսրը, որի հրամանով թարգմանվում և ժողովրդի մեջ էին տարածվում Գումբերտի աշխատությունները, իրեն վիրավորված և անուետված զգալով, ստիպված է լինում հրաժարվել իր հովանավորչական առաքելությունից։

Եկեղեցական հարցերում, բնականաբար, առավել շահագրգռված և հետաքրքրված էր Կ. Պոլսո Պատրիարքը, որն ականատես լինելով կատարվածին, այն է՝

⁸ Ի դեպ, Նիկողայոս I Պապին արդարացնելու փորձեր են անում Filioque-ին իրենց հակառակությամբ հայտնի ֆրանսիացի աստվածաբանները, երբ հերթական անգամ պոլեմիկ բնույթի վեճ է ծագում Ռույմերի և լատինների միջև։ Ռատրամոս Կորմենացի ամուսնով վաճականն ընդդեմ Ռույմերի գրում է «Libri IV contra Graecorum errores» գործը, որով ամեն կերպ ջանում է ապացուցել նորամուծության հարազատությունը թե՛ Աստվածաշունչ Մատյանին և թե՛ Եկեղեցական Ավանդությանը։

⁹ Տե՛ս Մաքսիստենկ եպ. Մուրաշանց, «Պատմություն Քրիստոնեական Եկեղեցույ», Գալաց, 1898 թ., էջ 196։

¹⁰ М. Э. Паснов, "История Христианской Церкви" (Паснов), Брюссель, 1994 г., стр. 555-556.

¹¹ Նույն տեղում, էջ 556։

¹² ԱՀՀՀԼԱ, էջ 88։

որ Արևմտյան Եկեղեցին լուրջ չի ըմբռնում Կ. Պոլսո Աթոռի հեղինակությունը՝ այն համարելով ստորադաս և ենթակա Աթոռ, հունիսի 15-ին հրաժարվում է շարունակել բանակցությունները: Ի պատասխան սրա, մույն՝ 1054 թվականի հունիսի 17-ին պատվիրակները Գումբերտի գլխավորությամբ Սուրբ Սոֆիա տաճարի Ավագ խորանին են դնում Հուճական Եկեղեցու բանադրման կոմոդակը՝ լի մեղադրանքներով և կշտամբական խոսքերով: Ապա մրանք թոթափում են իրենց ոտքերի փոշին «ի վկայություն *մոցա*» և դուրս գալիս, որը բաժանման ավետարանական հաստատումն էր ըստ Մարկոս Ավետարանի այն խոսքի, թե «*Եվ ուր որ ձեզ չեն ընդունի ու ձեզ չեն լսի, երբ այնտեղից ելնեք, ձեր ոտքերի փոշին թափ տվեք՝ իբրև նրանց դեմ վկայություն*» (Մարկ. Զ 11):

Հույների պատասխանն էլ իրեն շատ սպասեցնել չի տալիս. անմիջապես դրանից հետո, հունիսի 20-ին, նրանք պաշտոնապես բանադրում են Արևմտյան Եկեղեցուն¹³:

Եկեղեցու այս նոր բաժանումը տարբեր հեղինակների կողմից տարբեր կերպ անվանվեց՝ խորքում արտահայտելով բաժանյալ Եկեղեցու փաստի միևնույն ճշմարտությունը.

«վերջնական խզում»¹⁴:

«Եկեղեցական բաժանում»¹⁵:

«Եկեղեցական մեծ պառակտում»¹⁶:

¹³ Թեև Եկեղեցու պատմության մեջ ըմբռնված է, որ «հաղկեդոնական Եկեղեցու բաժանումը կաթոլիկ և Արևելյան Օրթոդոքս Եկեղեցիների տեղի է ունեցել հենց 1054 թվականի հունիսի 20-ին, սակայն շատ գիտնականներ այսօր գտնում են, որ վերոհիշյալ տարեթիվը բաժանման զործընթացի մեկ էական իրադարձության թիվն է, որն առանց հիմնավորված պատճառների ընդունվել է իբրև բաժանման տարեթիվ: Իրականում բաժանումը երկար ու ձիգ տարիների արդյունք է եղել: Մրովհետև մի բան հստակ է. որ տակավին 11-րդ դարում Հռոմն ու Պոլիսը միության մեջ էին և միայն 13-րդ դարում է, որ հստակորեն նկատվում է բաժանումը այս երկու Եկեղեցիների միջև: Հույները համոզված էին, որ Պապի անվան բացակայությունը Արևելյան Եկեղեցու *chorus*-ներում արդեն սխիզմայի խոսում վկայությունն է: Սակայն դժվար թե մրանք հավատամ, որ պառակտումը տեղի է ունեցել 1009 թվականին, քանզի սա վերջին տարին էր, երբ Հռոմի Պապի անունը հիշատակվել էր դիպտիխներում: Եվ թե սրան ավելացնենք մաս այն փաստը, որ Բյուզանդիայի Եկեղեցականները 1089 թվականին պաշտոնապես հայտարարում են, որ Պապի անունը սխալմամբ և կամ պատահականորեն էր դուրս մնացել դիպտիխներից, և որ հարաբերությունները 1054 թվականից հետո այս երկու Եկեղեցիների միջև, այնուամենայնիվ, շարունակվում էին, միանգամայն դժվար է միանշանակորեն ասել, թե որ թվականին է տեղի ունեցել բաժանումը: Այս մասին ավելի հանգամանորեն տե՛ս Steven Runciman, «The Eastern Schism» (A study of the Papacy and the Eastern Churches during the XI th and XII th centuries) Oxford, Clarendon Press, 1955.

¹⁴ Функ, стр. 247.

¹⁵ Дж. С. Робертсон, «История Христианской Церкви» (Робертсон), 1890 г., стр. 941.

¹⁶ Паснов, 527.

«Մեծ խզում»¹⁷:

«Մեծ հերձված»¹⁸:

Հոռմի և Կոստանդնուպոլսի եկեղեցիների բաժանումը շատ բարդ ու դժվարին մի գործընթաց է, որը բացառում է հարցի մեկնաբանման միակողմանի մոտեցում: Նրանում առկա են բազում ենթապատճառներ: Բաժանման երևույթի մեջ մկատվում են այնպիսի դրդապատճառներ, ինչպիսիք են ազգագրականը, կրոնականը ու դավանաբանականը, պետականն ու քաղաքականը, ֆրանկյան կայսրության ստեղծումը, կյանքի իդեալի յուրովի մեկնումն ու ընդունումը, խաչակրաց արշավանքները, ավանդության և մտածելակերպի տարբերությունները, ցորվեզացիների ներխուժումը Բյուզանդական Իտալիա, Հոռմի բարեփոխումները և, վերջապես, մարտնչող Պապականության և պափականողական Կ. Պոլսո Աթոռների անգիջում և անհաշտ դարավոր մրցակցությունն ու պայքարը:

Երկու եկեղեցիների միջև եղած կապերն անդառնալիորեն չվերացան. տարիների ընթացքում վերամիավորման բազում փորձեր արվեցին, սակայն ապարդյուն: Օրինակ՝ Ուրբանոս II Պապը 1098 թ. Բարիում ժողով է գումարում, որին մասնակցում էին մաև հույն եպիսկոպոսներ: Ժողովին սխուլաստիցիզմի ակունքների մոտ կանգնած հռչակավոր աստվածաբան Անսելմ Քենթերբերցին փայլուն կերպով պաշտպանում է լատինական վարդապետությունը: Այս առիթով մա մույնիսկ մի գիրք է գրում՝ «Սուրբ Հոգու բխման մասին» («De processione Spiritus Sancti») վերտառությամբ: 1135 թ. Անսելմ եպիսկոպոս Գավելերցցին, Կ. Պոլսում կայսերական դեսպան եղած Ժամանակ, մեծ բանավեճի մեջ է մտնում հույների հետ դարձյալ Filioque-ի խնդրի կապակցությամբ: 1166 թ. Միքայել Անիսիլաուս Պատրիարքի նախագահությամբ ժողով է գումարվում, որտեղ մեկ անգամ ևս հաստատում են հույնական դավանանքի ուղղափառությունը:

Սա բնավ չի խանգարում կաթոլիկներին իրենց «12-րդ Տիեզերական» ժողովում (1215 թ.) ընդունված հանգամանկում դավանել, որ Հոգին երկուսից է:

Երբեմնի հզոր Բյուզանդիայի քաղաքական վիճակը գնալով վատթարանում էր, և զորեղ դաշմակցի ներկայությունն ու օգնականությունը տարեցտարի ավելի էին իրեն զգալ տալիս: Դրանով են պատճառաբանում օրթոդոքս աստվածաբանները իրենց եկեղեցու ներկայացուցիչների մասնակցությունը Լիոնի և Ֆլորենցիայի ժողովներին: Առաջին ժողովում, որը բացվեց 1274 թ. մայիսի 7-ին 500 եպիսկոպոսների, 1000 վանական-վարդապետների, Իսպանիայի և Ֆրանսիայի թագավորների, Հունաց կայսրի և Թաթարական խանի պատգամավորների ներկայությամբ, քննության առնվեցին մի շարք խնդիրներ, որոնց մեջ առանցքային տեղ էր զբա-

¹⁷ Տե՛ս Գարեգին Ա. «Տեսական աստուածաբանություն» (այսուհետև՝ Տ.Ա.) (ամսիպ), էջ 88:

¹⁸ Տե՛ս Արշէն քնն. Այվազեան, «Համառոտ դասընթաց քաղաական քրիստոնեւթեան եւ քննութիւն մոր աղանդներու եւ կրօնական շարժումներու» (ամսիպ), Նիւ Եօքը, 1997:

դեցնում հույների և լատինների միջև միաբանության հարցով զբաղվող հուլիսի 6-ի ճիստը¹⁹:

Հույների՝ Ֆլորենցիայի ժողովին մասնակցելը պայմանավորված էր երկրի ներքին վիճակի կտրուկ վատթարացմամբ, երբ կայսրության առաջ իբրև օրհասական վտանգ կանգնում է Օսմանյան կայսրության սպառնալիքը: Հովհաննես Պալիոլոգ կայսրն անմիջապես բանակացություններ է սկսում Եվգենիոս IV Պապի հետ՝ մտածելով, որ եկեղեցական միության միջոցով կկարողանա ձեռք բերել Հոռոմի հովանավորությունը, որն իր հերթին զջանակում էր, որ Հոռոմի Պապը եվրոպական թագավորների միացյալ բանակը պիտի ուղարկի Բյուզանդիայի՝ օգնության: Բանակցությունների ընթացքում ձեռք բերված պայմանավորվածության համաձայն սահմանվել էր հետևյալ կետը, որ «*Երուսաղեմի համար սահմանված խաչակրությունը պիտի անցնի Կ. Պոլսի վրայով*»²⁰:

Ժողովը սկսվում է 1438 թ. Իտալիայի Ֆերրարա (Ferrara) քաղաքում, բայց տեղում բռնկված ամենախաղաղ ժամտախտի համաճարակի պատճառով տեղափոխվում է մոտակա Ֆլորենցիա (Firenze) քաղաք, որտեղ և զույմարվում է Կաթոլիկ Եկեղեցու հերթական՝ թվով 17-րդ տիեզերական ժողովը²¹: Ժողովում, որն իր Հանգանակում դավանվում է՝ «*Եանուն ամենասուրբ Երրորդությունն Հօր եւ Որդույ եւ Հոգւոյն Սրբոյ սա տիեզերական Ֆլորենտեան ժողովոյս հաւանութեամբ, կը սահմանենք՝ որ սա հաւատոյ ճշմարտութիւնը բոլոր քրիստոնեաներէն հաւատացոյի եւ ընդունուի եւ ասանկ ալ. ամենքը դաւանին՝ թէ Հոգին Սուրբ յաւիտենաբար ի Հօրէ եւ յՈրդույ եւ եւ իր էութիւնն ու անձնատրութիւնն ի Հօրէ եւ յՈրդույ միանգամայն ունի եւ երկուքէն յաւիտենականաբար իբրեւ մէկ սկիզբէ ու մէկ փշմամբ կ'ելլէ*»²², ընդունվում է լատինական «եւ յՈրդույ» հավելումը: Ժողովում հաստատվում է «ի սկզբանէ»-ի վարդապետությունը, որով չնայած դավանվում էր, որ Սուրբ Հոգին իբրև միակ սկիզբ ունի Հորը և Որդուն, սակայն միննույն ժամանակ փաստվում էր, որ և՛ Որդու, և՛ Սուրբ Հոգու միակ սկիզբը անսկիզբ Հայրն է: Այս զգալի զիջման փոխարեն նրանց թույլատրվում է շարունակել «*խմորուն հացի*» պատարագն ու ամուսնացյալ հոգևորականությունն ունենալը: Ուղղափառ ներկայացուցիչներից միայն հունական պատվիրակության ներկայացուցիչ, եպիսկոպոս²³ Մարկոս Եփե-

¹⁹ Տե՛ս Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան, «Ազգապատում», Կոստանդնուպոլիս, 1914 թ., հատոր Բ, էջ 1683:

²⁰ Լ. Խ. Ամասյան, «Հայկական աղբյուրները Բյուզանդիայի ամկման մասին», Երևան, 1957 թ., էջ 10:

²¹ Գոյություն ունի մեկ վարկած ևս, որի համաձայն Եվգենիոս Պապը, ի վիճակի չլինելով հոգալու ընդհանուր թվով 700 հոգու հասնող արևելյան պատվիրակությունների կարիքները, համաձայնում է Ֆլորենցիայի բմակիչների առաջարկությանը՝ ժողովը փոխադրել իրենց քաղաք: Տե՛ս Փափագեան, էջ 229:

²² Փափագեան, էջ 86:

²³ Որոշ աղբյուրներում նա հիշատակվում է իբրև միտրոպոլիտ: Տե՛ս *Иеромонах Иосиф*,

սացին է, որ համարձակվում է արտահայտել իր անհամաձայնությունը: Նա բանավեճի մեջ է մտնում դոմինիկյան միաբանության պրովինցիալ Հովհաննեսի հետ՝ խնդրո առարկա ունենալով Ս. Բարսեղ Մեծի՝ Եվնոմիոսի դեմ գրած աշխատությունից մի քաղվածք, որ լատիները բառեր պակասեցնելով, ենթադրական միտքը դարձրել էին հաստատական և այն ծառայեցնում էին ի պաշտպանություն Բիսպուս-ի, միմչդեռ Մարկոսը ժողովին իր հետ բերած Ս. Բարսեղի ձեռագրերով ցանկացնում էր ապացուցել հակառակը²⁴:

ՈՒՏԻՆԱԿԱՆ ԲՆԱԳԻՐ	ՀՈՒՆԱԿԱՆ ԲՆԱԳԻՐ
“Что Духъ по достоинству занимает второе место по Сыне, так какъ отъ Него иметь бытіе отъ Него приѣм-леть и возвѣщаетъ намъ и совер-шенно зависит отъ одной причины, сіе ————— предаетъ слово бла-гочестія”.	“Что Духъ по достоинству зани-мает второе место по Сыне, ————— ————— ————— —————, сіе может быть пре-даетъ слово благочестія” ²⁵ .

Ուղղափառ Եկեղեցին երբեք չմոռացավ Մարկոս եպիսկոպոսի արարքը՝ նրան հետազայում «Ուղղափառ Հավատքի Պաշտպան» պատվավոր տիտղոսը տալով:

Օրթոդոքս ավանդության համաձայն, երբ Պապին տեղեկացնում են ժողովում ձեռք բերված արդյունքների մասին և ասում Մարկոսի ընդվզման մասին, Պապն ասում է. «Այսպիսով, մենք ոչինչ չարեցինք»²⁶: Կաթոլիկներն այսպես են արձագանքում. «...ամո յետ բազմապատիկ խօսից եւ վիճմանց ի վերայ բոխման Հոգւոյն Սրբոյ, եւ բացայայտ հաստատելոյ Հատինացւոց զայն ճշմարտութիւն, Յոյնք առ հասարակ՝ բաց ի Մարկոսէ եպիսկոպոսէն Եփեսոսի ընկալան եւ ձեռն եղին դաւանութեանն»²⁷, «... բայց ի չարախօսութենէ խոռվահոյզ արանց ոչ ինչ երկարատեւ եղեւ միաբանութիւնն, այլ յետ ոչ բազմաց քակտեցաւ ի պատճառս Մարկոսի եպիսկոպոսին Եփեսացւոյ, որ հրաժարեցաւ ի ստորագրութենէ վճռոյ միաբանութեանն:

“Чтение из истории Христианской Церкви” (Иер. Иосиф), Тифлис, 1857 г., стр. 115.

²⁴ Ժողովի մասին առավել համաձայնալից տեղեկությունների համար տե՛ս Архимандрит Амвросий (Погодин) “Святой Марк Эфесский и Флорентийская Уния”, Москва, 1994 г.

²⁵ Ինչպես կարող ենք տեսնել, տարբերությունները թե՛ տեքստային, և թե՛ իմաստային ակնհայտ են: Հօգուտ հունական ավանդության են խոսում նաև քանասիրության ձեռքբերումները՝ հնազույմ ձեռագրերում և Սուրբ Բարսեղի ձիջյալ գործի առաջին հրատարակություններում քաջակայում են խնդրո առարկա բառերը: Այս մասին տե՛ս “Творения иже во святых отца нашего Василия Великого Архиепископа Кесарии Кападокийскаго”, Москва, 1993 г., стр. 127-128.

²⁶ Иер. Иосиф, стр. 116.

²⁷ Փափագեամզ, էջ 229:

եւ այս կայծ փոքր բաւական եղել վերստին արծարծել եւ համապագորդել զհրդեհ հակառակութեան եւ հերձուածոյ»²⁸:

Ժողովից ամենաշատը դժգոհ մնաց Հովհաննէս կայսրը: Ի վերջոյ հասկանալով, որ Եվգենիոս IV Պապն այդ շրջանում լիիրավ ազդեցություն չուներ եվրոպական տիրակալների վրա, նա ջախսմբով վերադառնում է Կոստանդնուպոլիս:

Ֆլորենցիայի ժողովը վատ հետևանքներ ունեցավ օրթոդոքսների համար այն առումով, որ երկու բարձրաստիճան հոգևորականներ՝ Նիկիայի Բեսարիոն և Կիևի Իսիդոր ողու արքեպիսկոպոսներն ընդունեցին հոռմեական դավանանքը, որի փոխարեն անմիջապես ստացան կարդինալական աստիճան:

Հույն և Լատին եկեղեցիների վերջնական բաժանման վերջին դրվագը Հովհաննէս VII Պալեոլոգ կայսեր եղբայր Կոստանդին XII-ի և Նիկողայոս V Պապի բանակցային հարաբերություններն էին. առավել քան երբևէ կայսրության գոյությունը վտանգված տեսնելով Մահմեդ II-ի կողմից՝ կայսրը դարձյալ օգնություն է խնդրում Պապից՝ փոխարենը խոստանալով իրականացնել միաբանության գործընթացը: Ռոռ զինվորական ուժով 1452 թ. մոյեմբերին Կոստանդնուպոլիս է ժամանում մեզ արդեն հայտնի Իսիդոր Ռուսը: Սա, ամբողջ, դիվանագիտական սխալ էր՝ Կ. Պոլիս ուղարկել մեկին, որին այնտեղ բոլորը տառում էին: Ինչևէ, Պոլսում մեծ խռովություններ են առաջ գալիս, որոնք հրաժրվում էին հատկապես, այսպես կոչված, «ուղղափառական կուսակցության» կողմից, որի ղեկավարը Գեորգիոս Աքուլաստիքոսն էր²⁹: Պարզ հավատացյալները ամբողջ քաղաքով ցույցեր անցկացնելով հայտարարում էին. «Չունիք մեք պէտս, ո՛չ գօրաց, եւ ո՛չ դաշնակցութեան Լատինաց, քա ի մէնջ պաշտօն բաղարջից», որով այլևս անհամար է դառնում որևէ բանակցային գործընթաց:

Միությանը նպատակաուղղված հետագա մի քանի նախաձեռնությունները ևս դատապարտված էին անհաջողության:



²⁸ Նույն տեղում, էջ 631:

²⁹ Այս մասին տես Յ. В. Удальцова, "Борьба Византийских Партий на Флорентийском Собрании и роль Виссария Никейского в заключении Унии", "Византийский Временник", Москва, 1950 г., том III.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՐԿԱՎԱԳ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

ՍԱՐԿԱՎԱԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԿ ԵՎ ԱՅՍՕՐ

Ահա կրկին մեճ տոնախմբում եմք Ա. Ստեփաննոս Նախավկայի պայծառ հիշատակը: Եկեղեցին բազում անգամներ տոնել է այն, չմայած կրկնել, սակայն, այդուհանդերձ, ամեն անգամ յուրովի վերաիմաստավորել ու ավելի ժամանակահունչ նշանակություն է հաղորդել նրան: Այսօրվա տոնակատարությունն էլ ունի իր յուրահատկությունները՝ կապված մոր սարկավագ սերնդի և Եկեղեցու այժմեական սրբազան պահանջների հետ: Եկեղեցու կանչերը ներթափանցում են յուրաքանչյուր ազնիվ հոգևորականի գիտակցության և էության մեջ:

Առաջին վկա մախասարկավագի անունը հատկապես մեճ՝ սարկավագներս իրավամբ օրհնաբանած կլինեմք, եթե մտանենում հայացքով զննեմք անցյալի մեր հոգևոր զանձարաններում սարկավագությանը տրված որակումներն ու քնորոշումները և այնտեղից քաղված սերմերը, կարողանա՞նք անեցնել այսօրվա փոշոտ և տակավանդոթ Հայոց հողում:

Ինչպե՞ս անեց և ճյուղավորվեց այս աստիճանը: «Սարկավագ» բառը հունարեն «Διακονος» բառի հայերեն թարգմանությունն է, որ Քրիստոսի ժամանակներում նշանակում է «սպասավոր, ծառա»: Հովհաննո Ավետարանում հանդիպում եմք այդ բառի գործածությանը: Երբ պատմվում է Գալիլիայում կատարված առաջին հրաշքը՝ Հիսուսի ջուրը գինու փոխակերպելը, Մարիամ Աստվածածինը, պատվիրելով ծառաներին կատարել Հիսուսի հրահանգները, նրանց կոչում է սարկավագներ:

Ծառայությունը քրիստոնեական կրոնում վեհորեն գնահատված առաքինություն է: Հիսուս առանցքային նշանակություն է տալիս ծառայասիրությանը. «Որ կամիցի ի ձեռք առաջին լինել, նդիցի ձեր ծառայ: Որպէս Որդի մարդոյ ոչ եկն պաշտօն առնու, այլ պաշտել. եւ տալ զանձն իւր փրկանս փոխանակ բազմաք» (Մատթ. Ի 28): Իր աշակերտների ոտքերը լվանալով Հիսուս հաստատում է մարդկային սրտերի վեհությունը, և մեր առջև հառնում է ծառայասիրությունը՝ իր սպիտակափայլ, մաքրաբույր տեսքով: Ահա այս ոգին ավանդեց Եկեղեցուն Աստված, և Առաքյալները աստվածային ներշնչմամբ այն փոխանցեցին ի մէջ մարդկան: Նրանք

Քիմնեցիք մի հատուկ կարգավիճակ, որպեսզի «Քրիստոսին մվիրված յուրաքանչ-յուր անձ իր քրիստոսատիպ սպասավորությունը սկսի ծառայությամբ: Այդ ամենը նրանք այսպես կատարեցին. «Վայել չէ մեզ Աստծո խոսքը թողնել և սեղանին ծառայել. ընտրեցեք, եղբայրներ, ձեր միջից յոթ վկայված մարդիկ, որոնց այս պետքերի վրա կարգենք»: Եվ ապա ասվում է, թե ընտրեցին Ստեփաննոսին՝ հավատքով և Սուրբ Հոգով լի մի մարդու, և վեց այլ արժանի անձանց, ու առաքյալները նրանց վրա ձեռք դրեցին:

Նախնական Եկեղեցում այս աստիճանն հավատացյալների կենցաղային դժվարություններով զբաղվելու ծանրությունը ունեցողը իր վրա էր վերցրել և հատկապես «Սիրո ճաշեր»-ի ընթացքում սպասավորելու գործառությունը: Այս ամենը ավելի է ճշտվում հետագա դարերի շրջապատները դիտելիս: Սարկավագը եպիսկոպոսի, երբեմն նաև քահանայի բեկանած հացն ու զինքն բաժանում էր ներկա եղող հավատացյալներին: Սակայն ինչպես տեսնում ենք Գործքի հետագա ընթացքից, Ստեփաննոսը ոչ միայն սպասավոր էր, այլև Սուրբ Հոգու շնորհներով օժտված, մեծամեծ նշաններ էր կատարում, քարոզում էր Աստծո խոսքը, և նրա աստվածատուր իմաստությունը ոչ ոք չէր կարողանում ընդդիմաբանել: Նշանակում է, սարկավագը պետք է ոչ միայն ծառայության մեջ լիներ, այլև ունենար շնորհներ քարոզելու, վկայելու Տիրոջ խոսքը: Չնայած մեր առջև այն ժամանակներից քիչ օրինակներ ունենք, սակայն եղած տվյալների համաձայն կարող ենք առանձնացնել սարկավագության Քիմնական գծերը: Բնական է նաև այն, որ առաքյալները, իսկ հետագայում նաև քահանա-եպիսկոպոսները չէին կարող ամեն մի հավատացյալի մեկնաբանել Ավետարանը, մանավանդ եթե մեծ համայնքի հովիվներ էին: Փոքրիկ հարցերին Քիմնականում սարկավագներն էին պատասխանում: Հետևաբար, պատահական մեկը սարկավագ չէր կարող ձեռնադրվել, այլ նա, ով առաջացած էր հավատքի մեջ և քաջածանոթ «Քրիստոսի ուղղափառ վարդապետության սկզբունքներին: Առաջին դարերի պատկերացմամբ այդ աստիճանը հավատացյալ ժողովրդի հատկապես կենցաղի տեսանկյունից դիտված ծառայություն էր նկատվում և միաժամանակ զարդարված աստվածային շնորհներով: Ի հարկե, այդ վիճակին կոչված բոլոր անձիք մասնօրինակ չէին սպասավորում: Թուրաքանչյուրն ուներ իր հավատքի և մվիրումի արտացոլանքը: Բայց երբ ցանկանանք մասնավորեցնել և ծաղկեփնջի մեջն Եկեղեցու մաքրության ավագանուն ի մի բերել այդ աստիճանի գլխավոր, կարևոր կողմերը, այն գրեթե այս տեսքն ուներ. «*Իսկ իբրեւ գոհասցի գլխաւորն եւ կցիցէ գովութեամբ ամենայն ժողովուրդն, որ առ մեզ սարկավագունք կոչին՝ տան իւրաքանչիւր ումեք յայնցամէ, որ անդեմ ճաշակել ի գոհացելոյ հացէն եւ ի զինույն եւ որք չեն անդէն՝ տանին առ մոսա*»: Այս նկարագրությունը վերցված է «Առաքելոց պատարագ» կոչվող Տիրոջ Քիշատակի արարողության նախնական

ձևից: Նույն տեղում եղած մեկ ուրիշ հատված ամբողջացնում է պատկերը. «Իսկ տղւոսիւն եւ հաղորդութիւն ի գոհացելոց ամտի առնի իւրաքանչիւր ումնը, եւ որ ամոլ չեն, առաքի առ մոսա ի ձեռն սարկաւագացն:

Որ քնչավէտքն են եւ կամին, իւրաքանչիւր ըստ յօժարութեան գիւր գոր կամի տայ, եւ որ ինչ ժողովի, մթերի առ գլխաւորին, եւ սա խմամ ունի եւ կալամաւորաց, եւ օտարաց ի տար աշխարհէ եւ առ հասարակ ամենեցուն, իսկ որոց պէտք ինչ են՝ հոգաբարձու լինի» (Հայր Հովսեփ Գաթրճեան, «Արքազան Պատարագամատոյցը Հայոց», էջ 24): Երբ ամբողջապես այն ընթերցում ենք, նկատում ենք ման երկու ուրիշ շատ կարևոր առանձնահատկություններ.

1. Սարկավագը սպասավորը էր Տերունական խորհրդի, ապա՝ այդ ամենը կատարող կղերականի: Նաև իրավունք ուներ հացն ու գինին մատուցել խորհրդականարին, և երբ այն իրագործվում էր, իջեցնելով, բաժանում էր ժողովրդին: Իսկ ովքեր ներկա չէին, մրանց համար տաճում էր արարողությունից հետո: Ուղղակի իմաստով մրան իրավունք էր տրված մշտական շփում ունենալ «Զրիստոսի Մարմնի և Արյան հետ: Ահա առաջինը:

2. Հաջորդ կարևոր պարտավորությունը Պատարագի ընթացքում թե՛ ներկա հոգևորականներին, և թե՛ հավատացյալներին հրավիրելն ու հուշելն էր, թե երբ պետք է աղոթեն, ինչպես և՛ ինչ պետք է խնդրեն Աստծուց: Նա կարգավորում էր ման արարողության հերթակարգը. «Սարկաւագն ասասցէ,- Արձակեսցուք ոյք յապաշխարութեան կայք,- եւ կամ,- ծունր կրկնեսցուք, հաւատացեալք,- և այլն» (Նույնի էջ 30):

Մեր քննվելիք հարցին բավականին օգտակար օժանդակություններ է մատուցում «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն: Այնտեղ եղած առաքելական կանոններում ասվում է, որ սարկավագները կարգված են սրբությամբ սպասավորել Սուրբ Պատարագին և Տերունական խորհրդին: Բացի այդ, պիտի խմամեն ման այրիններին, վշտացյալներին և հոգատարություն ցուցաբերեն ծերերի նկատմամբ: Նրանք պիտի պահպանեն կարգունակո՞ն ու լուրջու՞մ՝ արարողությունների ժամանակ:

Բարեպաշտ սարկավագների ցայտուն օրինակների ենք հանդիպում ման «Հայսմավորք» կոչված վարքաբանության մեջ: Ժիշտ է, այնտեղ տրված տեղեկությունները ամբողջապես գիտական հիմք չունեն, բայց, ինչպես մեր Սուրբ Ավանդությունը, իրենց մեջ պարունակում են ճշմարտության զոհարներ: Նրանք պարզապես գալիս են մեզ օժանդակելու. «Առաքյալները մրանց ընտրեցին իբրև հավատարիմ խնամածուներ որբերին ու ալրիներին,- մեկ այլ տեղում՝ աղքատներին» («Հայսմավորք», Ստեփաննոսի ընկերների՝ վեց մախասարկավագների վարքը):

Հետագա դարերի ընթացքում եկելեցու կանոնականացմանը, կազմակերպչական կարգավորմանը զուգընթաց, նվիրապետական աստիճանները ավելի են ձևավորվում ու ամբողջականացվում, և մեր այս համեստ աստիճանը ավելի է ճշտում

իր կատարելիք պարտականությունները: Օրինակ՝ Նիկիական կանոններում խըստիվ արգելվում էր տան խորհուրդներ կատարելը. այն վերապահվում էր միայն եպիսկոպոսին ու քահանային: Լուիջիայոց, կանոններում նաև շեշտվում է եպիսկոպոսին սպասավորելու հանգամանքը:

Անհավատ և անօրեն սարկավագների՝ իրենց աստիճանը արատավորելու դեպքեր եղել են նաև հետագա դարերում: Դա երևում է նրանց մեծահատիկ արարքները արգելող կանոններից: Սարկավագի կատարած մկրտությունը չեղյալ է համարվում և մկրտվողը՝ պիտանի կրկին մկրտության: Նույնիսկ եթե Անկյուրիայի ժողովի կանոններում սարկավագը օծում է ընդունում, այդուամենայնիվ այն վերաբերում է կուսակրոնությանը, այսինքն՝ արեղա դառնալու մախակոչումին և ո՛չ քահանայական աստիճանին: Այդպիսի երևույթներ կային նաև Հայոց մեջ: Մեզ ավելի հետաքրքիր է, թե Հայ Եկեղեցում ինչպիսի՞նք է եղել այս մկրտապետական դարձած աստիճանակարգումը: Պիտի համարձակորեն խոստովանենք, որ սկզբնական շրջանում գրեթե այն մեծ է եղել ընդհանրական Եկեղեցում եղածին, բայց այնուամենայնիվ առանձնահատկություններ նկատվել են: Մովսես Խորենացու «Հայոց Պատմություն»-ից մեզ հայտնի է Սուրբ Ներսես Մեծ Հայրապետի շնչով սնված խաղ սարկավագի անունը: Դատելով պատմական տվյալներից՝ մա դեռևս իր սարկավագության ժամանակ մեր Եկեղեցում եղել է բավականին հզոր անհատականություն: Երբ Ներսես Մեծը իրագործում էր իր բարեկարգչական, վարչական ծրագրերն ու բացում հիվանդանոցներ, ծերանոցներ և ուրիշ մանատիկ հիմնարկներ, այդ ամենի վրա տեսուչ, հսկիչ է կարգում իր խաղ սարկավագին, մինչդեռ այն ավելի կվայելեր եպիսկոպոսություն ունեցող մեկին: Այս բոլորը խոսում է այդ սարկավագի բարձր արժանիքների մասին, և ինչպես Պատմահայոց էր վկայում՝ մա մի աղքատասեր, հավատավոր, քաջ և առաքինի մարդ էր: Նա կաթողիկոսի մոտ իր այդ վարքով այնքան վստահություն էր ձեռք բերել, որ Ներսես Մեծն աքսորվելիս խաղ սարկավագին եպիսկոպոս է ձեռնադրում և ճշամակում կաթողիկոսական փոխանորդ:

Եղիշեի «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին» պատմությունից տեղեկանում ենք նաև մեկ այլ հեղինակավոր սարկավագի՝ Ռշտունյաց զավառի Սահակ եպիսկոպոսի Քաջաջ սարկավագի մասին, որը նույնպես բարձր դիրքի տեր մի անձնավորություն էր: Նա իր եպիսկոպոսի հետ զրադաշտական կրակարանը կործանելու համար աքսորվում և նահատակվում է Պարսկաստանում: Վստահաբար եղել են նաև ուրիշ լուսաշող խորանների՝ արժանացած սարկավագներ, որոնց, ցավոք, մենք ծանոթ չենք: Ինչէիցե, վստահորեն կարող ենք ասել, որ սարկավագությունը միջին դարերում մեր Եկեղեցում չնայած համեստ, սակայն արդեն բավակա-

մին հարգված, ժողովրդի կողմից սիրված, իր կշիռն ու դիրքը ունեցող մվիրապետական աստիճան էր:

Այդ աստիճանը կրողները պետք է լինեին նաև շնորհագարդված աստվածգիտության լույսով, պայծառացած ուղղափառ վարդապետությամբ և նաև Ռարուսո՝ գիտության այլ ճրագներով: Այդ առումով էլ շնորհալի սարկավագների անուններ թողել է մեզ պատմությունը: «Հայտնավորք»-ում հիշվում է Թիոփիլեյ սարկավագը, որը հմուտ էր Աստվածային Գրոց և համարձակ՝ Ավետարանը քարոզելու մեջ: Ռուփանոս սարկավագը անվանվել է Սքանչեղագործ: Այստեղ կոպիտ քացթողում արած կլինեմք, եթե չհիշեմք Աթանաս Ալեքսանդրացուն, որը լուսափայլ իմաստության բաղթեց Արիտսին Նիկիո սուրբ ժողովում, երբ ինքն այնտեղ էր գնացել որպես Ալեքսանդր Ալեքսանդրացու սարկավագ: Եվ, վերջապես, «սարկավագ» բառը նույնիսկ անհավատներին է հայտնի մեր մեծագույն փիլիսոփա, գիտնական, աստվածաբան, տոմարագետ և այլ գիտության հմուտ Հովհաննես սարկավագ իմաստասերի շնորհիվ: Նա իր սարկավագության ժամանակ այնպիսի փառքի ու հեղինակության, այնպիսի գիտական բարձունքի հասավ, որ նույնիսկ իր վարդապետ լիմելուց հետո ժողովուրդը նրան ճանաչում էր «Սարկավագ» տիտղոսով: Նա այդպես էլ ճանաչված մնաց հետագա դարերում, մինչև մեր օրերը:

Այսօր էլ, ի հպարտություն մեզ, մեր Եկեղեցին ունի իմաստասեր սարկավագներ, որոնք արժանաբար, քրտնաջանորեն վաստակել են գիտական բարձր կոչումներ:

Պատկերը ավելի ճոխացրած կլինեմք, եթե ավելացնեմք, որ սարկավագությունը միայն տղամարդկանց առանձնաշնորհումը չի եղել: Բրիստոնեական պատմության մեջ հիշատակվում են նաև կին սարկավագուհիներ, ինչպես նրանց մասին պատմում են մեր այսօրվա թանգարաններում եղած, կանացի նրբագեղ ձեռագործներով զարդարված, գեղեցիկ ուրարները և եկեղեցական մյուս հանդերձանքները: Այսօր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու սարկավագները կոչված են սրբությամբ և բարեպաշտորեն սպասավորելու Սուրբ Պատարագի խորհրդին՝ վերաբերություն և խնկարկություն կատարելով, ժամերգությունների և ծիսական այլ արարողությունների ընթացքում իրենց հատկացված բաժիններում իրենց մասնակցությունը բերելով, բարեխղճորեն կատարելով իրենց վրա դրված վարչական աշխատանքները, եթե այդպիսիք կլինեն: Սարկավագը պարտավոր է ամբարել մեր Եկեղեցու անհրաժեշտ գիտելիքները և դրանք կարողանալ արդյունավետորեն օգտագործել կրթական բնագավառներում:

Ահա մեր Եկեղեցու համեստ, խոնարհ, բայց շատ կարևոր և օգտաշատ մի աստիճան, որը շնորհվեց մեզ մեր Տեր Հիսուս Բրիստոսի շնորհիվ և Սուրբ Ստեփանոս Նախավկայի ու Նախասարկավագի մահատաղությամբ: Այսօր էլ մենք ունենք

այն բոլոր պարտավորությունները, ինչ առաջին դարերից սկսած ունեին բոլոր աստվածազգյաց սարկավազները: Ինչպես Սուրբ Ստեփաննոսն իր ամձը զոհեց վասն Քրիստոսի, վասն Աստծո, այդպես էլ մենք՝ սարկավազներս, ամցյալի փորձը մկատի առնելով, Աստծո օգնությունը և մեր հոգևորականների օժանդակությունը մեզ զորավիզ ունենալով, սիրով պետք է տամենք մեր վրա դրված Քրիստոսի քաղցր լուծը:

Մատենադարանը լցված է չուսումնասիրված ձեռագրերով: Հիվանդանոցները, որքանոցներն ու ձերանոցները, մահ փողոցները լցված են կարոտյալ մարդկանցով: Դպրոցներն ու այլ կրթական օջախները լեցուն են մանուկներով, որոնց վրա կախված է ամհավատ մեծանալու սպառնալիքը: Շատ կիսավեր եկեղեցիներում խնկարկում են միայն հրեշտակները և, առանց շարականների ձայնակցության, երգվում են միայն անտեսանելի ու անլսելի հրեշտակային օրհներգություններ:

Վեհափառ Տեր, եկե՛ք մեկ անգամ էլ հիշենք մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի խոսքը. «*Հունձքը առատ է, մշակները՝ սակավ*»: Արդ, Ձեզ նման իմաստուն Հովվի առաջնորդությամբ, մեզ հետ և մեր եկեղեցու զլուխ կանգնած, աղաչենք Աստծուն, որ արժանի մշակներ հանի հայոց ազգի կարոտյալ ու տառապած հոգիների համար, և պիտի հայցենք, որ այդ հեծվորները լինեն մա՛ն մեր շարքերից՝ մեր երիտասարդ սարկավազ սերնդից:



1700-ԱՄՅԱԿ



ՎԱՐՈՒԺԱՆ ՊԼՈՒՋՅԱՆ

ՍՈՒՐԲՆ ԱԿԱՆՋԻՆ Ի՞ՆՉ ԱՍԱՑ...

Մանչուկը կառուցվող շենքի քարերն է հաշվում. «Սա՛ պիտի նվագի, սա երգի... ֆիլիհարմոնիա է»: Ներս է մտնում: Խոնավ է, ծածկը դնելուց հետո՝ նաև խավար: Առջևում ուրիշ դռներ կան: Մտնում, նայում է կամարին. «Ինչ բա՛րձր է»: Վերին պատշգամբի պատուհաններից լուսաշերտեր են իջնում, հեծնում ետևաբեմին: Երգող, նվագող շերտերը՝ խորհրդավոր՝ «եկեղեցու միջին»: Երգ, նվագ, հետո՝ շոյող մի ձայն.

- Էդի՛կ, Էդի՛կ, լավ լսիր: Այս բեմի համար մի աղոթք էլ դու ես ստեղծելու: Արտնեղած մարդիկ կգան, կլսեն, կգոհանան, կօրհանեն: Հավատա՛, աշխատի՛ր, և Աստված կտա:

Ցցցվել, կարկամել է: Աթափվում, տուն է վազում, լսածը պատմում մորը՝ ժպտերես տիկին Նատալիային: Մայրն ասւմ է. «Սուրբն էր, ասած կլինի: Միայն մարգուսից չուշանաս: Մարգիչդ երեկ գովում էր քեզ, տե՛ս, հանկարծ չբողոքի»: Մարգագեստով պարկը վերցնում, վազում է: Մարգադահլին: Պտտաձող, գուգափայտ, օղակներ, ճծույզ և ... ամենակարևորը՝ դաշնամուր, դաշնամուրի մոտ՝ գեղեցիկ մի դաշնակահարուհի: «Այսօր, տեսես, ի՞նչ է նվագելու»: Վալս, քայլերգ, ծորուն մի մեղեդի, բայց ո՛չ առավոտյան լսածը: Առավոտվանն ուրիշ էր:

Ժաշից հետո հարևանուհու դուռն է ծեծում, նրա սիրալիր հրավերով նստում դաշնամուրի առաջ, մեկ մատով, ամպ բոլոր մատներով, վերջապես՝ ավերով փորձում խորհրդավորը ոգեկոչել... Լսողությունն արտաբերածից անջատում, մտովի գնում է Սրբի կիսախավարը: Մի պահ, և նորից առօրյան է: Այսպես՝ տարիներ:

Մարզվում, սովորում, կարդում է, հրապուրվում հոր՝ գեղանկարիչ Դրաստամատ Սադոյանի նկարներով, փորձում նկարել: Մատիտով, ջրաներկով, յուղաներկով քսում, համադրում, ուրախանում, հիասթափվում է և ... համառորեն սպասում, որ գույները մի օր կերգեն, կնվագեն...

Մարմնամարզիկ է, Հայաստանի պատանեկան հավաքականի անդամ: Չեմպիոնի դափնիներ է երազում: Մարզասարքերից պտտաձողն է հարազատ: Հարագատն էլ դավաճանում է, արևապտույտի թափից պոկվում, տապալվում է գետնին, երկու ձեռքը կոտրում: Դեկտեմբերի 21-ին՝ Ստալինի ծննդյան օրը: Ինչո՞ւ ...

Հունվարին «Անուշ» օպերայի հերթական պրեմիերան է: Գիպսը չհանած՝ վազում է թատրոն: Գոհար Գասպարյանի և Ավագ Պետրոսյանի ծաղկուն տարիքն է: Նրանց երգից, օպերայի մեղեդային անընդհատ հոսքից հուզված՝ վերադառնում է տուն:

Ուշ գիշեր է: Գլխում «Անուշի» երաժշտությունն է և երաժշտությունը պարբերաբար ընդհատող մի միտք. «Մարզվել, դաշնամուր նվագել կկարողանա՞մ»:

Գիպսը հանել են, և ... աչ ձեռքի ոսկորը ծուռ է կպած: Այս հարվածն ավելի ցավոտ է:

Սպորտով կռած կամքն Արցախում վիրավորված մարտիկներին, դեռ չապաքինված, մորից Արցախ է մղելու, և արդեն ճանաչված կոմպոզիտոր Հովարդ Սադոյանը զարմանալու, հիանալու է նրանց սխրանքներով: Հիսնականների պատանին էլ ի՞ր կոկվն ունի. վիրաբույծի սխալն ուղղելու համար ձեռքը ժամերով պահում է ծանր իրերի տակ, կոտրված տեղից, վերջապես, մորից կոտրում: Մեկ ուրիշ բժիշկ գործընկերոջ արածը շտկում է: Չեմպիոն, իհարկե, չի դառնա, բայց մարզիչ կլինի, իր մնաց մեկ ուրիշի կօգնի: Իսկ երաժշտությունը... Առայժմ դաշնամուրից դաշնամուր է վազում. որն ազատ լինի: Փորձում է լսածն արտաբերել, իրենը հորինել: Դպրոց, ինստիտուտ, ասպիրանտուրայի հետանկար՝ ի վերջո լուծվում են նվագելու, հորինելու գաղափարի մեջ: Տանը դաշնամուր ունենալն ու երաժշտական կրթությունը շարունակում են երազանք մնալ: Երազում մորից տաճարի լուսապույներն է տեսնում: Հարցնում է՝ «Իսկ մեղեդի՞ն»: Սուրբն ասում է՝ «Դա էլ կլինի, վաղը սկիզբն է»:

«Հայր մեր, որ լերկինս ես...» Վերջերս սերտածը միանում է երազի լուսախաղին, սահում մինչև արևածագ:

Ջարթնում է: Մայրն օրվա թերթերն արդեն բերել է: Մեկը ձեռքն է առնում, նայում, այքերին չի հավատում. «Ժողովրդական կոմսերվատորիա են բացել»: Գիշերվա երազի շարունակությունն է:

Դիմում, քննություն: Ասում են՝ «ընդունված եք»: Վարպետն էլ Ալեքսանդր Հարությունյանն է լինելու: Երաժշտական տարրական գրագիտությունից մինչև կոմպոզիցիայի առաջնեկները, դրանցից հետո էլ գիշերը հաճախ ցերեկ է դառնում:

Բժշկական ինստիտուտի մարզադահլիճի կամ Սայաթ Նովայի անվան դպրոցի դասարանների՝ իրեն տանջող դաշնամուրները տանջելով:

Խոստումնալից երիտասարդին սպորտային բժշկության ամբիոնն ուղարկում է Մոսկվա՝ կատարելագործվելու, դիսերտացիա պաշտպանելու: «Դիսերտացիան, մտածում է, այստեղ էլ կպաշտպանեմ», բայց հիշելով Արամ խաչատրյանին, Սարգիս Բալասանյանին, կոմպոզիցիայի մրանց դասերին ներկա լինելու հեռանկարը՝ գնում է:

Անձնական հմայքը, բարությունը հաճախ չբացվող դռներ են բացում. խաչատրյանն էլ, Բալասանյանն էլ, Էդիկին տեսնելով՝ ժպտում, դասարան են հրավիրում: Բարեկամացել է ծագող աստղեր Օնիսկեի, Դեմիսովի, Արվո Պյարտի հետ: Վերջինս տեսնելու համար Տալլին է գնում... Այս քոլորը՝ ասպիրանտական դասերի արանքներում: Մի արանք էլ գիշերն է, որ հաճախ անցկացնում է մոտակա գործարանի ակումբի դահլիճում դաշնամուրի առաջ. մեկ-երկու հանդիպումից հետո՝ պահակն էլ մրա բարեկամն է: Այստեղ տակտ-տակտի ապագայի մեծակերտի՝ «Երեք խոսք Հայասանի մասին» սիմֆոնիայի առաջին տարբերակն է շարվում: «Բսան տարի անց արդեն կայացած կոմպոզիտորը կվերամշակի սա և 88-ի զարթոնքին կներկայացնի որպես գալիք Անկախության կանխագուշակում: Գեորգ Մուրադյանի ջանքերով՝ սիմֆոնիայի ձայնագրությունը ռադիոյի ոսկե ֆոնդում կլինի, բայց նախ դիսերտացիայի պաշտպանությունն է, աշխատանք բժիշկների կատարելագործման հայաստանյան ինստիտուտում, զուգահեռ՝ կոմսերվատորիայի կոմպոզիցիայի ֆակուլտետը, Ալեքսանդր Հարությունյանի՝ երաժշտական իմաստնության դասերը: Մեր երաժշտության մեջ այս փուլը մնալու է «Ըրագ», «Քանի» ասեմ», «Հառաչեմ», «Կանչեմ հողի վեր» քառասյա տրամով, որ քուչակյան հայրենների երաժշտական մոր վերընթերցում է: Մանուկյանի խոհափիլիսոփայական պատում-նաշարից հետո Սադոյանը բանաստեղծի սիրտ քնարն է մյուս դարձել և արդեն հոչակ վայելող նախորդի գնահատականն է կարդում. «Սադոյանի հայրենների երաժշտական լեզուն ճշմարիտ է ներշնչված կոչվելու չափ, հավաստի է գեղեցիկ կոչվելու աստիճան: Սրա շնորհիվ կոմպոզիտորը Քուչակի հետ հոգևոր կապի իրավասությունն է ստանում»:

Ավարտական աշխատանքի՝ «Երկրորդ սիմֆոնիայի» մեջ, ինձ համար անսպասելի, Օտոխո «Հայրուրն» եմ լսում, իմ սիրելի Հայրիկի՝ Հայրիկ Մուրադյանի երգածը: Ժողովրդական մեղեդու նման վերիմաստավորումը ողջունում եմ: Ավելի կատարյալն այս առումով ժողովրդիս երաժշտական մտածողությունը վերջին տասնամյակներին պայմանավորող հիմնավորք երգերից՝ «Խորոտիկ»-ից, «Նիյնըմ-նիյնըմ»-ից, «Տանաներից», «Գորանուց» վերանած քառամաս պոեմն է թվում, որի կատարումից հետո մուլենիս սովորաբար զուսպ Ռուբեն Ահարոնյանն ասում է. «Այս գործի հեղինակը տաղանդավոր է»:

Նորաթուխ երկերի մի ընտրանի հասնում է Կիևի «Հարմոնիա» կամերային անսամբլին, չեխական «Կիցցլ» լարային քառյակին, Հանճոպերի Ռեզյակին, Կիևցի դիրիժոր Ֆյոդոր Գլուշենկոյին, ուրիշների, որոնք Սադոյանի երաժշտության հաճախ առաջին կատարողներն են: Հայի ճակատագիր է. սկզբից օտարը պիտի ճանաչի, հետո մեք, մույցիսկ այն դեպքում, երբ մյուսը ճանաչման արժանի է, ասեմք, կամերային երեք օպերա: Մեկը՝ «Մարիա Վոլկոնսկայայի Ռուշագրերը» մեմախոսությունը, Էլլադա Չախոյանը կատարեց «Հարմոնիայի» հետ և հետո միայն ծայնագրեց Երևանում Գևորգ Մուրադյանի ղեկավարությամբ, Գլուշենկոյի նվագախմբի հետ մույն Կիևում շնչավորեց «Է՛յ, ո՞վ կա այդտեղ» երկխոսությունը-օպերան ըստ Վիլյամ Սարոյանի... Կվարտետ, սիմֆոնիա, ո՞ր մեկն ասեմ, որ մախ «դրսում» հրնչած չլիցի, «դրսի օրհանգը» չառնի, մոր զա Հայաստան: «Մարգարտաշար» սյուիտն էլ, չգարմանա՛ք, առաջինը գերմանացիներն են նվագել, քայց չէ՞ որ սա ոտքից-գլուխ հայկական կավից է սարքած: «Երեք խոսք Հայաստանի մասին» սիմֆոնիայի պրեմիերան էլ Կիևում է եղել: Այնտեղ հեղինակին գործնականորեն են սիրում-հարգում:

Կնուտ Համսուի ծննդավայրն այցելող հայ առաջին կոմպոզիտորը Սադոյանն է: Մեծ մորվեցացու հիշատակին այնտեղ մա դաշնամուրի իր սոնատն է նվագում և վերջին տակտերը համեմուն հատուկ հորինած աղոթքով:

Եթե գրածները պրակավորենք՝ պատկանելի թիվ կստացվի: Ազգային մշակութային գործիչն էլ ի՞ր անցյալն ու ներկան ունի: Եռանդն անսպառ է, այն աստիճան, որ ամեն մոր շփումից հետո թվում է, թե Էդվարդ Սադոյան արվեստագետը դեռ մոր է սկսվում, միջոցառ նկարագրածս պահին մա մտածում է կյանքի կարևոր մի փուլ ամփոփելու մասին, այն փուլը, որ հավատքի թերեց առ Աստված և Աստծո միջոցով՝ առ Մարդ: Ասում է՝ «դեռ ասպիրանտ էի, Մոսկվայից Երևան եկա, կարոտս հոգևոր լրացման կարիք ուներ: Ամառ էր: Նստել էի արևի տակ և ...«Մատեան ողբերգութեան» էի կարդում: Երկու արև՝ Արեգակն ու Նարեկացին ակամա համեմատեցի: «Օրհնելի» ու «Ո՛վ, ամենատեսը» վաղուց պարտիտուր եմ դարձրել: Ընդամենը վերջնագիծը, սակայն, դեռ հորիզոնից այն կողմ է»:

Ամերիկա է գնում: Օվկիանոս հատում, հատելով՝ մեկ անգամ էլ հանգվում, որ հորիզոնն անհասանելի է: Ինճից յոթ ամիսը Նյու Յորքում է. հանդիպումներ, մոր քարեկամներ, ճանաչում, քայց և ... կարոտախոս: Երևանն է կարոտում, ընկերներից, մկրտության ծպտյալ տաճարը, Սրբի ձայնը: Տոմս, օդանավ, թռիչք, վայրէջք. շունչը, կարծես, տեղն է գալիս:

Հաջորդ երեկոյան արդեն տաճարում է: Բետոնն խոնավ պատերի, կամարի ու պատշգամբների փոխարեն վաղուց ի վեր օթյակների ոսկին է, շքեղ մախշերը, շլացուցիչ ջահերը, ետմաքեմը պատմեշած երգեհոնը: Երգող լուսաշերտերի փոխարեն

էլ ֆիլիսադոնիկ ցվագախումբն է. դեկին՝ Գևորգ Մուրադյանը: Սա՛ էլ սրբաբանն է. քայց անցյալը, Սրբի ասածը հանգիստ չեն տալիս:

Ռադիոն Ստեփան Զաքարյանի «Գրիգոր Լուսավորիչ» պիեսն է սփռում: Արվեստանոցի դաշնամուրի համար Սադոյանը պարտիտուրի մի քանի էջի հեռարան վաճառակ է պատրաստել. հղկում, հարմարեցնում է դրանք և լսում: Կլանված, անսովոր մի հետաքրքրությամբ... Զանգվածային տեսարանի ժխորը հանկարծ նահանջում է, և ծանոթ ձայնը տարտեցնող հրամայականով ազդարարում.

- Աստծո կամքով նյութն ուղարկել եմ: Մաքառի՛ր ...

Հետո մանկուց ծանոթ կարկամն է: Մեկ թուպ, թե մեկ ժամ՝ չգիտե: Սթափվում է: Ռադիոն լռել է: Վերջին բառի արձագանքն է մարում. «Մաքառի՛ր»:

«Սա էլ, երևի, ի՛մ խոր Վիրապն է լինելու»: Համեմատելը հավասարեցնել չէ: Ազնվությունից չընդվելու ճանապարհին՝ Գրիգորը պարզապես ուղեցույց կլինի:

Առաջին խոչընդոտը պիեսից լիթրետո հյուսելն է: Հյուսողին երկար փնտրելուց հետո՝ ի վերջո ինքն է փորձում, գրելով՝ հնչյունավորում խոսքը, այս կամ այն դարձվածքը հարմարեցնում երաժշտական ի՛ր մտածողությանը:

«Նախերգը» գլխավոր գաղափարն է: Երգչախումբ: Խոսող ու երգող: Խոր Վիրապում տառապող Գրիգորի խոհն ու հույզն է թարգմանում: Արական երգչախումբ: Գրիգորից մեկ և կես հազարամյակ հետո ժամերգողին նման: Քսաներորդ դարավերջի ոռյալն էլ մեղաց խոստովանությանն սկիզբն է դրդանջում: Մեծ օկտավայի ֆա-դիեզից ցատկով երկրորդի համահունճն է «խոցում» ... երեք ցատկ էլ՝ և դադար ... հետո դաշնակահարը ոռյալի ներսից լարերն է կսմթում, ափով զարկում լարախմբերին ... մորություն չէ: Օտտ մախորդներ թե ժամանակակից երևալու համար են արել՝ Սադոյանը պատկերայնության խնդիր է լուծում. փոսի խավարից, օձերից ու կարիճներից արկված նյարդերի աստիճանական լարման երաժշտական վերացականացումն է սա: Լուսավորչի հավատքն օձերին, կարիճներին էլ, ի վերջո, հմայել, հանդարտեցրել է, և սկզբում խառնամբոխը, ապա երգչախումբը կանոնակարգված խոսքով ու երգով, մեծ բանաստեղծից փոխ առած տողերով չխայթելու, չթունավորելու կոչ են անում.

Կեսգիշերային այս լռության մեջ

Նշանդ օրհնյալ ձեռքիս մատներով

Քեզ եմ կարկառում, ո՛վ ամենատես,

Որ անգիտության խավարով երբեք չես աղոտանում,

Այլ բնակվում ես ու հանգչում ես միշտ

Անմատուց լույսի ջիմջ ոլորտներում ...

Նարեկացիին Աստծուց է, ուրեմն նրա ասելիքը վեց դար առաջ էլ հայտնի էր Աստծուն, Աստծով՝ նաև Գրիգոր Լուսավորչին: Աստվածայինին ձեռք մեկնելով՝ Սադոյանն էլ երևի այսպես մտածեց: Աստծո օրհնանքով նախերգը հյուսեց, ըստ իս՝ օպերայի այցեռոմսը:

Գոհունակությամբ աղաչում եմ Քեզ՝

Ա՛ն վշտահարին հզոր թևերիդ պաշտպանության տակ,

Փրկի՛ր ներխուժող խառնամբոխ, պղտոր այս ցնորքներից...

Ծնորդների արձագանքը նաև Կոմիտասի խելագարության տարիներինն է: Սթափվելով՝ Վարդապետն էլ երևի աշխարհիկ մեղքերը քավելու կոչ է արել: Բոլոր ժամանակների այրերին, մանավանդ հոգևոր...

Սկզբում՝ ենթագիտակցաբար, հետո՝ նպատակադրված, օպերան ընթացել է լուծման ա՛յս ճանապարհով:

Առայժմ մեկ արար է գրվել: Սկզբում կլարնետն է: Խոր Վիրապում տառապող հոգու նման միայնակ: Մաքուր, անկեղծ: Ապա՝ տաններկու ղողանջ, ըստ հեղինակի՝ առաքյալների մուտքը, միաժամանակ՝ քրիստոնեության գաղափարի, որը Տի-րոջ՝ Հիսուս Քրիստոսի մեղեդային մեներգն է ամրացնում, Պատարագի «Սուրբ Աստված...» հատվածի կառուցվածքային հենակետերով: Շարականաբույր, տաղաբույր, բայց ոչ շարականի կամ տաղի մեջքերումներով: Վերջինս երկրորդ արարում է լինելու, երբ Հայաստանում քրիստոնեությունն կհռչակվի, իսկ այստեղ...

Մարտնչող հեթանոսությունն է ներխուժում, նվաճախմբի ահարկու դիսոնանսներով վերածում ժխորի: Ժխորը, ի վերջո, պիտի հանդարտվի: Լուծումը «սուլ» հրմշյունն է՝ բազմերանգ մի «դամ», որ հստակման տեմչով փողայիններից աստիճանաբար ազատվում է, ներկայացնում լարայինների ջինջ միաձայնով. «սուլ», որ լատինա-սառ «Ը» է: «Գ» Գրիգոր, մեռելների թագավորությունում դեռ շնչողի, հավատքը չկորցնողի անվան սկզբնատառը:

Սա գրելիս՝ կոմպոզիտորը դեռ չգիտե, որ առաջին արարի համերգային կատարմանը «Գ»-ն եռակի խորհուրդ է ունենալու. զլխավոր հերոսը, նրան մարմնավորող երգիչ, կոմսերվատորիայի ասպիրանտ Գրիգոր Շազոյանը և նախերգում «սթեյնվել» ոռյալը ղողանջեցնող, ներսից լարերը կամթող, լարախմբերին ձեռքի ափով զարկող դաշնակահարը դարձյալ Գրիգոր է, Գրիգոր Ասմարյան, հրաջջ մի պատանի, որ փարիզյան միջազգային մրցույթի առաջին մրցանակը և «գրան պրի»-ն է շահել: Մի «Գ»-ով էլ դիրիժոր Գևորգ Մուրադյանի անունն է սկսվում, մվիրյալ երաժշտի, հայ կոմպոզիտորների շատ գործեր կյանքի կոչողի: Ռադիոյի նվաճախմբում, ապա ֆիլհարմոնիկում, Երևանի սիմֆոնիկում, որի դաստիարակ

նվազավարճ էր: Ֆիլհարմոնիկ երգչախմբի ղեկավարությունը ստանձնեց՝ հասավ նախաձեռնի ներդաշնակության, հիմա շաբաթօրյա հոգևոր ավանդական համերգներն է վարում, պարբերաբար համդես զալիս սիմֆոնիկ, վոկալ-սիմֆոնիկ ծրագրերով...

Առաջ անցա, միջդեռ պիտի ասեի, որ Երևանի գլխավոր տաճարի հիմքը դնելուն, լուսահիշատակ Վեռափառ Տեր Գարեգին Առաքինի օրհնանքին էղվարդ Սադոյանը ներկա էր. դիտում, լսում, լուսանկարում էր: 1949-ին վայրագորեն քանդած Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու փոխարեն համաճում տաճարը պիտի վեր խոյանար՝ ավելի բարձր, վեհաշուք, նույնիսկ հեռվից մոտ թվացող ... «Այս տաճարի շինարարությանն ավարտին ես էլ, մտածեց, իմ օպերան կավարտեմ, որ նույնպես «Գրիգոր Լուսավորիչ» է»:

Նյութն ուսումնասիրում, հնչյունավորում, համադրում է. Լուսավորչի տառապանքներով տառապում, մրա հետ աղոթում, աղոթքով փոսի մեջ օրվա հացն ու ջուրն իջեցնող պառավի թողան ապաքինումը հայցում, ստանալով՝ զոհանում, փառաբանում Հիսուս Քրիստոսին, մի խոսքով՝ հավատում է. հավատքի դիմաց ներշնչանքի արժանանում, արժանացածով կենդանացնում Տրդատ արքային, Աշխեն թագուհուն, Խոսրովիդոփստին, Հազարապետ Օտային, հավատքով հոգու խաղաղությունը գտած Բանտապետին: Հիսուս Քրիստոսի վարքն ու ասելիքն էլ, թվում է, ինքը Տերն է թելադրում: Մեմախոսություններ, երկխոսություններ, երգչախմբի մասնակցությամբ զանգվածային տեսարաններ՝ խոհազգացմունքային տրամաբանորեն շղթայված ամբողջություն են, որը մասնատելն ու մաս-մաս վերլուծելը էջեր կպահանջի:

Օպերայի համար անչափ կարևոր մի առանձնահատկություն, այն էլ ժամանակակից օպերայի, անշրջանցելի է: Ավանդական արիաներ, անսամբլներ առաջին արարում, ճիշտ է, չկան: Հիմքը խոսքից բնականորեն թխող ասելոգներն ու մեղեդային փոքրիկ զեղումներն են: Կրթությամբ երգարվեստի մասնագետիս շոյում է այս բոլորի բնական հոսքը, որ մասնավորապես մոր կազմավորվող երգիչներին կարող է հաճելի ծառայություն մատուցել՝ զանազանել, հարստացնել մրանց պատկերացումն ասերգության մասին, 1700-ամյա ժամերգությամբ հստակածին յուրօրինակ վերնաշենք դառնալ:

Բոստոնից պրեմիերային ժամանած Տ. Տաճատ ավագ քահանա Դավիդյանը միտքս շարունակում է. «Այս երաժշտությունով 21-րդ դար մտանք, այդպես էլ պետք է լինի, միշտ պիտի արդիացնենք մեր ունեցածը, և այսօր էղվարդ Սադոյանն այդ ըրավ»:

Արվեստասեր ու արվեստագետ Տեր Տաճատը դեռ մի քանի տարի առաջ Սադոյանի կարևոր մի նախաձեռնության հովանավորն էր. հայրենասեր քահանայի նյութական ժամդրությամբ խորեն Տեր-Հարությանի լքված գերեզմանը վերականգ-

մեցին, վրան մեծ արվեստագետին արժանի քար դրին: Եվ այս բոլորը՝ պատմության հերոսի «Խորեն արձանագործ» սիմֆոնիկ պոեմի ուղեկցությամբ:

Օպերայի առաջին արարն էլ բնական է, որ Տեր Տաճատ Դավիդյանի մամ խոստովանաֆայր պիտի ունենար: Կոմպոզիտորը երգեց, նվագեց, ապա դարձավ արվեստանոցում մստած քահանային:

- Ձեր կարծիքը, Տեր Հայր:

- Կանոնավոր և հիմնական զարգացում էր մեր ունեցածին: Հավնեցա:

- Կարո՞ղ եք օրհնել:

Եվ քահանան օրհնանքի փոքրիկ մի արարողություն կատարեց: Հետո հարցրեց.

- Ասիկա ո՞ւր պիտի ներկայացվի:

- Ներկայացնելը թերևս ամենամեծ խնդիրն է: Հովանավոր է պետք, իսկ Հայաստանի այսօրվա վիճակը լավ գիտեք:

Տեր Տաճատը վերադարձավ Ամերիկա, հարցուփորձ արեց և ...

Խոլիկյան քույրերը՝ Նանսին և Միշելը, արձագանքեցին: Հրաշքն, ինչպես ասում են, Սորից Աստծուց էր:

- «Գրիգոր Լուսավորիչ»։ Մեր հոր ամուսն ալ,- ասացին,- Գրիգոր էր, ուրեմն մենք պիտի հովանավորենք»:

Լուրջ հասավ Հայկական ֆիլիարմոնիկ երգչախմբին, նվագախմբին, դիրիժոր Գևորգ Մուրադյանին, ոգևորեց նրանց: Նույն ոգևորությամբ՝ մեներգիչների մի ընտրանի ժողովեցին: Լուսավորչին, ասացի, Գրիգոր Օագույանն էր ներկայացնելու, Տրդատ արքային՝ Սարգիս Թորոսյանը, Աշխեն Թագուհին Գայանե Գեղամյանն էր, Խոսրովիդուխտը և խոր Վիրապի փոսը հաց ու ջուր հասցնող պառավը Լիլիթ Գրիգորյանի ծայնով էին, Հիսուս Բրիստոսն ու Բրմապետը՝ Ռուբեն Նուրի-ջանյանի, իսկ հավատքով խաղաղված բանտապետը Հակոբ Սարյանն էր: Հովանավորչական գումարի ակնկալիքով եկան: Կարդացին, երգեցին, նվագեցին՝ ակնկալիքն էլ մոռացան: Սիրեցին երաժշտությունը, բարի, անմիջական հեղինակին. «Նման մի բանի,- ասացին,- վաղուց էինք սպասում»:

Արարը հոգևոր ավանդական համերգի ժամին ներկայացրին 2000 թվականի նոյեմբերի 4-ին: Ներկայացնելուց առաջ խուցկ ծխեցին, Ներսես արքեպիսկոպոս Պողապալյանը և Տաճատ ավագ քահանա Դավիդյանն օրհնեցին: Հայոց հոգևոր առաջնեկի ծնունդը կայացավ: Մեկ արարով էլ տպավորիչ էր: Մանավանդ մարտնչող, «մա՛հ Գրիգորին» վանկարկող հեթանոսությանը խաղաղեցնող քրիստոնեական աղոթքով. «Աստված երկնավոր, փառավոր մեր Տեր, բժշկիր հայոց Տրդատ արքային...»:

Լսածս ու տեսածս անխաղ թատրոն էր: Նայում, լսում, փորձում էի խաղը հետը պատկերացնել: Սպենդիարյանի անվան թատրոնի բեմում, թատրոն, որ հիմա հո-

գեվարք հիշեցնող օրեր է ապրում: Տե՛ր, փրկի՛ր մեր օպերան. և թող «Գրիգոր Լուսավորիչն» այդ փրկության սկիզբը լինի: Փրկի՛ր այնպես, ինչպես իմ քարեկամ Էդվարդ Սադոյանին հավատքի բերի: Նրա դաստիարակ վարպետը՝ Ալեքսանդր Հարությունյանը, բեմից օրհնեց իր սանին, կարծիք հայտնեց, որ կերտածը հայկական երաժշտության զանգարան կմտնի: Ընդհանուր առմամբ խիստ, անաչառ մանտրոն:

Մեր սերնդի մկրտված կամ չմկրտված լինելը խորհրդային տասնամյակների փոշին է ծածկել: Մեր ծնողները երկրային կյանքից հեռացել են: Հաստատելը կամ ժխտելը բնականաբար մեր հոգսն է: Եվ Աստծո ծառա Էդվարդը Սուրբ Հովհաննես եկեղեցի է գալիս, Ծառն քահանա Հայրապետյանի ազնվությամբ հմայված՝ նրա մկրտությունը խնդրում: Բոստոնցի Տեր Տաճատն այս պահից նաև Էդվարդի կնքահայրն է: Օպերան բեմից մերկայացնող ասմունքող Սարգիս Նաջարյանի առաջարկով ծննդականով «Էդվարդ» անվանը կնունքի «Մեսրոպ» անունն է ավելանում: Հետայսու նա Էդվարդ - Մեսրոպ Սադոյան է:

Մկրտության ավագանի մեջ Տեր Ծառն չորս կաթիլ յուղ է կաթեցնում, կաթիլները դառնում են խաչ, խաչը պտտվում, դառնում է հավերժության ճշան: Մյուսո՞րը դարերի խորքից է եկել, հայերինը՝ հենց Լուսավորչից, և գուցե Լուսավորչի կամքով էր, որ դրոշմվեց Էդվարդ-Մեսրոպի ճակատին: Արվեստի կիսաշեն տաճարում ավագան ավետող Սու՛րբն էլ գուցե ինքը Գրիգոր Լուսավորիչն էր:





ԱՐՏԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԵՍԱՐԻԱՅԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԻՒՆԸ

Վերջերս ստացած «Բազմավեպի» 1993 տարւայ 1-4 համարի «Գրախօսականներ» բաժնում Կ. Թրախման գրախօսում է հայր Պօղոս Անանեանի «Քննութիւն Հայ Եկեղեցւոյ պատմութեան եւ դարերուն» երկասիրութիւնը (տպ. Վեցետիկ, 1991), ուր ակնարկելով Հայոց Հայրապետութեան եւ Կեսարիայի Արքեպիսկոպոսութեան, գրում է, թէ «Սահակ Հայրապետի մահով Հայոց Եկեղեցին մեծ ճնշում կրեց պարսկական արքունիքէն, ամբողջապէս անջատելու համար Կեսարիոյ Եկեղեցիէն: Խորհրդանիշը երկու Եկեղեցիներու միութեան կրնայ մկատուիլ կաթողիկոսներու ձեռնադրութեան հարցը Կեսարիոյ մէջ:

Այս սովորութիւնը, սկսած Ս. Գրիգոր Լուսատրիչէն, շարունակեցաւ մինչեւ Ս. Սահակ Հայրապետ. ստուգիւ իբր խորհրդանիշ այս եմթարկումին՝ Հայոց Կաթողիկոսը պետք էր Կեսարիա երթար, որպէսզի հոն ձեռնադրուէր եւ հռչակէր կաթողիկոս: Եւ ասիկա մինչեւ 387 թուականը գործադրուեցաւ մոյն իսկ Հայաստան հռոմէական եւ պարսկական ազդեցութեան տակ մնալէն ետքն ալ»:

Հակառակ այն իրողութեան, որ բազմիցս հերքել է Հայոց Հայրապետութեան Կեսարիայի Արքեպիսկոպոսութեան ենթակայ լինելու պարագան, սակայն եւ այնպէս տակաւին որոշ հեղինակներ եւ յօդուածագիրներ շարունակում են ենթակայութիւն տեսնել Հայոց Հայրապետութեան Կեսարիայի Արքեպիսկոպոսութեան հետ:

Տակաւին մինչեւ իսկ կասկածելի է Ս. Գրիգոր Լուսատրիչի Կեսարիա գնալը եւ այնտեղ Ղեւոնդիոսից Հայոց Հայրապետ ձեռնադրուելը: Ինչպէս կասկածելի է Դիոկղետիանոս կայսեր ամուսնամալու պարագան՝ մկարի վրայից: Կասկածելի է

նաեւ Ագաթանգեղոսի մէջբերած Տրդատի մամակը. ուր թագաւորը իրեն համար «մինչեւ իմ խոզ լինելը» ասում է: Կասկածելի է նաեւ Հովհաննիսեան կոչւելի Հոռմից Հայաստան գալու պարագան, քանի որ այդքան երկար ճամբայ ինչպէ՞ս պիտի անցնէին քրիստոնէայ կոյսեր եւ պիտի անցնէին հեթանոս երկրներից:

Ամէն պարագայից՝ խօսքը Հայոց Հայրապետութեան եւ Կեսարիայի Աթոռից հետ ունեցած յարաբերութեանը մասնատրելով յայտնենք, որ Գրիգոր Լուսաւորիչի Կեսարիայի Մետրոպոլիտից եպիսկոպոս ձեռնադրւելը եւ Ղեռնդիոսի Տրդատից Կեսարիայի Մետրոպոլիտից ձեռնադրւելը (Ագաթանգեղոս), եւ իբր թէ այս կերպով Կեսարիայի մետրոպոլիտը յայտարարում է, թէ Հայ Եկեղեցին իրեն ենթակայ է, եւ Հայոց Կաթողիկոսները երկար ժամանակ, մինչեւ Պապ թագաւոր, ենթարկւել են Կեսարիայի Աթոռին: Այս առնչութեամբ մէջբերումներ են կատարում նաեւ Փաւստոսից: Ներսէս Մեծի ձեռնադրութեան առթիւ Փաւստոս վկայում է, թէ Արշակ թագաւորի հրամանով մեծազոյց հայ մախարարներ նրան Կեսարիա առաջնորդել են Հայոց Հայրապետ ձեռնադրել տալու համար, եւ Եւսեբիոսը Ներսէսին կաթողիկոս է ձեռնադրել: Եւ դարձեալ ըստ Փաւստոսի, առաջին անգամ Պապ թագաւորը առանց Կեսարիայ ուղարկելու Ծառակից՝ Մեծն Ներսէսից յետո Հայոց եպիսկոպոսապետ է ճշմանկում: Կեսարիայի մետրոպոլիտը այս իմանալով խիստ զայրամուռ է Պապ թագաւորի ընթացքից եւ ժողով գումարելով ցատումով մամակ է գրում Պապ թագաւորին եւ յանձնարարում է. որ «լուծեն Հայոց Կաթողիկոսութեան իշխանութիւնը, եւ հայեր իրենց համար եպիսկոպոսապետ չձեռնադրեն»:

Փաւստոս չափազանցեալ ձեռով է ներկայացնում Հայոց Հայրապետների Կեսարիայի Աթոռից ձեռնադրուելը, եւ լատիներ, հետեւելով Փաւստոսի, Հայոց Հայրապետական Աթոռը ենթակայ են համարում Կեսարիայի մետրոպոլիտութեան:

Յիշատակում են նաեւ Բարսեղ Կեսարացու մամակները:

Հայոց Հայրապետութեան ենթադրեալ ենթակայութեան, ինչպէս նաեւ Փաւստոսի եւ այլոց տեսութեան դէմ որպէս հերքում խօսում են հետեւեալ փաստերը:

1. Ղեռնդիոսի վերեւ յիշատակած մամակի հաւումը պակասում է Ագաթանգեղոսի արաբերէն թարգմանութեան մէջ:

2. Գրիգոր Լուսաւորիչ երբ յառաջացեալ տարիքում էր եւ ցանկանում էր ճգնողական կեանք վարել, Տրդատ թագաւորի խնդրանքով իր որդուն՝ Արիստակէսին Հայոց եպիսկոպոս է ձեռնադրում: Նոյնիսկ Փաւստոս յիշատակում է այս պարագան: Ագաթանգեղոսը վկայում է, որ Լուսաւորիչը իր տեղ իր զաւակին եպիսկոպոս ձեռնադրեց, մինչ Փաւստոսն ասում է. «Թէպէտ Արիստակէս կրտսեր որդին էր, նրան եպիսկոպոս ձեռնադրեց», եւ չի յիշատակում Արիստակէսի Կեսարիա գնալը: Փաւստոսը չի յիշատակում նաեւ Վրթամէսի Կեսարիայի մետրոպոլիտից եպիսկոպոս ձեռնադրուելը, այլ զոհանում է յիշատակելով, որ խոսքով Կոտակի թագաւորու-

թեան ժամանակ վրթանէր Հայոց քահանայապետ ձեռնադրեց փոխանակ իր հօր եւ եղբոր, ինչ որ մշանակում է, թէ Հայոց Հայրապետերը իրատուք ունէին եւ ամկախ էին իրենց յաջորդ քահանայապետերը ձեռնադրելու:

3. Հայաստան ինքնուրոյն եւ անկախ թագաւորութիւն էր, Հայոց Հայրապետական Աթոռը չէր կարող հոռմէական մահանցի մետրոպոլիտին ենթակայ լինել եւ Հայոց Հայրապետերը մրանից եպիսկոպոս ձեռնադրել: Պատմութիւնից իմանում ենք, որ Կեսարիայի Աթոռը ապագային ենթակայ դարձաւ Ամտիոցի Աթոռին եւ ապա Պոլսի Պատրիարքութեան:

4. Գրիստոնէութիւնը Հայաստանում Թաղէոս եւ Բարթողիմէոս Առաքեալների միջոցով քարոզած էր, եւ ոչ թէ Կեսարիայի մետրոպոլիտինը այն տարածել էր Հայաստանում. Քետեաբար՝ Հայոց Եկեղեցին առաքելական էր եւ ամկախ Եկեղեցի ու Աթոռ էր եւ Կեսարիայի մետրոպոլիտինը որեւիցէ իրաւասութիւն չուներ Հայոց Հայրապետութիւնը իրեն ենթարկելու:

5. Ինչպէս վերեւ յիշատակեցինք, Գրիգոր Լուսատրչի Ղեռնդիոսից եպիսկոպոս ձեռնադրելն իսկ կասկածելի է, քանի որ Ղեռնդիոս 316 թիւն Կեսարիայի եպիսկոպոս մշանակեց: Գուցէ Կեսարիայի եպիսկոպոսները աշխատել են Հայ Եկեղեցին իրենց ենթարկել, քայց յաջողութիւն չեն ունեցել:

Մ. Խորէնացին, որ Քաւաստի պատմիչ է, երբեք չի յիշատակում Հայոց Հայրապետների Կեսարիա գնալն ու եպիսկոպոս ձեռնադրելը:

Այս եւ տակաւին այլ փաստեր ապացուցում են, որ Հայ Եկեղեցին եւ Հայոց Կաթողիկոսութիւնը առաջին իսկ օրից ամկախ են եղել:

Գուցէ, ինչպէս Կարապետ եպիսկոպոսն է վկայում իր «Եկեղեցական պատմութիւն» գրքում, Ս. Գրիգոր մախրմտրեց Հայաստանի ամենից աւելի մօտ Կեսարիա քաղաքը գնալ եւ այնտեղի մետրոպոլիտից Հայոց Հայրապետ ձեռնադրել: Գրիգոր Լուսատրիչ Կեսարիայում էր ստացել իր ուսումը եւ աւելի Քեղիմակութիւն ունենալու Քամար գնաց Հայաստանից դուրս՝ Կեսարիա, եւ այնտեղ ձեռնադրեց եւ որպէս Հայրապետ վերադարձաւ իշխելու Քամար Քայ ժողովրդին:

Քայց մի կարեւոր Քարց է մաւել, որ ինչպէ՛ս Գրիգոր Լուսատրիչ արքայական կառքով եւ քազմաթիւ մախարարների եւ զօրքերի Քետ Կեսարիա գնար եւ վերադառնար, երբ տակաւին հոռմէացիք Քեթանոս էին եւ պիտի չՔանդուրժէին քրիստոնէական մման ցոյցերի:



ՀԵՆՐԻԿ ԽԱՌԱՏՅԱՆ

**1863-1864 թթ. ՄԻ ՔԱՆԻ ԱՆՀԱՅՏ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ
ԱՂԱՍՏԵՎԻ ՀՈՎՏԻ ՎԱՆՔԵՐԻ ԱՎԵՐԱԿ ՎԻՃԱԿԻ ԵՎ
ՀԱՂԱՐԾԻՆԸ ԲԱՐԵԿԱՐԳԵԼՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
ԳՈՐԾՆԱԿԱՆ ԶԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Հովտի խոր ձորերի պտուղներին ու լեռների ծերպերին ծվարած Աղստևի վանքերը դարեր շարունակ, «ձեռքը դրած ճակատին», հավատացյալների կարոտով տոգորված, լուռ ու մուգ հայցել են մարդկանցից օգնություն: Իրավիճակը անհամ-գըստացրել է բոլորին, մտահոգել հոգևոր առաջնորդներին, ազգին, Ս. Էջմիածնին: Պետականության քաջակայության, ներքին և արտաքին քաղաքական անմասն վիճակի ու հարաբերությունների պատճառով հոգևոր այրերին թույլ չէին տալիս խնդիրներ լուծելու մրանց գործադրած ջանքերը գրեթե մնում էին անարդյունք: Պահանջվում էին ոչ միայն նյութական միջոցներ, այլև ազգի նվիրյալների գործնա-կան, հետևողական, անձնագործ աշխատանք: Թեև լուսաբանված փաստերի դա-կան օրինակներ կան, սակայն անբավարար են: Պետք է ենթադրել, որ առկա վա-վերագրերից հետազոտողների աչքից վրիպել կամ դուրս են մնացել ման ԱՆ-ՆՇԱՆ թվացող առանձին վավերագրեր: Ս. Էջմիածնի Սինոդի արձանագրություն-ներից մի քանիսը կարևորում են առաջադրված հարցերի անհրաժեշտությունը: Ներկայացնում ենք այդ փաստաթղթերից մի քանիսը:

ԱՌԱՋԻՆ փաստաթուղթը վերաբերում է Հաղարծին վանքին:

(Ֆոնդ 58, ցուցակ 5, թղթապանակ 60, գործ 213, էջ 454):

ԵՐԿՐՈՐԴԻ փաստաթուղթը՝ Սուրբ Էջմիածնի Սինոդի 1864 թ. որոշումն է՝ Համ-գալիսան գյուղի եկեղեցական գումարները Հաղարծին վանքի կարիքների և բարե-նորոգման մպատակներին ծառայեցնելու մասին:

(ՀՀ ՊՊԿԱ ֆ-56, ց-5, թղթապանակ 61, գ-368, էջ 318):

ԵՐՐՈՐԴԻ՝ Սուրբ Էջմիածնի Սինոդի անդամ Պողոս վարդապետի՝ մոր աշխա-տանքի անցնելու թույլտվության և Սինոդի 1864 թ. որոշումն է:

(Նույն տեղում, ֆ-56, ց-1, թղթապանակ 62, գ-313, էջ 535):

ՁՈՐՐՈՐԴԸ՝ Հաղարծին վանքի նախկին վանահայր, արդեն Սիմոնի ամուսնացած վարդապետին Հաղարծին գնալու և վերադառնալու համար մեկ ամիս արձակուրդ տալու մասին է:

(Նույն տեղում, ֆ-56, ց-5, թղթապանակ 63, գ-36, էջ 40)*:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր վավերագիր առանձին-առանձին պարունակում է ուշադրության արժանի կարևոր փաստեր:

ԱՌԱՋԻՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

ա) որ Պողոս վարդապետը դեռևս 1862 թվականին կամավոր ստանձնել է Հաղարծին վանքի վանահայրության պարտականությունները, ձեռնամուխ և եղել որոշ բարեկարգման աշխատանքների, իսկ 1863-ի նոյեմբերի 13-ին Մատթեոս Կաթողիկոսին է ներկայացնում դիմում-հայտարարություն և նկարագրում Աղստիկի հովտի վանքերի ծայրահեղ անմիտքար վիճակը, որոնք երկար տարիներ անմարդաբնակ-անխնամ մնալու հետևանքով դարձել են զազանների ու թափառող կենդանիների որջեր. օտարների խաշների մակադատելներ:

բ) որ Հայր Պողոսը, մտահոգվելով Հաղարծին վանքի վիճակով, որոշում է պատճառաբան ստանձնել այդ սրբավայրի բարենորոգման աշխատանքները, բնակվել այնտեղ և խնդրում վեհափառին. «... Աղաչեմ ազատ կացուցանել զիս ի թուաց միաբանից Ս. Էջմիածնի եւ հրամայել իմ զբնակութեամբք իմ կալնույ յայն մեծատան, որով իմ եւ եղեց յափտեան զոհարան զշնորհաց ԶԵՐՈՒՄ՝ վերաստիճան ՕՐԻՆՕՔ»: Կաթողիկոսը կարգադրում է Սիմոնին՝ «Պողոս վարդապետ Տէր Մարգարեան միաբան Մայր Աթոռոյն կարգեցաք արդէն ըստ թախանձանացն վանահայր առանձին կոնդակաւ մերով ի վանս Հաղարծնի, զորմէ հարկ է եւ Ատեանիդ ըստ կարգին ազդ առնել մարմնատր իշխանութիւն ի գիտութիւն նոցին եւ յապահովութիւն վիճակի վանահօրն»:

գ) նկատի առնելով, որ Հաղարծնի վանքը գտնվում է վրաստանի և իմերեթի սնորհիմության ներքո, Սիմոնը անհրաժեշտ է գտնում ծանուցել Տիֆլիսի կոնսիստորիային, «առ ի հոգալոյ զամենայն զկարելորսն պահպանութեամբք եւ իրաւանց վանուցն, համեմատ համանման միմ վանօրէից ցտանցելոց ընդ նորան տեսչութեամբ: Ջորմէ հրամանագրով տուեալ տեղեկութիւն եւ նորոգ նշանակեալ վանահօր նորին Պողոս վարդապետին պատուիրել ի դէպս հարկատրութեանց եւ այլոց զորոնց վերելոց վանքական կառավարութեան դիմել ուղղակի յԱտեան կոնսիստորիային, իբրեւ մերձատր իւրում անմիջական իշխանութեան եւ ըստ այսմ կազմեալ

* Մինչ այդ վարդապետը միայն միաբանության ամուսն էր, իսկ 1864-ից մաճանակվում է Սիմոնի ամուսն, ինչի վկայությունն է 1864 թ. օգոստոսի 1-ի արձանագրությունը:

զնոր գործ. այժմէն իսկ աւարտեալ համարել վասն տարոյ ի ժամուան ի դիւանն ի պահեստ»:

ԵՐԿՐՈՐԴ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ա) Իբրև ցախորդի շարունակություն, Սիմոնի՝ 1864 թվականի մարտի 11-ի արձանագրությունից տեղեկանում ենք, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը հետևողական և գործնական աշխատանք է տարել՝ իր կողմից հաճմարարած խնդրի իրականացման գործում: Էջմիածինը ոչ միայն կարևորում է հարցի նշանակությունը, այլ նաև կազմակերպական միջոցներ է ձեռնարկում: Ալեքսանդրապոլի հոգևոր կառավարությունը կատարում է Սիմոնի հաճմարարությունը և այդ մասին իրազեկում վերջինիս ի գիտություն:

բ) Մինևույն ժամանակ, Ալեքսանդրապոլի հոգևոր կառավարությունը քննության է առնում Կաթողիկոսի հունվարի 28-ի (1864 թ.) թիվ 80 կոնդակը:

ԵՐՐՈՐԴ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Հիշյալ արձանագրություններն ուսումնասիրելու ընթացքում ուշադրություն գրավեց մահ մի հարց. այն, որ Սիմոնի անդամների կազմը, որը պետք է թաղկացած լիներ յոթ հոգուց, սակայն, մինչ այդ, բոլոր արձանագրությունները ստորագրվել են երեք անդամների կողմից և վավերացվել ատենապետ Մատթեոս Կաթողիկոսի ձեռամբ: Բայց արդեն նույն ամսի օգոստոսի 21-ի արձանագրությունից հետևում է, որ վերացվել է այդ խախտումը և Պողոս վարդապետ Տեր-Մարգարյանը այդ օրվանից համարվել է Սիմոնի անդամ և կատարել իր պաշտոնական պարտականությունները:

Ցանկանում ենք անդադարառալ Սինոդի ստեղծման հարցին, որը կատարվեց Հայաստանի կողմից ռուսական կողմնորոշում ընդունելուց հետո՝ 1836 թվականի Պոլոժենիայի (Կառնոնադրության) հիման վրա:

Ինչպես հայտնի է, Մայր Աթոռ Ս. Էջմիածինն իր գոյության օրից երբեք մահն օրգան չի ունեցել, ինքն է միշտ տնօրինել իր խնդիրները, երկրի խնդիրները: Սակայն Սիմոնի ստեղծումը ինքնահայտնակ չէր. ցարական իշխանության կողմից այն պարտադրված մի վարչաֆակողական օրգան էր Հայ Եկեղեցու համակարգում, նպատակով՝ ֆակողության տակ վերցնել և տեսադաշտում պահել Եկեղեցու ամբողջ գործունեությունը: Այսպես, օրինակ, յուրաքանչյուր որոշում պետք է համաձայնեցվեր և հաստատվեր փոխարքայի կողմից, իսկ Ամենայն Հայոց Կաթողիկոսի թեկնածությունը պետք է հաստատվեր ռուսական կայսեր կողմից, էլ չենք խոսում

դպրոցների և այլ հարցերի վերաբերյալ: Դրանով սահմանափակվել էր դարերով հիմնավորված Հայ եկեղեցու ինքնուրույն գործունեության իրավունքը:

Վերջապես՝ ՉՈՐՐՈՐԴ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ 1864 թվականի Սինոդի արձանագրությունն է: Այս արձանագրությունից տեղեկանում ենք՝

ա) որ Պողոս վարդապետ Տեր-Մարգարյանը, մինչև Սինոդի անդամ նշանակվելը, 1862 թվականից արդեն կատարելիս է եղել որոշ աշխատանքներ Հաղարծին վանքում:

բ) որ Տեր Հորը Սինոդի անդամ նշանակելու թույլտվությունը կամ համաձայնությունը կաթողիկոսի միջնորդությամբ է եղել, որից հետո է միայն հաստատվել կովկասի փոխարքայի կողմից:

գ) որ տվյալ սեպտեմբերի 18-ի միստում Սինոդը քննարկել է նաև Պողոս վարդապետի դիմումը մեկամսյա արձակուրդի թույլտվություն ստանալու՝ նախկինում ձեռնարկած աշխատանքները վերախնդրելու համար Հաղարծին մեկնելու:

Այս ամենից բխում է կարևոր հետևություն, որ, չնայած երկրի առկա բազում դժվարություններից, մերքին և արտաքին տնտեսական, քաղաքական ծանր վիճակից, Սուրբ Էջմիածինը և նրա հոգևոր ղեկավարությունը հնարավոր ամեն ինչ գործադրում են՝ օտարված և քայքայված սրբավայրերը ազգից վերադարձնելու, բարեկարգելու և հոգևոր կյանքն այնտեղ վերականգնելու համար, որը հաջողվում է միայն Հաղարծնում, վամահայր Պողոս վարդապետի տասնամյակների եռանդուն ջանքերի շնորհիվ:

Հայաստանի Հանրապետության ՊՊԿ արխիվի

ֆոնդ 56, ցուցակ 5, թղթապահակ 60, գործ 218,

էջ 454-455, տե՛ս 8-րդ ցուցակի էջ 41

ԷԶՄԻԱԾՆԻ ՄԻՆՈՐԻ ԱՐՋԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Փաստաթուղթ առաջին

Ի 13 նոյեմբերի 1863 ամի, Ըստ հրամանի Նորին կայսերական Մեծության ի Լուսաորչական Հայոց Սինոդիս Սրբոյ Էջմիածնի լուան գխնդրագիր միաբանի Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի Պողոս վարդապետ Տեր Մարգարեանի յանուն Նորին Վեհափառության ի 29 յուլիսի տարուոյս, յորում գրի թէ յամենայն քայլափոխս Քայրեմասիրաց անձանց ի Հայաստան գրեթէ ըմդ հարկանին աչաց իրել զվճիտ ճառագայթս արեգական ծագելոյ ըմդ արշալոյսն առաւօտուն յամենայն ծէրպոց վիմաց ի ձորոց եւ ի քարանձաւաց, զերահրաշ կնքտուածք սրբութեան տաճարաց, կացեալք անբարբառ վկայք մեծագործութեան եւ առաքինութեան մերոց երջանիկ

նախնեաց, այլ չաւեմ բաւ պերճ փառաց Հայաստանի, զի այնքիկ վկայք սրբութեան, որք երբեմն ի փառազարդ վայելչութիւն եւ ի շինութիւն հանդիսարան կացեալ աստուածաբանական եւ փիլիսոփայական մակագրութեամբ եւ մարդաշատ բազմութեամբ գերզոց իւրեանց զօրհմաքանութեամբ զձայն ընդ ամնարմին դասուց զուգակցեալք ի բարձուսն անեղական Աթոռոյն աստուածային մատուցանէին բուրվառաւ աղօթից ի պատարագ ընդունելի, աւա՜ղ այսօր թաղեալք ի փոշի մոռացութեան կիսակործան աներակօք որքք են լիալք վայրասուն Հրէոց ու ամարգել գազանաց եւ այսպէս ցայսօր ժամանակի զանեղծանելի առաքինութիւնս մերոց երջանկափառ նախնեաց ընդ աղօտ արտափայլեալ, տակաւին գիտեմ շարժիլ ի կարեկցութեան ո՛չ միայն զորդիս երկանց սուրբ ծննդեան իւրեանց, այլեւ զամենայն ուղիւն միանգամայն զայց եղեալս ինքեանց ի թիւս այսոցիկ վանօրէից գտանի ամայի արդէն հոչակատոր մեծաստանն ամուսնեալ Հաղարծիւ, շինեալն ի ՇԻ (-1071) ի Բագրատունի թագաւորաց մերոց, որոց շիրիմք հանգստեան գտանի անդէն, որ տուն եւս անուանիր յառաջագոյն Ջաքարէ եւ ի վանէ Բագրատունի մեծ սպասալարաց ազգիս, զորոց զգեղեցկադիր շքեղութիւն ցուցանեն կիսակործան քարիմք մորիւն, որք մամուսպատեալք մաքառին դեռեւս ընդ անգութ ժամանակին, անօգնական ամենեւին ակնկալեալ միայն վերին այցելութեամբ: Վեհափառ Տէ՛ր, ծնանի մարդ յաշխարհ ի լնու զբանական պարտս իւր բարիք, պիտանի ծառայութեամբ նուիրել զանձն իւր ազգի, ապա եկեղեցոյ եւ ապա հայրենեաց եւ որք արտաքոյ այսոցիկ տեսանին չհամարեալ յազգս, զգամ յանձն իմ այս գտոյն առաքինական բարեմասնութեան, որով եւ փափագիմ ի սրտէ զբանական պարտս հառուցանել, զի ո՞րք ընթերցեալ զպատմագրութիւն կիրակոս Գանձակեցոյ եւ զճանապարհորդութիւն ռմանց ազգասիրաբար այցելելոց հոչակատոր մեծաստանին Հաղարծնոյ, վասն առաջին պայծառութեամբ ու շքեղութեամբ եւ մշտամտումն սաղմոսերգութեամբ սրբազոմար միաբանից պատսպարելոց ընդ հովանեաւ թուոց սրբութեանն մորիւն, եւ զայժմեան անշքութիւն տխուր տեսարանի մոյն սրբութիւն վայրի ոչ վշտասցի հոգեպէս ընդ այն ամայութիւն: Վեհափառ Տէ՛ր, ցանկութիւն իմ է մաքրիլ եւ յարդարիլ զայն տեղի սրբութիւն, եթէ ոչ ըստ առաջին վսեմութեամբ, զէ՞ր սրբութեամբ եւ մաքրութեամբ պահպանութիւն, վայրուցն գոյով առիթ թերեւս լիցի ինձ զայն տեղի յապազայ ժամանակս օգտակարս եւ պիտանիս վասն ընդհանրական Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի ընծայեցուցանել, վասն հայցելով այսու աղերսագրութեամբ զմարդասիրական գութ եւ զազգասէր օժանդակութիւն Ձեր յայս Աստուածահաճոյ գործ, աղաչեմ ազատ կացուցանել զիս ի թուաց միաբանից Սրբոյ Էջմիածնի եւ հրամայել ինձ զբնակութիւն իմ կալնու յայն մեծաստան, որով իմ եւ եղեց յաւիտեան գոհաբան զմորհաց Ձերում վեհաստիճան օծութեամբ:

Նորին Վեհափառութիւն ի վերայ յիշատակեալ խնդրագրոյ արարեալ է այսօրինակ մակագրութիւն յանձնիմ ի տեղեկութիւն Սինդի, զի խնդրատու Պօղոս վարդապետն Տէր Մարգարեան միաբան Աթոռոյն կարգեցաք արդէն ըստ թախանձանացն վանահայր առանձին կոնդակաւ մերով ի վանս Հաղարծնի, զորմէ հարկ է եւ

Ատեանհիդ ըստ կարգին ազդ առնել մարմնաւոր իշխանութիւնն ի գիտութիւն մոցին եւ յապափութիւն վիճակի վաճառօրն»:

ՀՐԱՄԱՅԵՑԻՆ. որովհետեւ վաճքն Հաղարծմի ենթադրի տեսչութիւն թեմական կառավարութիւն վրաստանի եւ Իմերեթիոյ, վասն զվերոտողեալ տնօրէնութեւն Վեհափառ կաթողիկոսի ծանուցանել կոմսիստորիային Տփիսխայ առ ի հոգալոյ զամենայն զկարեւորսն պառկանութեամբ եւ իրաւանց վաճուցն, համեմատ համանան մօին վաճօրէից գտանեցելոց ըմդ մորան տեսչութեամբ: Ջորմէ հրամանագրով տուեալ տեղեկութիւն եւ մորոզ մշամակեալ վաճառօր մորին Պօղոս վարդապետին պատուիրել ի դէպս հարկաւորութեանց եւ այլոց գործոց վերաբերելոց վաճառական կառավարութեան դիմել ուղղակի յԱտեան կոմսիստորիային, իբրեւ մերձաւոր իւրում անմիջական իշխանութեան եւ ըստ այսմ կազմեալ զմոր գործ, այժմէն իսկ աւարտեալ համարել վասն տարոյ ի ժամուն ի դիւանն ի պառկեստ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՍԻՆՕԴԻ

ՎՃՏԱԿԻՐ ՄԱՏԹԷՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Անդամներ Սինօդի

Եղիազար արքեպիսկոպոս

Գրիգոր արքեպիսկոպոս

Գէորգ արքեպիսկոպոս

Սարգիս վարդապետ Տէր Գրիգորեան

Ատեանդպիր (ստորագրություն)

Փաստաթուղթ երկրորդ

Ի 11 մարտի 1864 ամի, Ըստ հրամանի Նորին Կայսերական Մեծութեան ի Սինօդիս Սրբոյ Էջմիածնի լուան զյայտարարութիւն Հոգեւոր կառավարութեան Հայոց Աղեքսանդրապօլոս ի 22 փետրուարի անցելոյ համարու 151, յորում գրի, թէ ի մօին լուան զկոմդակ Վեհափառ Կաթողիկոսի Ամենայն Հայոց Տեառն Մատթէոսի ի 28 յունուարի տարույս համարաւ 80, յորում գրի այսպէս. «Հոգեւոր կառավարութիւն Աղեքսանդրապօլոս ծանուցանեմք, ըստ որում հոչակելի Սուրբ մեծաստանն Հաղարծինու մոր ի մորոյ ձեռնարկութեամբ Պօղոս վարդապետի մորին վաճառօրն սկիզբն առնու կանգնելոյ, ուստի եւ պէտս ունի օժանդակութիւն առ այժմս յաղագս ամայի մնալոյն ի թազմաց հետէ, վասն պատուիրեմ դմին անյապաղ զգիւղն Համ-

գլայիման դարձուցանել առժամանակ մի ի կառավարություն Սրբոյ վանհիցն. որոյ արդեամբքն կեցութիւն գտեալ վիճակի քարօքապէս յիշեալ վանահայրն կարասցէ շէն առնել զվանքն. որ է պարծանք մերոյս Ազգի: Ի լսելն զայս անդամք կառավարութեան յայտնեցին յԱտեանի, թէ Համգաշիման անուանեալ գիւղն է նոյն ինքն Բօզի գիւղն, որ ի կողմանս Փամբակաձորայ: Կարգաւորեալ է Քամաձայն ներկայ կոնդակի վեհափառ կաթողիկոսի Ամենայն Հայոց, զգիւղն Համգաշիման. նոյն է Բօզի գիւղն Փամբակաձորայ, «դարձուցանել առ ժամանակ մի ի կառավարութեան Սրբոյ վանհիցն Հաղարծիճու. եւ առ այս վախճան Քրիստոսեանքով քարեկարգին Փամբակաձորայ որպէս զստացումն ամենատեսակ վիճակապատկան եւ աթոռապատկան արդեանքն նմանապէս եւ զամենատեսակ քարեկարգչական պարտաւորութիւնս այնր գեղջ թողով այսուհետեւ ընդ վերահասու ընդ վանահօր այնր վանհից առանց ձեռնամուխ լինելոյ յայնս, ծանուցանելով զայնմանն եւ հասարակութեան տեղւոյն ի գիտութիւն եւ ընդ միջն հասուցանել զհաւաստի տեղեկութիւն, թէ Համգաշիման անուանեալ գիւղն է նոյն ինքն Բօզի գիւղն, թէ այլ է: Եւ եթէ այլ գիւղն, որն է՝ յակաճէ յանուանէ, գորմէ հաղորդել վանահօրն այնր վանհից առանձին գրութեամբ ի գիտութիւն այնու, զի նա զհաշիւս ամենատեսակ արացեալ արդեանքն եւ զայլ ամենայն հարկաւոր տարեկան ծանօթիւս եւ զհաշիւս եկեղեցւոյն այսր գեղջ ուղղակի յինքննէ հասուցէ ի վիճակային կոնսիստորիայն Հայոց Երեսնայ եւ զամենից վերոյգրեղոցն յայտ առնել Սիմօղիս Սրբոյ Էջմիածնի եւ վիճակային կոնսիստորիին Երեսնայ վասն տեղեկութեան պարտապատշաճն տնօրինութեամբ:

ՀՐԱՄԱՅԵՑԻՆ, Որովհետեւ Հոգեւոր կառավարութիւն Հայոց Աղեքսանդրապօլու համաձայն կոնդակի վեհափառ կաթողիկոսի Ամենայն Հայոց Տեառն Մատթեոսի արարեալ է վասն վերոյգրեալ առարկայի զպատշաճաւորն կարգադրութիւն վասն զվերոյգրեալ յայտարարութիւն մօրին ընկալեալ ի տեղեկութիւն կցել ընդ գործոյն:

ԱՏԵՆԱՊԵՏ ՍԻՆՕԴԻ

ՎՇՏԱԿԻՐ ՄԱՏԹԷՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Անդամք Սիմօղի

Եղիազար արքեպիսկոպոս

Գրիգոր արքեպիսկոպոս

Գէորգ արքեպիսկոպոս

Ատեմադաիր (ատորագրութիւն)

Լուեալ զայս օրագրութիւն Տ. Ատեմակալայ Սիմօղի եւ քարեհաճեալ ընդ այն ստորագրեցին այլ անդամք սորին արքեպիսկոպոստոնքն Ղուկաս, Մակար, եւ Սարգիս. եւս եւ վարդապետն Սարգիս գտանէին ի քացակայութիւն:

Կարգապահ Յ. Նաչատրեանց:

Փաստաթուղթ երրորդ

Ի 21 օգոստոսի 1864 ամի, Ըստ Հրամանի Նորին Կայսերական Մեծութեան ի Սիմօղիս Սրբոյ Էջմիածնի լուան զգեկուցումն, Սիմօղս օրագրութեամբ ի յուլիսի տարույս, որ վասն կարգման մորոգ անդամոց իւրոց ի միջի այլոց եզրակացուցեալ էր քացակայեալ գտանեցեալ անդամոց սորին, այն է Յովհաննէս արքեպիսկոպոս Ասլանեանց եւ Պօղոս եւ Գրիգոր վարդապետաց հանել զառանձին հրամանագիրս յաղագս փութանակի աճապարելոյ մոցին յէջմիածին ի վարումն մորոգ պաշտամանց իւրեանց: Ի կատարումն որոյ եւ ի 4 յուլիսի անցելոց համարօք 1002, 1006, եւ 1008 առաքեաց մոցա զառանձին հրամանագիրս:

Համաձայն այսմ կարգադրութեան մորոգ մշանակեալ անդամ սորին Պօղոս վարդապետն ժամանեալ յէջմիածին յայս թիւ ներկայացաւ յԱտեան Սիմօղիս: Ուստի ՀՐԱՄԱՅԵԾԻՆ, Համաձայն վերոյգրեալ օրագրութեամբ Սիմօղիս զկնի ածելոյ յերդումն օրինադրեալն կարգաւ թոյլատրել Պօղոս վարդապետին այժմէն իսկ ի վարումն անդամակցական պաշտաման իւրոյ, որոյ վասն եւ զանուն մորա յայսմ հետէ յօրագրութիւն սորին ցուցանել մերկայ, զորմէ եւ յայտնել կարգապահի սորին ստորագրութեամբ ի վերայ այսր օրագրութեան:

ԱՏԵՆԱՊԵՏ ՍԻՆՕԴԻՍ

ՎՇՏԱԿԻՐ ՄԱՏԹԷՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Անդամներ Սիմօղի

Յովհաննէս արքեպիսկոպոս
Գրիգոր արքեպիսկոպոս
Գէորգ արքեպիսկոպոս
Յովհաննէս վարդապետ
Թադէոս վարդապետ
Պօղոս վարդապետ Մարգարեանց
Գրիգոր վարդապետ Առուշանեանց

Փաստաթուղթ չորրորդ

Ի 18 սեպտեմբերի 1864 թ. Ըստ հրամանի Նորին Կայսերական Մեծության
 և Սիմոնի Սրբոյ Էջմիածնի լուսն զայտարարութիւն անդամոյ Սիմոնի Պօղոս
 վարդապետի Տէր Մարգարեանց ի 16 սեպտեմբերի տարւոյն համարաւ 41 յանուն
 վեհափառ կաթողիկոսի Ամենայն Հայոց եւ ի նորան սրբութեան մակագրութեամբ
 յանձնեալ ի տնօրէնութիւն սորին յորում գրէ այսպէս. «թէպէտ ըստ միջնորդական
 գրութեամբ Ձեր, որ առ տէր Փոխարքայն ճշանակեցոց Անդամ լուսաւորչական Սի-
 մոնի Սրբոյ Էջմիածնի եւ ներկայս վարիմ գնոյն պաշտօն, սակայն յառաջ քան զայս
 կատարէի զպաշտօն վաճառարութեան Հաղարծնի Սրբոյ մեծաստանին, եւ այն
 ըստ բարձու հրամանի Ձերոյ վեհափառութեան ուրանօր ոչ սակաւ աշխատութիւնս
 ունիմ. վասն որոյ խնդրէմ խոնարհաբար ի վեհափառութեանդ շնորհ առնել մեզ
 հրամայել ում արժանն է. թոյլատրել մեզ սահմանեալ կարգաւ ամսաչափ միջոցաւ
 գնալ գործել անդամօր վերահասութիւն կալուածոց կամ եկամտից սրբոյ ուխտին եւ
 սպա վերադառնալ անդի յետոս:

Ի վերայ այս յայտարարութեան վեհափառ կաթողիկոսն արարեալ է այս օրի-
 նակ մակագրութիւն «յանձնեմք Սիմոնիտ ըստ սահմանեալ կարգին մի ամսեայ ժա-
 մանակաւ արձակել զՊօղոս վարդապետն անդամ որոին գնալ ի վերահասութիւն
 Հաղարծնի վանից, բացակայ համարելով գնալ յօրագիրս Սիմոնիտ»:

ՀՐԱՄԱՅԵՑԻՆ - Համաձայն յայտարարութեան անդամոյ սորին Պօղոս վար-
 դապետի Տէր Մարգարեանց եւ մակագրութեամբ վեհափառ կաթողիկոսի Ամե-
 նայն Հայոց տալ մնա զմի ամսեայ արձակուրդ վասն գնալոյ ի վերահասութիւն Հա-
 ղարծնի վանից եւ վերադառնալոյ որոյ վասն եւ տալ մնա զմի ամսեայ անցագիր:
 Եւ մինչ ցվերադարձ նորին ի բացակայութեան ցուցանել մնա յօրագրութիւնս սորին
 քաջակայ, գործել եւ յայտնել կարգապահի դիւանատան Սիմոնիտ ստորագրու-
 թեամբ ի վերայ գեկուցման:

ԱՏԵՆԱՊԵՏ ՍԻՆՕԴԻՍ

ՎՇՏԱԿԻՐ ՄԱՏԹԵՆՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Անդամք Սիմոնի

Յովհաննէս արքեպիսկոպոս

Գրիգոր արքեպիսկոպոս


Գեորգ արքեպիսկոպոս

Յովհաննէս վարդապետ

Թադէոս վարդապետ

Պօղոս վարդապետ

Գրիգոր վարդապետ



ԱՅԱԳԻՏԱԿԱՆ



ՀԵՐԻԲՆԱԶ ՈՐՄԱՆՅԱՆ

ՆԵՐՍԵՍ ԵՆՈՐՀԱԼՈՒ «ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ» ՊՈԵՄԸ

Գրական իր ուղին Ներսես Օմորիայի (1101-1173) սկսել է գրեթե պատանի թվակիր մրա առաջին երկը՝ «Վիպասանութիւնը», գրված է 1121 թ.: Արդի գրականագիտությունը Ներսես Օմորիայու երախայրիքը դասում է միջնադարյան պոեմների շարքը: Մ. Արեղյանի բնութագրմամբ՝ «Դա առաջին չափածո քերթվածն է մեր գրականության մեջ»¹, պատմաքաղաքական առաջին վիպերգությունը: Բանասեր Մանիկ Մկրտչյանի իրավացի դիտարկմամբ՝ Ներսես Օմորիայու երախայրիքը որոշ իմաստով մախանջում է մրա ստեղծագործության հետագա ընթացքն ու բովանդակային շրջանակները»²:

Պոեմի լրիվ վերնագիրն է՝ «Օարագրութիւն հոմերական վիպասանութեամբ սակս Հայկազանցն սեռի եւ Արշակունեանցն զարմի՝ ի սկզբանցն մինչ ի վախճան, առասացեալ Ներսէսի՝ եղբոր Կաթողիկոսի Հայոց տեառն Գրիգորիսի, յիւրականսն մախնիս, ի համբակութեան եղով տիս»: Այս վերնագրին հաջորդում է պոեմի մախերգանքը, ուր Ներսես Օմորիայի խոսում է իր երկի մպատակի և ծրագրի մասին, մախերգանքին՝ բուն վիպասանության եմթախորագիրը. «Վիպասանութիւն մախնի՝ ըստ Հոմերի, սկսեալ ի վերուստ»:

Միջնադարյան գրականության մեջ ընդունված էր գրական տեսակի անունը հղել վերնագրի մեջ՝ իհարկե, եղնելով ստեղծագործության թեմային, կիրառության

¹ Մ. Արեղյան, Երկեր, Դ. ե., 1970, էջ 113:

² Օմորիայի. Վիպասանութիւն, քննական քննադիր պատրաստեց. ծանոթագրեց և առաջաբանը գրեց՝ Մանիկ Մկրտչյանը, Ե., 1981, էջ 5:

գաղափարների գմառատության մեջ: Ըստ Մ. Աբեղյանի՝ «Նպատակն է, ինչպես հեղինակը գրել է նախաբանի մեջ, արտահայտել երախտագիտությունն առ նախնիները»⁸: Գր. Հակոբյանը Վիպասանությունը գրելու դրդապատճառը համարում է «Նախնյաց երախտագիտությունն ու հայրենասիրությունը»⁹, ըստ Կ. Քիպարյանի՝ Օնորհալու «քերթվածը շնորհակալության տուրք մըն է գրողի կողմն իր նախնիքներուն, սակայն, միաժամանակ, կզգացնե, թե քերթողը հոգեբանական ինչ վիճակի մեջ կգտնվեր այդ աղետաբեր տարիներուն»¹⁰: Նախնիների նկատմամբ իր երախտագիտությունն արտահայտելու խնդիրը իրականում եղակետ է միայն: Ն. Օնորհալին շատ ավելի մեծ նպատակ է դրել իր առջև՝ վիպերգել հայ ժողովրդի պատմական ճակատագրի խորհուրդը, անկախությունը կորցրած հայրենիքի աղետալի վիճակը, պետականության հաստատման երազանքը՝ անցյալի հերոսական ոգու վերարձարծմամբ: Իր նպատակի ու ծրագրի մասին Օնորհալին խոսում է Վիպասանության նախերգանքում: Ապալինելով Սողոմոն Իմաստունի հեղինակությանը՝ որդին հորը պարտական լինելու, ծնողին արժանի վարձ հատուցելու մասին, խոստովանելով, որ ինքը պատանի է դեռ, թերի գիտելիքների տեր, որ ինքը չի ուսանել Աթենքում, չի ներհմտացել քերականության, ճարտասանության, քերթության գիտելիքների յուրացմամբ. «Ջորս գիտել նախ պատշաճի, եւ աստ ապա ձեռնարկելի» գրել, այսուհանդերձ, համոզված է, որ առատաձիրք Սուրբ Հոգին խոսքի շնորհ կտա իրեն, չի հապաղում անցնելու իր մտահղացման իրականացմանը:

Ակներև է Ներսես Օնորհալու գաղափարական դրույթների մեկնակետը: Իր նպատակն է համարում գրել նախահայրերի մասին, թե ովքեր էին, որտեղից, երբ եմ ապրել ու գործել և, որ ամենից կարևորն է, իր խնդիրն է համարում նրանց մասին պատմել ըստ իրենց գործերի, հավատարիմ Մ. Խորենացու այն սկզբունքին, թե՝ ինչ մարդն ու նրա գործերն են, այն էլ նրա պատմությունն է»¹¹:

Այս մոտեցմամբ էլ Ն. Օնորհալին ձգտում է պանծացնել նախնիների արիության և գեղեցիկ գործերը և, ընդհակառակը, պախարակում է ոմանց անբարի, անարժան գործերը և աշխարհում թողած վատ անունները, որպեսզի մա, որի համար բաղձալի է լավն ու բարին՝ «Առ ի բարեաց նախանձ շարժի», իսկ մա, որ հակամետ է շարին՝ «Թորինակաց աստ կշտամբի»: Բարոյադաստիարակչական այս նպատակը խորապես հարիր է ոսկեդարյան հայ պատմության ոգուն: Եղիշեն, որի երկը Օնորհալու Վիպասանության աղբյուրներից էր, իր երկի նպատակն էր համարում քաջության, հերոսության, ազատության ոգի մերշնչել սերունդներին, նրանց տոգորել հայրենասիրությամբ և, ընդհակառակը՝ ատելի դարձնել դավաճանությունը,

⁸ Մ. Աբեղյան. Երկեր, Դ, էջ 113:

⁹ Գր. Հակոբյան. Ներսես Օնորհալի, Ե., 1964, էջ 171:

¹⁰ Հ. Կիրեղ վրդ. Քիպարեան, Պատմություն հայ թիմ գրականության, Վենետիկ, 1992, էջ 384:

¹¹ Մ. Խորենացի, Պատմություն Հայոց, Գիրք Ա, ԼԱ (ԼԲ). «Որպես այդն եւ գործք, այսպես եւ զմասն էր րանք» (Ե., 1991, էջ 85):

ովստադրությունը, երկչոտությունը: Ահա մրա հակիրճ հանձնարարականը. «զի հանապազորդ ընթեռնուցուս, լսելով զառաքինեացն զքաջութիւն. եւ գլետս կացելոցն զվատթարութիւն»¹²:

Վիպասանությանն նախերգանքին հաջորդում է ըստ էության, մի նախադրություն՝ ըստ Աստվածաշնչական ավանդությունների, ուր Օմորհալին արտահայտել է կրոնա-աստվածաբանական իր մտքերը Սուրբ Երրորդության երեք անձերի՝ Հոր, Որդու և Սուրբ Հոգու համագոյության, աշխարհի արարչագործության, դրախտի, նախաստեղծ մարդկային գոյցի, պատվիրազանցության, դրախտից արտաքսվելու մասին, ապա երկիրը մարդկանցով լցվելու, նրանց՝ զոջալու փոխարեն «ցանկական ախտի» զեղխելու՝ լինելու մասին, որի համար էլ պատուհասվեցին ջրհեղեղով, և միայն Նոյն էր, որ փրկվեց տապանով «որդսովքն իրովք», որոնք «վերստին աշխարհ շինեալ» բաժանեցին «ազգ ըստ ազգի»:

Աստվածաշնչական այս հակիրճ հարասությունից հետո Ներսես Օմորհալին անցնում է ազգերի ծագմանը՝ հետևելով Մովսես խորենացուն: Վիպասանության կառուցվածքային տեսանկյունից այս նախադրությունը կարող է անհարկի թվալ: Միչդեռ, իրականում, այն իր մեջ խտացնում է ամանց զաղափար՝ ազգային արմատների գիտակցության հպարտությունը: Օմորհալին պիտի հավաստեր, որ հայոց ազգը սերում է Նոյի սերունդներից, որ նա զալիս է հնագույն դարերից, և որ միշտ պետք է վառ պահել պատմական հիշողությունը:

Բուն վիպերգությունը սկսվում է Հայկ Նահապետի՝ Բելի դեմ տարած հաղթանակի դրվատմամբ: Ներսես Օմորհալին մեծարում է Հայկազանց տոհմի նշանավոր մարդկանց, փառաբանում նրանց աշխարհաշեն գործերը, ռազմական քաջությունը, բարոյական վարքագիծը: Մովսես խորենացունց ներշնչված՝ Ներսես Օմորհալու համար ևս սիրելի են այն թագավորները, որոնք լավ են համարել «մեռնել հայրենիքի համար, քան տեսնել, թե ինչպես օտարածին ցեղերը ոտնակոխ են անում իր հայրենիքի սահմանները»¹³: Այդպիսի թագավոր է եղել Արտաշես Առաջինը: Էպիկական շեշտ կա նրա կերպարի գծման սեղմ ու խիտ տողերում.

Սա զօրս անթիւս ժողովեալ,
Ըստ քարադէզն կարկառեալ,
Եւ յարեմմոտս խաղացեալ,
Ջլիւղացւոց արքայն կալեալ,
Ջընդհանուր ծով հնազանդեալ,
Եւ զցամաքսն նուաճեալ,
Քան զԱլեքսանդր վեհ եղեալ,
Պոլիկրատեալ գովաբանեալ,

¹² Եղիշէ, Վասմ վարդաճայ և Հայոց պատերազմի, Ե., 1957, էջ 4:

¹³ Մ. Խոններացի, Հայոց պատմություն, Ե., 1990, Ա, ԺԳ, էջ 29:

Որ մետաձիգ զօրացմ եղեալ,
Եւ զմիջօրեայն մթացուցեալ...¹⁴

Թե՛ Տրդատ Մեծի, և թե՛ Գրիգոր Լուսավորչի կերպարները Ներսես Ծնորճային տվել է ջերմությամբ՝ ըստ Ազաթանգեղոսի մերկայացնելով մրանց՝ վիպական դրվագներով հարուստ կենագրությունը՝ վաղ մանկությունից մինչև խորին ծերություն և մահ: Գործողության ծավալման թափով և խոսքի սեղմությամբ այքի է ընկնում մամականը Տրդատի քաջագործությունների մասին դրվագը: Նա ոչ միայն պանծացրել է իր ամուսնը, այլև հայոց ազգի պատիվը: Եվ Ներսես Ծնորճային չի վարանում մրան անվանել մոր Հերակլես, առասպելական ուժի տեր հսկա («Մինչդեռ Տրդատն զօրացեալ եւ մոր Հերակլ անդ անուանեալ»)¹⁵:

Տրդատը մեծ դեր է խաղացել քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու գործում: Հայոց Եկեղեցին մրան դասել է սրբերի շարքը: Ներսես Ծնորճային, սակայն, հավատարիմ իր սկզբնաղբյուրին, չի սքողել մրա դաժանությունը թե՛ Գրիգոր Պարթևի, թե՛ Հռիփսիմյանց կույսերի նկատմամբ:

Տրդատի կերպարը Վիպասանության ակնառու արժանիքներից է: Տրդատի և Գրիգոր Լուսավորչի դրամատիկ լարվածության դրվագը առանձին վերցրած կարող էր լինել գեղեցիկ պատմական քերթված: Ռոմանտիկ գեղարվեստական ուժը ստեղծվում է այն հակադրություններից, որոնք կային հեթանոս Տրդատի և քրիստոնյա Գրիգորի միջև, Հռիփսիմյանց կույսերի և Տրդատի միջև, լուսիս և խավարի՝ իբրև քրիստոնեության և հեթանոսության խորհրդանշների միջև:

Վիպասանության մեջ Ներսես Ծնորճային մեկ անգամ չէ, որ դիմում է ուղղակի խոսքին՝ մերթ ըստ սկզբնաղբյուրի, մերթ խոսքին առավել հուզական ջերմություն տալու համար: Դա ոչ միայն խախտում է պատմողական ոճի միօրինակությունը, այլև քնարականություն է հաղորդում խոսքին: Այսպիսի հատված է Հռիփսիմեի դիմումը Գրիգոր Պարթևին, որ գտնվում էր խոր Վիրապում («Ձայն առ արկեալն ի գութն արկեալ, Սիրոյ տարփմամբ զայս ասացեալ»):

Արդ յանճաճանչ վայրէդ եղեալ,
Զբանն լուսոյ ընդ քեզ առեալ,
Ի յանդաստան քո սերմանեալ,
Որ անապատ էր ծարաւեալ,

¹⁴ Վիպասանություն, էջ 47-48:

¹⁵ Վիպասանության գիտաքննական քննադրի ծանոթագրությունը, թե «եսողը հյուզանդական կայսր Հերակլ Առաջինի մասին է (610-641, Վիպասան., էջ 142), ակներև սխալ է: Խոսքը հունական առասպելի Ռերոս Հերակլեսի (կամ՝ Հերկուլեսի) մասին է: «Տրդատը կոչվում է մոր Հերակլ, որովհետև առասպելական ուժի տեր էր, Ռերոսաբաղ պալաքարում էր բարձրադաս ցեղերի դեմ», - գրել է Ա. Մաղոյանը (տե՛ս Ոչվ. աշխ., էջ 227):

Յոր շուշանաց. վարդից բուսեալ.
 Յօղով արեամբ մեր ոռոգեալ.
 Յորում զօստ քո արածեալ.
 Անուշափոտ ծաղկօց բուրեալ.
 Ի դալարութ վայրի բնակեալ
 Եւ առ կենացն ջուր սնեալ:¹⁶

Հայրապետական Աթոռը կարող էր ամուր լինել միայն թագավորական զահի հովանու մերքո: Ներսես Շմորինյան այդ ամրությունը տեսնում էր Գրիգոր Լուսավորչի և Տրդատ Մեծի համագործակցության մեջ: Մինչդեռ ուրիշ էին Արշակունի մյուս թագավորները. Տիրան արքայի հրամանով ճիպտաձեռն լինելով մեռել էր Հուսիկ Կաթողիկոսը, Արշակ Երկրորդը աքսորում է Ներսես Կաթողիկոսին Պատմոս կղզի, իսկ Պապ թագավորը՝ թունավորում նրան: Այս բարդ հարաբերությունները Շմորինյուն պատկերացնում են միայն բարոյական վարքագծի տեսանկյունից¹⁷: Բանաստեղծը հպարտությամբ է տվել Լուսավորչի չորրորդ սերնդից ծագած այդ շատավիղի կերպարի նկարագրությունը: Այդ նկարագրությունը Ներսես Մեծի մահվամբ չի ավարտվում: Մահից առաջ նա գուշակել էր այն աղետները, որ գալու էին հայոց ազգի գլխին: Այդ տեսիլքը, որ Շմորինյան տաղաչափել է ըստ Մեսրոպ Վայոցձորեցու երկի (10-րդ դ.), ազատագրական հույսեր է ներշնչել սերունդներին:

Վիպասանության մեջ Շմորինյան չի շրջանցել նաև հոգևոր մշակութային կյանքի նրախտավորներին: Դարերի հեռվից նա մոր հայացքով է նայում թե՛ Մեսրոպ Մաշտոցի, և թե՛ Սահակ Պարթևի գործունեությանը, նրանց ջանքին ու վաստակին: Նրանց կերպարները Ներսես Շմորինյան տվել է ազգային հպարտության ջերմ զգացմունքով:

Արժանապատվության և, թերևս, բարի մախանձով է Շմորինյան գովերգում ոսկեդարյան հայ մշակույթի գործիչներին՝ Մովսես Խորենացուն, Դավիթ Անհաղթին, Մամբրե Վերծանողին և նրանց ընկերներին, Մաշտոցի և Սահակի աշակերտներին, որոնք մեղուների մամա իմաստության ծաղիկներից նեկտար են ժողովել ազգի համար, որոնք այնքան են «վերին շմորիօք» լցված եղել, որ մինչև իսկ գերազանցել են հույն գիտուններին:

¹⁶ Վիպասանություն, էջ 73-74:

¹⁷ Ըստ Խորենացու՝ Պապ թագավորը «զաղտմի կերպով սուրբ Ներսեսիմ մահացու դեղ խմեցնելով՝ զոկեց կյանքից» (Հայոց պատմություն, Ե., 1990, էջ 199, Գիրք Գ, իԸ): Ատ. Մալխասյանը գրել է. «Պապ թագավորը զուր է մեղադրվում Փարստոսից, Խորենացուն և հետագա պատմիչներից իբրև Ներսես Մեծի թունավորող: «Ներսես Մեծը վախճանվեց արյունաքամ լինելուց, թոքերի մեջ մի մեծ երակ պատռվելով, ինչպես հաճախ պատահում է թոքախտավորների»: Նա գիտեր իր հիվանդությունը, մերժում է դեղափոխերը, գիտեր, որ թունավորված չէ (մույմ տեղում, էջ 286): Տես նաև՝ Оганесян Л. А. История медицины в Армении, ч. I, Е., 1946, стр. 192.

Ըստ Եղիշեի, Ներսես Ծնորհալին ուրվագծում է Վարդան Մամիկոնյանի հերոսական կերպարը, որը մշտապես սիրելի է եղել իր համար: Նախ՝ նրան մեծարում է որպես Սահակի թոռան, ապա՝ որպես հայոց սպարապետի, որն իր միզակակիցների հետ, հանում հայրենի կրոնի և ազատության, ցահարակվեց՝ վարդազույց արյամբ պսակելով եկեղեցին:

• • •

Վիպասանությունը կառուցվածքորեն բաժանված չէ մասերի: Ավելի ճիշտ՝ այն ունի գեղեցիկ նախերգանք, որն առհասարակ պոեմի Ռիմատարրերից է՝ սկսած Հոմերոսից մինչև Դանթե, Ֆիրդուսուց մինչև Պուշկին, Թումանյանից, Իսահակյանից մինչև Եղիշե Զարենց և ուրիշներ: Ունի նաև Ռիշատակարան, վերջերգ, որ հատկանշական է միջնադարյան երկերին՝ չափածո թե արձակ: Կառուցվածքային այս մասերը հստակ են և զեղարվեստորեն ամրապնդված: Ինչ վերաբերում է բուն նյութին՝ հայոց պատմության հոմերական վիպասանությանը, Ներսես Ծնորհալին տըվել է միահար, շղթայափյուն՝ իրեն ազատ զգալով ընդգրկված վիթխարի նյութից անդրադառնալու այս կամ այն դեպքին, երևույթին, ամձին, բնականաբար, շրջանցելով այս կամ այն իրադարձությունը, դեպքն ու դեմքը: Անկասկած այստեղ էլ մահեսել է Խորենացու խորհմաստ սկզբունքին. «Բայց կարճատև գրում եմ այն, ինչ մեզ հարկավոր է, իսկ ավելորդները բաց եմ թողնում»¹⁸: Դեպքերի շղթան Ներսես Ծնորհալին տալիս է բնական ընթացքով. թագավորին հաջորդում է թագավորը, Ռովվապետին՝ Ռովվապետը, իսկ թե ինչ է կատարվել ժամանակին՝ սկսում է պարզ, ամփոփական. «Բայց ի սոցին աուրս լեալ», «Սակայն սակաւ ամաց անցեալ», «Իսկ յետ ամաց այն ինչ անցեալ» և այլն: Վիպասանությունը գրված է ուսուցողական նպատակով: Հետևաբար, համառոտությունը նպատակամետ էր դարձնում խոսքը: Ծնորհալին հանդես է բերել բարձր ճաշակ և լայն իմացություն: Թվարկելով Հայկազն զարմի սերունդներին՝ նա զեղագիտական մուրբ զգացողությամբ ընդհատում է շարքը՝ չծանրացնելու համար ունկնդրի կամ ընթերցողի ուշքն ու միտքը:

Քննադատությունը, թե Վիպասանությունը կառուցվածքային թերություններ ունի, թե «դեպքերը, երևույթներն իրար հաջորդում են ոչ կապակցված ու տրամաբանորեն»¹⁹, թե «դիպաշարքերի շարանը միասնական սյուժե չի դառնում»²⁰, ըստ էության, արդարացի չէ, որովհետև ժամանակակից չափանիշներով չպետք է գնահատել Ծնորհալու պոեմը, այլ պատմական մոտեցմամբ: Ծնորհալին սկզբնավորել է գրական մոր տեսակ՝ պատմաքաղաքական վիպերգությունը՝ համեմատաբար փոքր ծավալի մեջ խտացնելով հայ ժողովրդի պատմությունը՝ նրա ծննդաբանու-

¹⁸ Մ. Խորենացի, Հայոց պատմություն, Ե., 1990, էջ 65 (Գիրք Բ, ա):

¹⁹ Գր. Հակոբյան, Ներսես Ծնորհալի, Ե., 1964, էջ 183-184:

²⁰ Ա. Մաղոյան, Ոշվ. աշխ., էջ 231:

թյունից մինչև իր ժամանակակիցները: Իրավացի է Հ. Օշականը, թե՛ «Շնորհալիին է պատմությունը կարելի եղածին չափ քիչ մեղքով քանաատեղծության քարձրաց-
ցելու հանճարային հաջողվածքը»²¹:

• • •

Վիպասանության բուն բովանդակությունը պատմականորեն կարելի է բաժանել մասերի՝ ա) աշտարակաշինությունից մինչև Արշակունիների թագավորությունը, բ) Տրդատ Առաջին Արշակունուց մինչև Արշակունիների թագավորության անկումը, մինչև Մեսրոպ Մաշտոց և Սահակ Պարթև, գ) Վարդանանց պատերազմից հետո մինչև Շնորհալու ժամանակը: Պայմանականորեն բաժանված այս երրորդ մասին է վերաբերում, ահա, Սահակ Պարթևի տեսիլքը: Ասել, թե ինչու Շնորհալին քիչ տեղ է տվել Բագրատունիներին, թե «Հայունի չէ, թե ինչ ցկատառումով պոեմում Բագրատունիների գործերն ու գործիչներն անտեսվել են»²², թե «Երևում է, որ Շնորհալին Վիպասանությունը գրելիս դեռևս ծանոթ չի եղել ինչպես 7-8-րդ դարերի... այնպես էլ Բագրատունյաց շրջանի հայ պատմագիրների... երկերին»²³, կարծում ենք, իրավացի քննադատություն չէ: Այստեղ անտեսվել է Ներսես Շնորհալու ստեղծագործական եղակետը, այդ դարերի համառոտ պատկերը մա տալիս է հիմնականում ըստ Սահակ Պարթևի տեսիլքի²⁴: Նա բավարարվել է կարճ ասել, որ այնուհետև Հայաստանին տիրում են պարսիկները, ողջով ցրվում են երկրի զավակները, եկեղեցիները ավերվում, սակայն տարիներ, դարեր անց՝

Փոքր ինչ չարին աղօսացեալ,
Հայոց ոգի եւ շումչ առեալ,
Բագրատունեաց թագատրեալ
Եւ մասնատր Հայոց տիրեալ,
Եկեղեցիք լուսատրեալ,
Նախարարաց զահ մորոգեալ²⁵:

²¹ Հ. Օշական, Երկեր, Ե., 1979, էջ 404:

²² Գր. Հակոբյան, Չժվ. աշխ., էջ 184:

²³ Վիպասանություն, էջ 150:

²⁴ Արշակունիների թագավորությունը վերագրվել էր Սահակ Պարթևի կաթողիկոսության օրերին (428 թ.), իսկ իրենով վերջանում էր Գրիգոր Լուսավորչի սերմնի վերջին հովվապետը (439 թ.), /Տեսիլ սրբոյմ աստ կատարեալ. /Թագ և հովիւ Հայոց քարծեալ, /Ջոր մափորտաւքմ եցոյց ծալեալ /Եւ զունդմ ոսկի կտատվ ծածկեալ (Վիպասանություն, էջ 99-100):

²⁵ Վիպասանություն, էջ 103:

Կարճատև թարեթափ մի ժամանակ, եւ մորից ասպատակվում է երկիրը, քսան-չորս ցեղեր, որոնք թուրք են կոչվել, տարածվում են երկրով մեկ՝ վիշապի պես կլանելով «Ջոսկերս մեր գչորացեալ» և մանրելով աղուծմների մահն:

Ներսես Ծնորհալիմ սրտառուչ տողերով է նկարագրել օտար նվաճողների լծի տակ հեծող ժողովրդի դառն կացությունը: Որանք արյունաբերու զազանների մահն հափշտակում են ամեն ինչ, գերելարում, մատնում աղքատության, ստիպում ուրանալ հավատը («Ջոգուց կորուստն գործեցեալ, ի հաւատոցն ուրացուցեալ»), հեռանալ հայրենիքից («Յերկիր օտար պանդխտացեալ»): Եվ դա անցյալ չէ, հուշ չէ, այլ իրական կյանքի պատկեր, որի ականատեսներից մեկն էլ ինքն է՝ բանաստեղծը:

Միջնադարագետ Ա. Մաղոյանը, որը, ի տարբերություն ճախորդ ուսումնասիրողների, ավելի շատ արժանիքներ է տեսնում Ներսես Ծնորհալու երախայրիքի մեջ, գտնում է, որ Վիպասանության հորիմման համար վճռական կարևորություն ունեցող հարցերից «Առաջինը կորցրած հայրենիքի և վերացած պետականության ցավն էր», և որ բանաստեղծը «ձգտում էր հայ երիտասարդությանը պատրաստել հայրենի պետականության վերականգնման համար»²⁶, իսկ երկրորդ հանգամանքը՝ իր ազգատոհմի անցյալի փառքի դրվատումն էր, Պահլավունիների՝ իբրև Լուսավորչի շառավիղների իրավունքների պաշտպանությունը՝ կաթողիկոսական զահր ժառանգելու համար: Ներսես Ծնորհալիմ հայոց պատմությանն էր դիմում իր ժամանակի հուզող հարցերին արձագանքելու շարժառիթից: Անցյալի հերոսներից ոգեկոչելով՝ նա ուժ էր առհաղորդում իր քաղաքական իդեերից և երազանքներից: Այս մոտեցմամբ՝ նա իր դարաշրջանի ամենաարդիական բանաստեղծն էր, ամենասթափ մտածողը: Նա Պահլավունիների՝ իր մերձավոր տոհմակիցների մեծաբանքը սկսում է Գրիգոր Մագիստրոսի հորից՝ Վասակ Պահլավունուց, ապա գովեստներ չի խնայում բնութագրելու Մագիստրոսին, որի դստեր որդու՝ Ապիրատի որդին էր ինքը՝ Ներսես Ծնորհալիմ: Մագիստրոսը ականավոր իշխան էր, զորական, զիտական ու բանաստեղծ՝ «Աստուածային շնորհօք լցեալ, իմաստութեամբ պայծառացեալ» անձնավորություն՝ օժտված Հոմերոսի մահն բանաստեղծելու և Պլատոնի պես պերճախոսելու ձիքով, հմուտ լեզուների իմացությամբ, բազմագիտակ և ժողովրդասեր, որ որքերի հայր էր, այրիների խնամակալ, տնանկների բարերար, որը և եկեղեցիներ էր կառուցել, որոնք, ի դեպ, կանգուն են մինչև այսօր:

Գրիգոր Մագիստրոսի արժանավոր որդին՝ Վահրամը, որ զորական էր և ապա ստանձնեց կաթողիկոսական զահր, վերանվանվում է Գրիգոր՝ «Ջսոնարհութեան լուծն ստանձնեալ», ջանք ու եռանդ չի խնայում քարեկարգելու Հայոց Եկեղեցին, լուծելու քաղաքական բարդ հարցեր, նվիրվելու գրական և թարգմանչական գործի՝ թարգմանելով հատկապես վկայաբանական գրվածքներ, որի համար էլ իրավամբ կոչվել է Վկայասեր: Ներսես Ծնորհալիմ չի վարանում նրան անվանելու «երկրորդ

²⁶ Ա. Մաղոյան. Ծշվ. աշխ., էջ 225:

Մեքրոպա, և սա լուկ երախտագիտության խոսք չէ, այլ եկեղեցու և մշակույթի այդ ճշանավոր անձի վաստակի ճշմարիտ գնահատություն:

Ակնածառների և սիրտ ջերմությանը և գրել Օմորիային նաև Բարսեղ Անցնու՝ Գրիգոր Վկայասերի քրոջ որդու մասին, որը զարգացած եպիսկոպոս էր. և որին Վկայասերը կարգել էր կաթողիկոսի փոխանորդ: Օմորիային մանկության տարիներից ուսանել էր նրա մոտ, նրան երկրորդ հայր է կոչում՝ վշտանալով, որ հարազատ հոր մահից հետո գրկվում է նաև նրա խնամքից՝ Անցնու մահվամբ: Ըստ Գրիգոր Վկայասերի կտակի՝ Անցնին կաթողիկոս է ձեռնադրել Ներսես Օմորիայու Գրիգորիս եղբորը, որը գրեթե պատանի էր և Օմորիայու ուսումնակիցը: Օմորիային հետագայում եղել է նրա սրտակից օգնականը, ծերության նրա տարիների՝ փոխանորդը, իսկ եղբոր մահից հետո ժառանգել է կաթողիկոսական զանդ: Բանաստեղծ եղբայրը գովասանքներ չի խնայել պանծացնելու կաթողիկոս եղբորը, որին համարում է իր կոչմամբ Սուրբ Հոգու կողմից ընտրված, նրան համեմատում է Աստվածաշնչական դրական և մեծագործ անձերի հետ, Հեսուի նման փրկարար է եղել Հայաստանի համար («Մեզ փրկութեան պատճառ եղեալ»), հետևել է Պողոս առաքյալի օրինակին՝ նրա Տիմոթեոս աշակերտի պես, Ջորաբաբելի նման, որը Բաբելոնի գերությունից հայրենիք էր վերադարձրել հրեաներին, Գրիգորիսն էլ հավաքել էր ցրված հայերին՝ մայրերին որդիների հետ բերկրանք տալով («Ջորաբաբել երկրորդ եղեալ եւ գցրուեալս ժողովեալ, Ջմայր որդւովք իւրովք բերկրեալ»): Եղբայրասիրությունը, անշուշտ, իր մասն ունի այս բուռն ու տաք գովասանքի մեջ: Պատանի Օմորիային երախտապարտ է կաթողիկոս եղբորը՝ բարձրացնելով նրա պատիվն ու անունը և, ընդհակառակը, նվաստացնելով իրեն («Իսկ ես՝ կրտսեր նուաստացեալ՝ Ներսես անուն վերասացեալ»): Եղբորը շնորհապարտ է իր ուսման համար, իր նկատմամբ նրա տածած սիրտ և խնամքի համար, այն բանի համար, որ նա իրեն քահանա է օծել, ընծայել հոգևոր ծառայության, մինչդեռ ինքը, որ պատանի է դեռ, իրեն չի համարում հոգևոր սիրով բորբոքված և ողջակիզված, այլ, ընդհակառակը, թաթախված է երկրայինի կոքով («Ոչ ի հրոյն ողջակիզիալ, Այլ ներհակօքն գաղջացեալ»), մի պատանի, որը թեև կոչված է փարվելու և բարձրանալու դեպի երկնայինը, հոգևորը, իրականում հակված է դեպի երկիր («Այլ ի յերկիր հակամիտեալ, Սիրով սորին վայրաբերեալ»): Հոգևորի և մարմնավորի այս հակամարտությունը, սակայն, ողբերգական երանգներ չունի Օմորիայու մոտ, ինչպես Հովհաննես Երզնկացու մոտ՝ նրա «Երկունս ի մէկ տեղ բերած, գերթ ընկեր, կասեց, Թէ՛ պահէ՛ սկզբնատողով սքանչելի տաղի մեջ: Ընդհակառակը, հույսով ապավինած Բարձրլային, պատանի Օմորիային համոզված է, որ ինքը մաքրագործվելով՝ փոփոխվելու է դեպի թարին ու գեղեցիկը.

Միայն ի յոյսն յուսացեալ,

ի Բարձրելոյն աջ զօրացեալ,

Զի յայսքանեաց ի բաց տարեալ՝
 Զիս ի բարիսն փոփոխեալ:²⁷

• • •

Վիպասանության այն հատվածները, որոնք վերաբերում են Գրիգոր Մագիստրոսին, Գրիգոր Վկայասերին, Ներսես Ծմորհալու հորը, եղբորը՝ Գրիգորիս Կաթողիկոսին, Բարսեղ Անցում և հենց իրեն՝ Ներսեսին, աչքի են ընկնում պատմավավերագրական հավաստիությամբ: Վիպասանության այս արժանիքը, սակայն, ըստ արժանվույն չի զնահատվել ուսումնասիրողների կողմից:

Այս մոտեցմամբ առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Վիպասանության գնահատությունը՝ սկսած հեղինակի ինքնագնահատանքից: Խորագրի մեջ նա հարկ է համարել ներկայացնել իրեն. ինքը Հայոց Կաթողիկոսի՝ Գրիգորիսի եղբայրն է, դեռևս պատանի, որ Վիպասանությամբ շարագրելով Հայկազն տոհմի և Արշակունցի զարմի սերունդներին («ի սկզբանցն մինչ ի վախճան»), գրել է նաև իր նախնիների՝ Պահլավունիների մասին և, ինչպես վերջաբանում է ասել՝ «Մինչև ի մերս հասուցեալ»: Ուշագրավ է, որ իր երկի նպատակը համարում է նաև իր հասակակիցներին՝ երիտասարդներին, հոգևոր խրախճանք տալը՝ հայոց նախնիների գործերի համառոտ շարադրանքով («Հասակակցաց խրախճան տուեալ, Որք իմաստից են ցանկացեալ»): Խորագիրը յուրատեսակ հանձնարարական է՝ թե՛ իր գրական մոտեցման ընտանացությունից պաշտպանելու, և թե՛ իր հեղինակությունը հաստատելու համար: Որ Վիպասանությունը եղել է ընթերցանության սիրված երկ, մի կողմից դրա վկայությունն են բազմաթիվ այն ձեռագրերը, որոնք մեզ են հասել տարբեր դարերից, մյուս կողմից՝ այն ազդեցությունը, որ այդ երկը թողել է հետագա դարերի հեղինակների և, մասնավորապես, Վահրամ Բարունու վրա, որը Կիլիկիայի Լևոն Գ արքայի խորհրդով շարունակել է այնտեղից, ուր հասել է Ծմորհալին: Եվ, վերջապես, Վիպասանությունն ունեցել է բազմաթիվ տպագրություններ, որոնցից առաջինը լույս է տեսել 1643 թ. Վենետիկում:

Ուսումնասիրողները համարաշխ են, որ Վիպասանությունն ունի թերություններ, և այնուհանդերձ, զարմանալիորեն հակասական են նրանց գնահատականները՝ սկսած Ալիշանից մինչև Արեղյան, Գրիգոր Հակոբյանից մինչև Հրանտ Թամրազյան և այլք: Գնահատականների շարքը, սակայն, աչքի է ընկնում մի օրինաչափությամբ. հեղինակից հեղինակ ավելի համակողմանի են վերլուծել Վիպասանությունը՝ բացահայտել նոր արժանիքներ: Ալիշանը Վիպասանությունը համարել է արվեստի տեսակետից «ընդհանրապես մի հետևակ բան»²⁸, թերություն է համարել

²⁷ Վիպասանութիւն. էջ 137-138:

²⁸ Ղ. Ալիշան, Ծմորհալի եւ պարագայ իւր. Վենետիկ, 1873, էջ 75:

նույնաճանգությամբ, մինչդեռ ոճը համարել է ողորկ՝ «իր ուրիշ գրվածոց նման»²⁹։ Մանուկ Աբեղյանը համամիտ է Ալիշանին, որ «Այս գրվածքը բանաստեղծական տեսլետից ընդհանրապես մի հետևակ բան է»³⁰, համամիտ է նաև, որ այն «իր կոկ ոճի և լեզվի պարզությամբ շատ սիրելի է եղել և հետագայում նույնիսկ մամուլային օրինակ է դարձել»³¹ և ի տարբերություն Ալիշանի, նշում է. թե «թայց մի գյուտ կա մեջը», և այդ գյուտն այն է, որ դա չափածո առաջին պատմական քերթվածն է մեր գրականության մեջ, և որ «երիտասարդ Ներսեսն արդեն ցույց է տալիս նաև ջերմ հայրենասիրական ոգի»³²։

Ներսես Օմորհայու երախայրիքը աչքի է ընկնում հայրենասիրական պաթոսով և աշխարհիկ բովանդակությամբ։ Բայց Վիպասանությունը համարել բացառապես «կրոնական կաշկանդումներից ազատ պատմական պոեմ»³³, ինչպես զմահատել է Գր. Հակոբյանը, ճիշտ չէ, և իրավացի է Վ. Սաֆարյանը՝ գտնելով, որ դա չափազանցված զմահատական է³⁴, որ պոեմը մերթափանցված է նաև կրոնա-աստվածաբանական միտվածքով։ Պոեմը բացի մախերգանքից, որ միահանգ է՝ ի նույն հանգով, գրված է «եռլ հանգով, և սա, ինչպես տեսանք, համարվել է թերություն։ Անշուշտ, նույնաճանգությամբ կարելի է թերություն համարել դասական բանաստեղծության բազմաճանգության հարաբերությամբ և ոչ թե պատմական մոտեցմամբ։ Իրավացի է Ա. Մադոյանը, որ «կարևոր արժանիք է և նույնաճանգությունը, որ ոչ պատմական մոտեցումով միայն կարող է դիտվել իբրև թերություն»³⁵։ Չէ՞ որ նույնաճանգությունը թարմ մորություն էր ժամանակի համար։

Վիպասանությունը բարձր է զմահատել Հրանտ Թափրազյանը։ Նա Վիպասանության արժանիքներից մեկն էլ համարում է այն, որ Ներսես Օմորհային զգայուն սրտով է անդրադարձել ժամանակի քաղաքական կյանքին։ «Սա մի մեծ մորություն է սկիզբ էր հայ բանաստեղծության մեջ»³⁶։ Ըստ էության արդարացի չէ քննադատական այն դիտողությունը, թե «Օմորհայու հերոսներից շատ-շատերը կերպար չեն դառնում»³⁷։ Օմորհային ընդգրկել էր վիթխարի պատմական նյութ, և բնական էր, որ նա հաճախ մեկ-երկու տողով միայն բնութագրեր իր հերոսներին։ Մինչդեռ Թափրազյանը գտնում է, որ Գրիգոր Մազիստրոսի կերպարի պատկերմամբ Օմոր-

²⁹ Նույն տեղում, էջ 76։

³⁰ Մ. Աբեղյան, Երկեր, Դ, էջ 113, 114։

³¹ Նույն տեղում, էջ 114։

³² Մանուկ Աբեղյան, Երկեր, Դ, էջ 113։

³³ Գր. Հակոբյան, Ներսես Օմորհայի, Ե., 1964, էջ 172։

³⁴ Վ. Հ. Սաֆարյան, Կիլիկյան Հայաստանի գրականությունը, ԺԱ դ. վերջ - ԺԳ դ. սկիզբ, Երևան, 1990, էջ 154։

³⁵ Ա. Մադոյան, Միջնադարյան հայկական պոեմը, էջ 231-232։

³⁶ Հրանտ Թափրազյան, Հայ քննադատությունը, Բ Գիրք, Ե., 1985, էջ 303։

³⁷ Ա. Մադոյան, Օշվ. աշխ., էջ 230։

Քալիցն սկիզբ է դրել «և՛ պատմական անձի կենսագրությանը, և՛ ինչ-որ չափով՝ մասնաճյուղի ղեկավարին»³⁸:

Արդարացի չէ մասնաճյուղի ղեկավարությունը, թե «Ծնորձալիցն Վիպասանության մեջ քիչ է օգտվում գեղարվեստական միջոցների գիմնոցից»³⁹: Նախ՝ վիպասանությունը ուսուցողական պոեմ է, չափածո պատմագրություն, իսկ ուսուցողական բանաստեղծությունը սովորաբար առանձնանում է դատողականությամբ և ասելաձևի ճշտությամբ, և իսկապես, «Բանաստեղծի ամեն խոսքը դաստիարակչական միտումով է լիցքավորված»⁴⁰: Սա արժանիք է և ոչ թե թերություն: Թերությունների մասին դատողությունները, ինչպես տեսնում ենք, հերքվում են մորազույց ուսումնասիրողների և, ամենից ավելի համոզիչ՝ Հրանտ Թամրազյանի կողմից: Երիտասարդ Ծնորձալիցն որքան էլ անփորձ գրական վարպետության առումով, ժամանակի ոգու ընկալմամբ բարձրանում էր իր ժամանակակիցներից: Նրան է պատկանում պատմաքաղաքական պոեմի սկզբնավորման պատիվը, և Վիպասանությունն իրականում հերոսապատում է՝ հայրենասիրական իր տաք ու անմիջական լիցքերով մշտված: Այն, ինչ թերություն են համարել առանձին ուսումնասիրողներ, ըստ էության ելակետ են ունեցել իր տաղանդի հասունության տարիներից Ծնորձալու լավագույն երկերի հարաբերությամբ, մինչդեռ քիչ չեն ստեղծագործական այն ընդհանրությունները, որոնք արդեն իրենց մախնական արտահայտությունն են գտել Վիպասանության մեջ: Հենց այն, որ Ներսես Ծնորձալիցն մախնասիրել է ութ վանկանի տողը, կենսագրական անդրադարձը քնարական տրամադրությամբ, լավատեսությունը գալիքի մկատմամբ և այլն: Պատկերավոր մտածողության քիչ օրինակներ չէ, որ կան Վիպասանության մեջ: Պարզապես Վիպասանության այս առանձնահատկությունը հատուկ քննության չի առնվել: Ահա, օրինակ, Գրիգոր Վկայասերի մահվան մասին Ծնորձալու ստեղծած բանաստեղծական պատկերը, որն իր գեղեցկությամբ հանդերձ՝ տոգորված է միջնադարյան աշխարհայեցողության պարզ բանաձևով:

Պատկերն՝ յերկրի զմիսն թողեալ,
Առ սկզբնատիպն ինքեան փոխեալ,
Չգանձն տողին ի մեճ բարձեալ,
Խեցին անօթ՝ ունայն մնացեալ:⁴¹

Հումբական վիպասանությունը ենթադրում է պատմողական տարրերի մախնապատվություն: Եթե «Չափածո, ոտանավոր խոսքը ավելի ազդեցիկ է, քանի որ գե-

³⁸ Հր. Թամրազյան, Ոջվ. աշխ., էջ 303:

³⁹ Ա. Մաղոյան, Ոջվ. աշխ., էջ 229:

⁴⁰ Նույն տեղում:

⁴¹ Վիպասանություն, էջ 123:

ղեցկացնում է նյութը»⁴², ինչպես գրում է Հրամա Թամրազյանը, ապա միանգամայն իրավացի է նաև Վ. Սաֆարյանը, որ էպիկական մտածողության տարրեր է տեսնում Վիպասանության մեջ, օրինակ՝ Տրդատ Մեծի և Գոթերի արքայի մենամարտի նկարագրության տեսարանում, ուր «Տրդատը այդ շարժում մանրամասների մեջ դառնում է կենդանի կերպար, էպիզմը բարձրացնում է երևույթի ընկալելիության չափը»⁴³, ի տարբերություն միայն մերկ փաստերի թվարկման:

• • •

Ծնորհալու Վիպասանությունն առանձնակի տեղ ունի բանաստեղծի հարուստ և տարաբնույթ ստեղծագործության մեջ: Այդ երկով սկզբնավորվում է գրական մի նոր տեսակ՝ պատմաքաղաքական պոեմը, որը աշխարհիկ բովանդակության միտվածքով և չափածոյի նորությամբ տևական ազդեցություն է թողել միջնադարյան հայ գրականության պատմության մեջ: Նյութը վերցնելով հայոց պատմությունից և իր դարաշրջանի իրականությունից՝ նա ձգտել է արձագանքել հասարակական-քաղաքական այն իդեոլոգիան, որ հուզել են սերունդներին:



⁴² Հր. Թամրազյան, ԾՉՎ. աշխ., էջ 307:

⁴³ Վ. Սաֆարյան, ԾՉՎ. աշխ., էջ 155:

70-ԱՄՅԱԿ

2000 թվականի դեկտեմբերի 5-ին լրացավ «Էջմիածին» ամսագրի երկարամյա աշխատակից Վոլոդյա Աբրահամյանի ծննդյան յոթանասունամյակը:



Մայր Աթոռի աշխատակիցների մեծամասնությունը Վ. Աբրահամյանին ճանաչում է իբրև երկարամյա, բարեխիղճ ու ամբասիր աշխատող: Նրան տեսել են միշտ իր գրասեղանին հակված քնագրեր համեմատելիս, անփութորեն գրված ձեռագիր վերծանելիս, իր գլխից անցած դեպքերը թղթին հանձնելիս կամ խմբագրությանը հանձնված հոդվածների վերջնական տարբերակները սրբագրելիս: Նա սրբագրական մրթություններից քաջատեղյակ մարդ է, ամբասիր քաղաքացի, սկզբունքային ու սրտակից ընկեր, հոգատար հայր ու ամուսին: Աշխատասիրությունը և պարտաճանաչությունը ցավոք այժմ հազվագյուտ դարձած այն հատկանիշներն են, որոնք բարեխիտաբար տակավին բնութագրական են Վ. Աբրահամյան հոբելյարին:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է իր երկարամյա և անզուգական աշխատակցի ծննդյան յոթանասունամյակը, մաղթում նրան երկար տարիների առողջ կյանք ու համագործակցություն:

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Դեկտեմբերի 2-ին, շաբաթ.- *Soln Սրբոց Առաքելոցն ևւ ատաքին լուսուտոյացն մնորոց Թաղէտսի ևւ Բարդուղիմէտսի:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Մեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մակար վրդ. Հովհաննիսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պարշաճի քարոզ խոսեց:

Դեկտեմբերի 3-ին, կիրակի.- *Բ. կիրակի Յիսնակաց:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Մեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մարկոս արքեղա Հովհաննիսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պարշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Դեկտեմբերի 7-ին, հինգշաբթի.- *Սրբոց հարցն եգիպտացոց՝ Պօղոսի, Պօղայ, Մակարայ, Եւսզրի, Յովհաննու Գրնեցոյն, Յովհաննու Կարճահասակին, Նեղոսի, Արսէնի, Միսիանու, Դանիէլի, Մրտապիտի, Մակարիոսի, Պիմէնի և այլոց սրբոց հարցն:*

Այսօր, կեսօրին, Մայր Տաճարում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, կատարվեց եղեռնանգստյան արարողություն՝ ի հիշատակ 1988 թ. աղետալի երկրաշարժի հազարավոր զոհերի:

Դեկտեմբերի 10-ին, կիրակի.- *Գ. կիրակի Յիսնակաց:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Մեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արշեն արքեղա Սաեռայանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պարշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Դեկտեմբերի 17-ին, կիրակի.- *Դ. կիրակի Յիսնակաց:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Մեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գրիգոր արքեղա Խաչատրյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պարշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Դեկտեմբերի 24-ին, կիրակի.- Ե. կիրակի Յիսուսիսց:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արիստակես արքեպ Ավագյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պաղտանի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Դեկտեմբերի 25-ին, երկուշաբթի.- Սյուրյե Սրեփանևոսի նախապկային և առաջին մարտիրոսին:

Այսօր Մայր Տաճարում, Ս. Հովհաննու Կարապետի Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը: Հրեթաց Ս. Պատարագի, Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանի ձեռամբ, կատարվեց Գևորգյան Հոգևոր Ճեմարանի ավարտական լսարանի 14 սաների և Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի 2 սաների սարկավագական ձեռնադրությունը: Ձեռնադրության ավարտին պատարագիչ Սրբազան Հայրը «Էրանի՛ նրանց, որ հալածվում են արդարության համար, որովհետև նրանցն է նրկնքի արքարությունը» բնաբանով քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Դեկտեմբերի 31-ին, կիրակի.- Զ. կիրակի Յիսուսիսց: Բ. օր Ծննդեան պահոց:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Նորվան եպիսկոպոս Զաքարյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պաղտանի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

ՀԱՆԳԻՍՏ

Տ. ՄԱՄԲՐԵ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ



Խորը ցավով հայտնում ենք, որ 2000 թ. դեկտեմբերի 30-ի գիշերը իր մեմախցում կյանքից հեռացավ Մամբրե վարդապետ Մարգարյանը:

Հայր Սուրբը ծնվել է 1912 թ. Կեսարիայում: Չորս տարեկան հասակում կորցրել է ծնողներին և բախտի չարագույժ քմահաճույքով ընկել որբանոց (Բեյրութում)՝ իրեն բախտակից հարյուրավոր երեխաների հետ:

Ութ տարեկան հասակում որբանոցի ուսուցչի միջոցով Հայր Սուրբը կարողացավ և գտնել իրենից չորս տարով մեծ եղբորը, որը մեկ այլ որբանոցում էր գտնվում: Տարիներ անց երկու եղբայրները մամակազրական կապ են հաստատում մահ իրենց քրոջ՝ Մարիամի հետ, որը մնացել էր Կեսարիայում՝ մի թուրք ընտանիքի խնամքին:

Չափաֆառ դառնալոց հետո, Հայր Սուրբը լքում է մանկատունը, տուն վարձում Բեյրութում, հյուսնություն անում՝ ապահովելու համար իր ապրուստը և օգնելու եղբոր մորաստեղծ ընտանիքին:

1932 թ. Հայր Սուրբը որոշում է նվիրվել հոգևոր կյանքին: Նա սովորում է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանում, ավարտում այն և ամսնացորդ նվիրում ծառայում միաբանությանը՝ զբաղեցնելով տարբեր պաշտոններ:

1956 թ. օգոստոսի 12-ին Նազար Մարգարյանը ձեռնադրվում է կուսակրոն քահանա և վերանվանվում Մամբրե վարդապետ: Այդ օրը մահ համարում է իր ծննդյան օրը:

1968 թ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի հրավերով գալիս է Ս. Էջմիածին և անցնում ծառայության միաբանությունում, որպես փոխլուսարարապետ:

Մինչև իր կյանքի վերջը, որպես միաբանության ամխոց մշակ, Հայր Սուրբը ծառայում է միաբանությանը՝ իր անձնական կենսակերպով օրինակ ծառայելով կրտսեր եղբայրներին, սիրով փոխանցելով նրանց իր իմացածը, սովորածը, հայրական վերաբերմունք ցուցաբերելով թե՛ կրտսեր հոգևորականներին, թե՛ ծանոթ ու անծանոթ աշխարհիկ մարդկանց:

Մ. ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ

• • •

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը, Մայր Աթոռիս միաբանությունն ու պաշտոնությունը իրենց խոր վշտակցությունն են հայտնում Հոգեշնորհ Հայր Սուրբի հարազատներին և անձամերտյալ աղոթքով հայցում Աստծո ողորմածությունը՝ Տ. Մամբրե վարդապետ Մարգարյանի անմահ հոգին Երկնային Արքայության լուսեղեն խորաններում հանգչեցնելու համար:

ՑԱՆԿ

«ԷԶՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐՈՒՄ 2000 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՅՑՔՈՒՄ ՏՊԱԳՐՎԱԾ ՆՅՈՒԹԵՐԻ

Ա. ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ՎԵՆԱՓԱՌ ՆԱՅՐԱՊԵՏԻ անդրանիկ կոնդակը, Բ 3:

ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը փիար Լայնը Կոլսթրենին «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրելու մասին, Բ 27:

ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը փիար Անդրանիկ Սարյանին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու մասին, Բ 29:

ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը փեր Ե փիկին Էրվլըր և Պարալըրա Փիթըրզենրին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին, Բ 31:

ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Խաչատուր Թալրոզյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին, Բ 33:

ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը փիար Գեորգ Դաքեսյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին, Գ 20:

ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը «Ապագայ» շաբաթաթերթի խմբագիր Արսեն-Նուպար Մամուրյանին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու մասին, Ե 28:

ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Գերաշնորհ Տ. Նուսիկ արքեպիսկոպոս Սանթրոպյանին՝ քահանայական գործունեության 40-ամյակի առթիվ «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրելու մասին, Ե 28:

ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը փիար Միխայիլ Պիտրոմիսկուն «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու մասին, Ե 30:

ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը փիար Վրադիմիր Թախովսկին «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրելու մասին, Ե 32:

ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ՎԵՆՎՓԱՌ ՆԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը փխար Նրաչ Նորիկյանին «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրելու մասին, Թ 51:

ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Արժանապատիվ Տ. Գառնիկ ավագ քահանա Նալաջյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին, Ժ 26:

ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Արմեն Զիգարխանյանին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու մասին, Ժ 28:

ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Սանդրո Բևիրուդյանին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու մասին, Ժ 30:

ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Արա Աբրահամյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին, ԺԱ 31:

ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Թորոս Թորանյանին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու մասին, ԺԱ 33:

ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ՎԵՆՎՓԱՌ ՆԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Գերաշնորհ Տ. Նուրհան Էպիսկոպոս Մանուկյանին արքայության պատիվ շնորհելու մասին, ԺԲ 3:

ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Սոս Սարգսյանին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու մասին, ԺԲ 5:

ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Սևանի Վազգենյան Նոգևոր Դպրանոցին՝ փաստամյա հորեղյանի առիթով, ԺԲ 7:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի փարենուրի պատգամը հայ ժողովրդին՝ հեռարձակված Հայաստանի Հանրապետության ազգային հեռուստատեսությամբ, Ա 3:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը՝ ասված Մայր Տաճարում Նոր փարվա առիթով, կեսգիշերից հետո, Ա 6:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը՝ ասված Մայր Աթոռի սեղանատանը, Ա 8:

Նոր փարվա և Սուրբ Ծննդյան փոռների առթիվ Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և քրիստոնյա Եկեղեցիների պետերի, Հայ Եկեղեցու նվիրապետական Աթոռների, պետական պաշտոնական անձանց միջև փոխանակված ռաջույնի և բարեմաղթանքների նամակներ, բացիկներ ու հեռագրեր, Ա 14:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսի խոսքը՝ ասված Մայր Տաճարում, Երուսաղեմ մեկնելուց առաջ, Ա 27:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսի խոսքը՝ ասված Մայր Տաճարում, Երուսաղեմից վերադարձի առիթով, Ա 73:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսի խոսքը՝ ասված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Զորավար Անդրանիկի անյունի առջև, Բ 10:

1999 թ. նոյեմբեր - 2000 թ. փետրվար ամիսների ընթացքում Վեհափառ հայրապետի այցելած բարձրաստիճան անձինք և պարզվողակությունների ժամանակացույց, Բ 21:

1999 թ. նոյեմբեր - 2000 թ. փետրվար ամիսների ընթացքում Վեհափառ հայրապետի այցելությունների ժամանակացույց, Բ 23:

1999 թ. հեկտեմբեր - 2000 թ. փետրվար ամիսների ընթացքում ազգային-եկեղեցական այլ և այլ նշանակալի իրադարձությունների ժամանակացույց: Նաև՝ նոր նշանակումներ և փոփոխություններ Մայր Աթոռում, Բ 24:

Ամենայն հայոց գարեգին Բ Կաթողիկոսի Օրհնության գիրը Արժանապատիվ Տ. Բաբգեն ավագ քահանա Մազաուրյանին՝ ծննդյան 90 և քահանայագործության 50-ամյակի առթիվ, Բ 35:

Ամենայն հայոց գարեգին Բ Կաթողիկոսի Օրհնության և գնահատանքի գիրը փար Փայլակ Ահարոնյանին՝ ազգային-հասարակական գործունեության 50-ամյակի առթիվ, Բ 37:

Ամենայն հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի Օրհնության գիրը Գերաշնորհ Տ. Գնել արքեպիսկոպոս Ճերեճյանին՝ քահանայական ծնունդության 63-ամյակի առթիվ, Գ 22:

Ամենայն հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի Օրհնության գիրը Ամերիկայի հայոց Արևելյան թեմի պարգամավորական ժողովին, Գ 24:

Ամենայն հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի Օրհնության գիրը Ամերիկայի հայոց Արևելյան թեմի հոգևորականաց համագումարին, Գ 26:

Ամենայն հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի Օրհնության գիրը Ամերիկայի հայոց Արևմտյան թեմի պարգամավորական ժողովին, Գ 28:

Ամենայն հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի Օրհնության գիրը Ամերիկայի հայոց Արևմտյան թեմի հոգևորականաց համագումարին, Գ 30:

Եկեղեցու և պետության միջև ստորագրվեց «Մրադրությունների հուշագիր», Գ 32:

Ամենայն հայոց Կաթողիկոսի հետագիրը ԼՂՀ նախագահ Արկադի Դուկասյանին՝ նրա դեմ կատարված մահափորձի առթիվ, Գ 35:

Նովնան արքեպս. Տերտերյանը՝ 1700-ամյակի եկեղեցական հանձնա-
ժողովի վարիչ-քարտուղար, Գ 37:

Կարգալույծ է արված Տ. Տաթև քին. Աբրահամյանը, Գ 38:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի պապագամր Սուրբ
Հարության փոնի առիթով, Դ 3:

Փրկչի Հրաշափառ և Սուրբ Հարության փոնի առթիվ Ամենայն Հայոց
Կաթողիկոս, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Հայրապետի և քույր Եկեղեցի-
ների, Հայ Եկեղեցու եպիսկոպոսական Աթոռների պետերի, պետա-
կան պաշտոնական անձանց միջև փոխանակված ողջույնի և բարե-
մաղթանքների նամակներն ու հեռագրերը, Դ 8:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Մեծ
եղեռնի առիթով, Դ 10:

Աշխարհի Եկեղեցիները պիտի նշեն «Հայ ժողովրդի նահապետության
և հարության օր»-ը (Ամենայն Հայոց Կաթողիկոսության և Մեծի
Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսության համապետեղ հաղորդագրությունը՝
Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի որոշմամբ Ապրիլի 24-ին
հաջորդող կիրակին իր անդամ 375 եկեղեցիներում Ս. Պատարագի
ընթացքում հայ ժողովրդի նահապետության ու հարության հափուկ
հիշատակություն կատարելու մասին), Դ 13:

Վեհափառ Հայրապետի խոսքը Խրիմյան Հայրիկի շիրիմի առջև, Դ 14:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի խոսքը՝ արտասան-
ված Ղ Գիությունների Ազգային Ակադեմիայում հրավիրված
«21-րդ դարը՝ առանց ցեղասպանությունների» գիտաժողովում,
Դ 16:

Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի Օրհնության և գնահատան-
քի գիրը Սան Պաուլոյի հայոց Ազգային ներկայացուցչական մարմ-
նի և Ազգային կենտրոնական վարչության նորընտիր անդամներին,
Դ 18:

Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի Օրհնության և գնահատան-
քի գիրը Գերաշնորհ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիրոսյանին՝ քա-
հանայական գործունեության 40-ամյակի առթիվ, Դ 20:

Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի Օրհնության և գնահա-
տանքի գիրը Լոնդոնի Գեորգ Թախթայան կիրակնօրյա վարժարա-
նին, Դ 22:

Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի Օրհնության և գնահատան-
քի գիրը ՀԲԸՄ Ալեք Մանուկյան Արմեն-Ջեպեք ամենօրյա վարժա-
րանին, Դ 24:

Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի Օրհնության և գնահատան-
քի գիրը Գերաշնորհ Տ. Նովնան արքեպիսկոպոս Տերտերյանին՝

Կանադայի հայոց թեմի թեմակալ առաջնորդ վերընկրվելու առիթով, Ե 22:

Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի Օրհնության և գնահատանքի գիրը Գերաշնորհ Տ. Ավագ արքեպիսկոպոս Ասատուրյանին՝ Իրաքի հայոց թեմի թեմակալ առաջնորդ վերընկրվելու առիթով, Ե 24:

Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի Օրհնության և գնահատանքի գիրը Գերաշնորհ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Կիզիբյանին՝ երկարամյա հոգևոր ծառայությունից հանգստի անցնելու կապակցությամբ, Ե 26:

Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի Օրհնության գիրը Ավստրալիայի հայոց թեմական պատրգամավորական ժողովին, Ե 30:

Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի Օրհնության և գնահատանքի գիրը Մոնրեալի (Կանադա) «Ապագայ» շաբաթաթերթի խմբագրությանը, Ե 32:

Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի Օրհնության և գնահատանքի գիրը Արամ Գալուստյանին՝ երկարամյա ազգանպաստ գործունեության համար, Ե 34:

Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի Օրհնության և գնահատանքի գիրը Վաչե Սեմերճյանին՝ լրագրողական ու հասարակական գործունեության 40-ամյակի առիթով, Ե 36:

Վեհափառ Հայրապետի շնորհավորական ուղերձը Հաղթանակի օրվա առիթով, Ե 38:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում Զորավար Դրաստամատ Կոնյայանի հոգեհանգստի արարողության ժամանակ, Ե 39:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը Հայաստանի բոլոր շրջանավարտներին, Ե 41:

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական նամակը Հայաստանի նորանշանակ վարչապետ Անդրանիկ Մարգարյանին, Ե 46:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի խոսքը երջանկահիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի վախճանման տարելիցի առիթով, Զ 3:

Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի Օրհնության և գնահատանքի գիրը Վահրիճ Ճերեճյանին՝ «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու առիթով, Զ 6:

Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի Օրհնության և գնահատանքի գիրք Սարգիս Տեր-Սարգիսյանին՝ «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրելու առիթով, Զ 8:

Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի Օրհնության և գնահատանքի գիրք Անդրանիկ Զեյնիյանին՝ «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրելու առիթով, Զ 10:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցական հեռագիր է հղել Սիրիայի Նախագահ Հաֆեզ Ասադի մահվան կապակցությամբ, Զ 22:

Կաթողիկոսության շքանշանների և Հայրապետական Օրհնության ու գնահատանքի գրքերի տպգործություն ազգային-եկեղեցական մի շարք գործիչների, Է 34:

Նշանակվել են նոր փոստիչներ Գևորգյան Հոգևոր Ճեմարանում և Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում (Տ. Եղիշե ավագ քահանա Սարգսյան և Տ. Բագրատ աբեղա Գալստյան), Ը 5:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը՝ Հալլեում Կիլիկյան հայոց մշակույթին նվիրված ցուցահանդեսի բացման առիթով, Թ 38:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը՝ Հալլեում գումարված «Հայաստան - 2000» միջազգային գիտաժողովի բացման առիթով, Թ 41:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը դպրոցականներին՝ նոր ուսումնական տարվա առիթով, Թ 43:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Անկախության օրվա առիթով, Թ 48:

Կաթողիկոսական շնորհաբաշխություններ, Թ 53:

Միացյալ հաղորդագրություն Հովհաննես-Պողոս Բ Պապի և Գարեգին Բ Կաթողիկոսի, ԺԱ 10:

Համալրել հայտարարություն և ուղերձ՝ ընդունված Նորին Սուրբ Օծություն, Ղալբի Եկեղեցու Պատրիարք Շնուդա Գ-ի և Նորին Սուրբ Օծություն, Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի կողմից, Ժ 15:

Վեհեփառ Հայրապետի Օրհնության և գնահատանքի գիրք Գերաշնորհ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտրեյանին՝ քահանայական գործունեության քսան և Կանադայի հայոց թեմի առաջնորդության փաստաթղթերի առիթով, Ժ 32:

Հայրապետական պարգևաբաշխություններ, Ժ 34:

